
ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(80-րդ տարի) Թիվ-10 (1716) Հոկտեմբեր 2026

Բովանդակություն



«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Կարմիր գծերի հատումն ու պատմական օրինաչափությունը (էջ 1-2)

2 - Քաղաքական

Անի Մելքոնյան
Հայաստանի իշխող վարչակարգի «խաղաղության» քաղաքականության իրական դեմքը (էջ 3-5)

3 - Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Բացարձակ վերահսկողություն, թե՞ սոցիալական ական. Ադրբեջանում «հիջաբի սկանդալի» քաղաքական ու աշխարհաքաղաքական ծալքերը (էջ 6-8)

4 - Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
«Մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքի փորձությունը.Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների նոր ճգնաժամը (էջ 9-11)

5 - Բնապահպանություն

Արեգ Ղարաբեգյան
Երևանի երթևեկության մղձավանջը (էջ 12-16)

6 - Գաղափարական

Արամ Շահնազարյան
Արարատն ու կեղծ երկընտրանքը. պետականությո՞ւն, թե՞ պատմական հիշողություն (էջ 17-23)

7 - Պատմության լուսարձակ

Տարոն Վլադիկի Հակոբյան
Միացումից անկախացում: Միջնորդական նախաձեռնությունները: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության դիրքորոշումները և արմատական փոփոխությունները ԼՂՀ իշխանական համակարգում (1993 թ. ապրիլ – հունիս ամիսներին) (էջ 24-27)

8 - Հայ կյանք

Արտավազդ Նազարյան
Տոն սրբոց թարգմանչաց (էջ 28-31)

9 - Հայ կյանք

Կարէն Խանլարեան
Ընկերվարութիւնը համայնավարութիւն չէ (էջ 32-33)

10 - Հասարակություն

Անժելա Հարությունյան
Գիտելիք և կարողունակություն PISA (էջ 34-37)

11 - Ընթերցումներ

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Ինքնութեան եւ իրաւութեան արուեստը... Լեւոն Թուխիկեանի ծննդեան 95-ամեակի առթիվ (էջ 38-42)

12 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Եկողներն ու չեկողները (էջ 43-44)

Կարմիր գծերի հատումն ու պատմական օրինաչափությունը

2026 թ. գարնանն ու ամռանը տեղի ունեցած նախընտրական և հետընտրական գործընթացները փաստեցին, որ Նիկոլ Փաշինյանը չի պատրաստվում օրինական ընտրությունների ճանապարհով երբևէ իշխանությունը զիջել այլ քաղաքական ուժերի: Հոկտեմբերի 25-ին մի շարք համայնքներում տեղի ունեցած համայնքային ընտրությունները մեկ անգամ ևս հաստատում են այս համոզումը: Փաշինյանը, ինչպես կենտրոնական իշխանության դեպքում, նույնպես և տեղական որևէ համայնքում ընդդիմության հաղթելու հավանականությունն հանրության գիտակցությունից վանելու համար, պատրաստ է 1) մշտական վախի մեջ պահել հասարակությանը, 2) դիմել ցանկացած անօրինականության, 3) երկրի վարչական, ուժային, և այլ ազդեցիկ համակարգերն ամբողջովին ծառայեցնել իր նպատակին, 4) զանգվածորեն վարկաբեկել, հետապնդել ու կալանավորել ընդդիմադիր ազդեցիկ գործիչներին, 5) արտաքին շահագրգիռ ուժերի հետ Հայաստանի հաշվին գնալ քաղաքական գործարքների՝ վերջիններիս գործնական աջակցությունը ստանալու համար և այլն:

Համապետական ընտրություններից հետո Փաշինյանը խորհրդարանում հապշտապ կերպով օրենք անցկացրեց, որի միջոցով, հատկապես Ռուսաստանում, արտագնա աշխատանքով ընտանիքների հանապազօրյա հացը վաստակող տասնյակ հազարավոր հայաստանցիների զրկեց ընտրություններին մասնակցելու հնարավորությունից, խորհրդարանական մանդատները խլելուց հետո շինծու մեղադրանքով կալանավորեց ընդդիմադիր երրորդ ուժի ղեկավար Գագիկ Ծառուկյանին, որից հետո արդեն չորրորդ անգամ կալանավորեց խորհրդարանական երկրորդ ուժի ղեկավար Ռոբերտ Քոչարյանին և, հավանաբար որպեսզի ճնշումն իր նպատակին հասնի, այս անգամ կալանավորեց նաև երկրորդ նախագահի ավագ որդուն: Խորհրդարանական ընտրությունների շրջանում ձեռնարկած ապօրինությունները կրկնվեցին նաև հոկտեմբերի 25-ի համայնքային ընտրություններում: Չերքեզականությունները շարունակվեցին ընդհուպ մինչև ընտրությունների օրը, թիրախ ընտրելով համայնքապետի, ինչպես և ավագանու մոտ երկու տասնյակ թեկնածուների: Փաշինյանը որքան ավելի խոցելի է դառնում իր քաղաքական գործունեության ձախողման և փակուղում խճճվելու առումով, այնքան դառնում է դյուրագրգիռ քննադատության հանդեպ և ավելացնում է հետապնդումներն ու քաղաքական բանտարկյալների թիվը:

Բոլոր թվարկած քայլերն ու գործողությունները վկայում են այն մասին, որ Փաշինյանի քաղաքական կացությունը նմանվել է թակարդում հայտնված այն կենդանու վիճակին, որը որքան ավելի ջղաձիգ ջանքեր է գործադրում ստեղծված իրավիճակից դուրս պրծնելու համար, այնքան ավելի է խճճվում թակարդում:



Վերջերս Փաշինյանը հայտարարեց, թե սահմանադրական հանրաքվեի անցկացմանը եթե ընդդիմությունը չմիանա, ինքը կարող է նոր ընտրություններ անցկացնել: Ինչ է սա, սպառնալիք խորհրդարանական ուժերին, շանտաժ՝ ուղղված միանգամից և՛ ընդդիմությանը, և՛ ժողովրդին, և՛ Նիկոլի կոկորդին չոքած արտաքին ուժերին: Մեկ բան ակնհայտ է՝ այսօր գլխավոր պահանջատերը, որի ճնշումից Հայաստանի վայ ղեկավարը չի կարողանում խուսանավել Ադրբեջանն է՝ Թուրքիայի աջակցությամբ: Սրան հակառակ ընտրություններից առավել թուլացած Փաշինյանի մոտ մեծացել է վախը ժողովրդական ընդվզումից, իսկ մյուս կողմից՝ նա գտնվում է երկու քարի արանքում, որոնցից մեկը ազգային շահերը պաշտպանելու մարտահրավերն է ՝ մյուսը՝ ազգային շահերի հաշվին սեփական մորթը փրկելու ցանկությունը:

Նիկոլն իր թիմի հետ լծված է սոցիալ-տնտեսական և անլուծելի այլ բարդությունների հեռանկարի շեմին հասարակության գլխի տակ փափուկ բարձ դնելու գործով, շատ լավ հասկանալով, որ ողջ կեղծիքը մոտակա ժամանակներում հօդս է ցնդելու օճառի պղպջակի պես: Միաժամանակ նա փորձում է երկրաբաձգել Ադրբեջանին ու Թուրքիային, Ռուսաստանին ու Եվրոպային, ԱՄՆ-ին ու Իրանին տրված իր հավաստիացումների իրականացումը՝ վերջիններիս շահերի հետ հաշվի նստելու, իսկ որոշների առջև էլ պարտավորությունները կատարելու հարցերում:

Ընդ որում, ընտրական գործընթացներում ամեն տեսակի անօրինականություն գործած Փաշինյանը հույս ուներ, թե Եվրոպան իրեն թիկունք կլինի և՛ Ռուսաստանի հետ հարաբերությունների, և՛ նոր

շուկաների տրամադրման, և՛ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման, և՛ սոցիալական անկանխատեսելի հեռանկարի շեմին նյութական շոշափելի աջակցության, և՛ ծառացած մյուս բարդ խնդիրներում: Այնինչ եվրոպական մեծ-մեծ խոստումները մնացին խոստումների մակարդակում, թեև պետք է ընդունել, որ այսօրվա համաեվրոպական նոմենկլատուրային վերնախավն ինքը նախանձելի վիճակում չէ և գալիք տարում զբաղված է լինելու սեփական քաղաքական ինքնապահպանման հոգսը հոգալով: Այս մարդիկ փաստացի Ուկրաինայի կողմից դարձան պատերազմի մասնակից և այսօր կանգնած են սեփական պարտությունն ընդունելու խայտառակության առջև, երբ նրանց համար անգամ տեղ չի նախատեսվել բանակցությունների սեղանի մոտ: Եվրոպայի իրական տերերը զզվել են իրենց խորացող հոգսերի հաշվին Ուկրաինայի հոգսերը հոգալու ղեկավարությունների ձախող քաղաքականությունից, իսկ ավելի եռանդուն ու ըմբոստ շերտերը փոթորկել են հրապարակները՝ լրջորեն ցնցելով վերևում նստածների աթոռները: 2027 թվականին անխուսափելի է թվում եվրոպական քաղաքական էլիտայի դիմապատկերի լուրջ փոփոխությունը, ինչը կարող է որբության մատնել Զելենսկու և Փաշինյանի նման լիբերալ գլոբալիզմի հորձանքին հանձնված բախտախնդիրներին:

Փաշինյանի վերը նկարագրված քայլերը փաստում են, որ անլույս թունելում հայտնված ղեկավարը խախտելով օրինականության և մնացած բոլոր կարմիր գծերը գնում է վա բանկ՝ թերևս համոզված լինելով, որ ութամյա անփառունակ գործունեության համար արդեն իսկ իրեն սպառնում է երկրի քրեական օրենսգրքով սահմանված ամենաբարձր պատժաչափը: Ամեն գնով երկրի բոլոր լծակները ձեռքում պահելու ճիգը, պոտենցիալ բոլոր մրցակիցներին չեզոքացնելու քայլերը, հենց այս տագնապալի հեռանկարի հետևանքն են: Հասկանալով, որ իր աթոռի ամենափոքր տատանման դեպքում անսկզբունք ու անհայրենիք թիմը ցրիվ է գալու, նա շարունակում է, երբեմն և գաղտնի հրամաններով, հսկայական պարգևատրում-կաշառքներ բաժանել պետական նոմենկլատուրային: Որքան էլ որ վարչական լծակների, բազմազան զեղծարարությունների ու ակնհայտ օրինախախտումների ճանապարհով Փաշինյանին հաջողվում է տպավորություն ստեղծել, թե վայելում է ժողովրդի մեծամասնության համակրանքը, հանրային պարզ շփումների ընթացքում զգում է այն կուտակված ատելության էներգիան, որը յուրաքանչյուր պահի և ամենաանսպասելի ձևով կարող է պայթել և լավայի պես հրապարակները հեղեղել շիկացած զանգվածներով: Մարդը, ով միայնակ դուրս եկավ հեղափոխություն անելու և նրա վճռականությունը ձնագնդի պես իր մեջ ներառեց երկրում կուտակված դժգոհության էներգիան, ի տարբերություն ընդդիմության, շատ լավ է հասկանում, որ հեղաշրջում անելու համար չպետք է սպասել, թե երկրի 3 մլն քաղաքացիները երբ դուրս կգան փողոց: Որպես օրինակ հիշենք ինչպես, այսպես կոչված, Նիկոլի թավշյա հեղափոխության պիկին Հանրապետության հրապարակում հավաքված մարդկանց թիվը ներկայացվեց 150.000: 2026 թվականին Նիկոլի նախընտրական վերջին հանրահավաքում նույն վայրում նույն չափով խմբված մարդկանց թիվը պաշտոնապես ներկայացվեց 30-40.000:

1988-1990 թվականներին Ազատության հրապարակը տեղավորում էր 15-20.000 մարդու, իսկ երբ կրիտիկական օրերին հեղեղվում էին շրջակա փողոցներն ու Կարապի լճի ափերը, այդ թիվը չէր գերազանցում 40-50.000-ը: Կարելի է ավելորդ համարել այս մանրամասների մեջ խորանալը, սակայն դրանք ներկայացվում են փաստելու համար, որ համաժողովրդական զանգվածային միջոցառումների դեպքում մինչև հանրության 3-5 տոկոսն ընդգրկող կրիտիկական զանգվածի գումարվելը, նշանակում է, որ այն լծակի պես ունակ է ապահովելու հսկայական զանգվածների մտավոր ու ֆիզիկական ակտիվացումը: Նորանկախ Հայաստանի պատմության մեջ այդ կրիտիկական զանգվածից կարողացել են օգտվել այս երկրի երկու մեծ ամբոխավարները՝ Լևոն Տեր-Պետրոսյանն ու Նիկոլ Փաշինյանը: Եվ այս փորձն իր մաշկի վրա զգացած Փաշինյանը հասկանում է, որ երբ հեղափոխական իրավիճակը հասունանում է, միշտ էլ կգտնվեն այն գլխավորող պրակտիկ ու վճռական մարդիկ: Հասկանում է նաև, որ երբ հասարակությունը պատրաստ է, ժողովրդական հրաբուխը կարող է ժայթքել ամենաանսպասելի ժամանակ: Օրինակ, 2017 թվականի խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիրը» «Ելք» դաշինքի կազմում, ոչ առանց աջակցության, հավաքել է համեստ 7,78% ձայն, առաջատար «Հանրապետական» կուսակցության 49.08%-ի դիմաց: Այնինչ, մեկ տարի անց այս իրավիճակը պետք է գլխիվայր շուռ գար և շարունակվեր ցայսօր:

Նիկոլ Փաշինյանն իր խայտառակ կառավարման ընթացքում, ոչ վարչական և ոչ էլ քաղաքական առումով չհասունացավ երկիր ղեկավարողի մակարդակի, բայց նա վերածվեց մի քաղաքական կենդանու, որը բնազդով ու հոտառությամբ զգում է մթնոլորտի փոփոխությունը, կրունկները խուտուտ տվող ալեկոծության հասունացումը: Այդ պատճառով էլ նա այսօր վերածվել է հանուն անձնական ինքնապահպանության ամեն ինչ զոհաբերելու պատրաստ դաժան և անսանձ բռնապետի և անում է այն՝ ինչի ականատեսն ենք: Բոլորից լավ նա գիտի իր առջև ծառացած անլուծելի խնդիրները, և ինչպես, բոլոր իր նմաններն իրենից առաջ, փորձում է շրջանցել պատմական օրինաչափությունը, հույս տածելով, թե իր պարագայում այդ օրինաչափությունը չի գործի: ■

Հայաստանի իշխող վարչակարգի «խաղաղության» քաղաքականության իրական դեմքը

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հոկտեմբերի 13-ը Կարսի ապօրինի պայմանագրի կնքման օրն է: Այս պայմանագիրը հայ ժողովրդի ազգային-քաղաքական շահերի ոտնահարումն էր:

Երկար չանդրադառնալով այդ պայմանագրի հայավնաս կետերին, որոնց մասին բազմիցս խոսել ենք, ասենք միայն, որ այն Մոսկվայի ապօրինի պայմանագրի կրկնօրինակը լինելով՝ բոլշևիկների «խաղաղության» օրակարգի ողբերգական հետևանքն էր:

Ինչպես գիտենք պատմությունից, Հայաստանի անկախությունից հետո երկրի քաղաքական կյանքում հայ բոլշևիկներն ունեցան ողբերգական դեր՝ իրենց դավաճանական քաղաքականությունը քողարկելով «խաղաղության» և «ժողովուրդների բարեկամության» քողի տակ: Հետևանքը եղավ 1920 թ. հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտությունը և Կարսի անկումը, որի մեջ իրենց վճռորոշ դերն ունեցան հայ բոլշևիկները. այս մասին է վկայում նաև նրանց հղված «Հույժ գաղտնի» վերնագրված հեռագիրը, որն այսօր պահվում է Հայաստանի ազգային արխիվում: Այդ հեռագրում կարդում ենք. «Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի Գարնիզոն մեկնող բոլշևիկներին անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում…., ինչպես նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝ Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:

Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազատության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի):

Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգի հեղափոխության հաղթանակն Անդրկովկասում, ապա նաև՝ Արևելքի խորհրդայնացմանը:

Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պետք է. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, դրանք են.

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին:



բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք:

գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին՝ ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից: Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով՝ Հայաստանն ընդմիշտ կկապվի Ռուսաստանի հետ, ընդմիշտ վերջ կտրվի պատերազմին և սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործի: Ծանոթություն - Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել: Հայաստանի կոմ. կուս. կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս. Կասյան, Ա. Մհավյան, Ա. Նուրիջանյան, Շ. Ամիրխանյան, Ի. Դով-



Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի կնքումը, 16 (18) մարտի, 1921 թ.

լաթյան, Ա. Հովհաննիսյան Նո. 218, Բաքու, 1920 ՍԵՊ. 20»:[1]

Կարսի գրավումից մոտ մեկ ամիս անց անկում ապրեց նաև Հայաստանի Հանրապետությունը: Իշխանության գլուխ անցած բոլշևիկները 1921 թ. մարտի 16-ի (18-ի) Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով Թուրքիային զիջեցին Հայաստանի Հանրապետության՝ միջազգայնորեն ճանաչված տարածքների մեծ մասը՝ հրաժարվելով նաև Սևրի պայմանագրից:

105 տարի անց, հայաստանյան իրականության մեջ դարձյալ նույն իրավիճակն է, բոլշևիկյան քաղաքականության գաղափարական ժառանգորդ Նիկոլ Փաշինյանը իր դավաճանական ու զիջողական քաղաքականությունը քողարկում է «խաղաղության օրակարգով», որը ամեն օր զգացնել է տալիս իր բացասական հետևանքները:

Այսպես 2020 թ. նոյեմբերի 20-ին Մոսկվայում Փաշինյանի և Ալիևի միջև կնքվեց հրադադարի պայմանագիր, որը, ի թիվս այլ կետերի, սահմանում էր նաև.

«.... 6. Կողմերի միջև համաձայնեցմամբ՝ առաջիկա երեք տարիների ընթացքում սահմանվելու է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապն ապահովող Լաչինի միջանցքով նոր երթուղու կառուցման պլանը՝ այդ երթուղու պահպանության նպատակով ռուսական խաղաղապահ զորակազմի հետագա վերատեղակայմամբ:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով տեղաշարժի անվտանգությունը:

7. Ներքին տեղահանված անձինք և փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո:

8. Իրականացվում է ռազմագերիների, պատանդների և այլ պահվող անձանց, ինչպես նաև զոհվածների մարմինների փոխանակում:

9. Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի միջև համաձայնեցմամբ՝ ապահովվելու է Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունն Ադրբեջանի արևմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների շինարարությունը»:[2]

Ադրբեջանն անցնող վեց տարիների ընթացքում խախտել է հրադադարի պայմանագրի բոլոր կետերը.

Այսպե՛ս, երեք տարվա ընթացքում Լաչինի միջանցքով ՀՀ ու Արցախի միջև կապ ապահովելու փոխարեն՝ Ադրբեջանը երեք տարում ուղղակի հայաթափեց Արցախը: Փախստականների վերադարձի անվան տակ Ադրբեջանը դրեց, այսպես ասած, 300.000 ադրբեջանցիների Հայաստանում բնակության հարցը, մինչդեռ Գետաշենից, Մարտունաշենից, Շահումյանից ու Արծվաշենից, ինչպես նաև 2023 թ. սեպտեմբերի 19-24-ին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված հայերի վերադարձի մասին, որևէ քննարկում Հայաստանի և Ադրբեջանի միջև տեղի չի ունենում:

Ռազմագերիների, և պատանդների փոխանակման անվան տակ Հայաստանը Ադրբեջանին վերադարձրեց Հայաստանում գտնվող բոլոր ադրբեջանցի գերիներին՝ ինչպես նաև մարդասպանության համար Հայաստանում դատապարտված ադրբեջանցի հանցագործներին, մինչդեռ Ադրբեջանում մինչ օրս պահվում են հայ գերիներ ու պատանդներ, այդ թվում՝ 2023 թ. պատանդառված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները:

Տնտեսական և տրանսպորտային կապերի շրջափակման փոխարեն ՀՀ-ն, Սյունիքի միջանցքը հանձնելով, ապահովեց Ադրբեջանի կապը Նախիջևանի հետ, սակայն Ադրբեջանը որևէ ապաշրջափակում չիրականացրեց:

Դրա փոխարեն, այսպես կոչված, «խաղաղության պայմանագիր» կնքելու դիմաց Ադրբեջանը Հայաստանին պարտադրում է փոխել Սահմանադրությունը.

«Ադրբեջանը հրապարակային նախապայման է առաջ քաշել՝ հրաժարվելով ստորագրել խաղաղության պայմանագիրը, քանի դեռ Հայաստանում չի փոխվել Մայր օրենքը: Այս մասին Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նիստում հայտարարեց ՀՀ արտաքին գործերի

և միջազգային առևտրի նախարար Արարատ Միրզոյանը»:[3] Այսինքն՝ անդադար ինքնիշխանությունից ճառող փաշինյանական վարչակազմի կառավարած Հայաստանում Ադրբեջանն է որոշում, թե ինչպիսին պետք է լինի ՀՀ մայր օրենքը: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայաստանի ինքնիշխանության և անկախության թուլացում, որի դիմաց, սակայն, փաշինյանական վարչակազմը չի կարող երաշխավորել, որ Սահմանադրության փոփոխությունից հետո Ադրբեջանը հերթական պահանջ չի դնելու, ասենք. «Էջմիածնի կաթողիկոսության լուծարում», որի առաջին ծիլերն արդեն երևում են՝ նույն Ադրբեջանի պահանջով Հայոց եկեղեցու դեմ Փաշինյանի սկսած հալածանքների տեսքով:

Այն, որ Ադրբեջանն ամենևին էլ մտադիր չէ խաղաղություն հաստատել, վկայում է Հաջիևի հայտարարությունը. «Հայաստանն ու հայ հասարակությունը պետք է ներողություն խնդրեն այն ադրբեջանցիներից, որոնք 30 տարի շարունակ չեն կարողացել վերադառնալ «հայրենի եզերք»:[4]

«Ադրբեջանցիների հայրենի եզերք» ասելով, Հաջիևը նկատի ունի ՀՀ տարածքը՝ Փաշինյանի այդքան տարփողած 29.743 քառ կմ-ը, որի քարտեզը դարձել է Փաշինյանի կրծքազարդը՝ նույնիսկ միջազգային հանդիպումներում: Հայաստանից, իհարկե, ոչ մի պատասխան, գոնե այն մասին, որ Ադրբեջանն ինքը պետք է ներողություն խնդրի հայերից Սումգայիթի, Մարաղայի, Հյուսիսային Արցախի ու Արցախի Հանրապետության ցեղասպանության համար:

Եթե Ադրբեջանը հակված լիներ խաղաղության և նպատակ չունենար ՀՀ-ն ոչնչացնելու, նախ և առաջ ինքը կփոխեր իր Սահմանադրությունը, այնտեղ ամրագրելով, որ որևէ տարածքային պահանջ ՀՀ-ից չունի, և կճանաչեր Փաշինյանի երազած 29.743 քառ կմ-ը, որպես ՀՀ ինքնիշխան տարածք, մինչդեռ, ինչպես հայտնի է, 2022 թ. հոկտեմբերի 6-ին, երբ Պրահայում Փաշինյանը Մակրոնի «քավորությամբ» ճանաչեց Արցախն Ադրբեջանի կազմում, Ալիևը չներկայացավ ու չստորագրեց այդ փաստաթուղթը, որպեսզի չճանաչի Հայաստանի տարածքային ամբողջականությունը ՔՊ-ի քարոզած 29,743 քառ կմ-ի նկատմամբ: Ինչո՞ւ, կարծում ենք պատասխանը պարզ է, իսկ Ադրբեջանի Սահմանադրությամբ այդ երկրի տարածքը շուրջ 116.000 քառ կմ է՝ այսինքն՝ «բուն» Ադրբեջանը, զավթված Արցախն ու ՀՀ-ի ներկայիս տարածքը: Այս մասին իհարկե փաշինյանական վարչակազմը Հայաստանի ժողովրդին ոչինչ չի ասում ու Ադրբեջանի առաջ էլ Սահմանադրությունը փոխելու նախապայման չի դնում: Իսկ Հայաստանի սահմանները լայնորեն բացվել են ադրբեջանցիների համար, որոնք նույնիսկ զինված են մտնում հայերի տներ՝ «2026 թվականի հոկտեմբերի 1-ին, ժամը 14:00-ի սահմաններում, Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի, զինծառայող Նասիմի Մուսաևը, ապօրինի մուտք է գործել Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի 6-րդ փողոցի 20-րդ տուն, հայտնաբերվելուց հետո զենքից արձակել է կրակոցներ»:[5] Կրակոցի հետևանքով վիրավորվել էին մայրն ու անչափահաս որդին, իսկ ՀՀ իշխանությունը առանց որևէ խոսքի ադրբեջանցի զինվորին վերադարձրեց՝ նույնիսկ որևէ հայ գերու հետ չփոխանակելով:

Ահա սա է, «խաղաղասեր» Ադրբեջանի իրական դեմքը՝ խախտել պայմանավորվածությունները և թիրախ դարձնել խաղաղ բնակչությանը՝ ինչպես արել է 1994 թ. մայիսի 12-ի հրադադարի կնքումից ի վեր: 2020 թ. նոյեմբերի 9-ի հրադադարից հետո՝ ցեղասպանություն կատարելով Արցախում, և 2024 թ. օգոստոսի «խաղաղության պայմանագրի» նախաստորագրումից հետո՝ «դիրքը լքած» ադրբեջանցի զինվորին ուղարկելով Սաֆարովի «սխրանքը» կրկնելու, ինչը բարեբախտաբար կանխվեց՝ ժամանակին երեխաներին օգնության հասած ու թշնամու դեմ կռիվ տված հայ մոր շնորհիվ:

Աշխարհն ալեկոծվում է, ոչ միայն ռուս-ուկրաինական օր-օրի ավելի ողբերգական դարձող պատերազմից, Իրան-ԱՄՆ-Իսրայել զինված հակամարտությունից, այլ նաև Եվրոպայով մեկ ծայր առած բողոքի ցույցերից, որոնք մի շարք երկրներում անխուսափելիորեն հանգեցնելու են իշխանափոխության, որն էլ զգալի ազդեցություն է ունենալու համաշխարհային քաղաքական փոփոխությունների վրա (այս մասին առավել մանրամասն կխոսենք հաջորդ համարում)՝ և այս համապատկերում ապազգային ու անատամ իշխանությունը Հայաստանին ուղղակի անխուսափելի աղետալի հետևանքներ է բերում, որոնք դժվար թե՝ այս վարչակազմով, Հայաստանը կարողանա հաղթահարել:

Աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների շեմին, երբ Թուրքիան ու Ադրբեջանը ձեռքերն են շփում Հայաստանում հերթական ցեղասպանությունը կազմակերպելու ու հայերի հարցը վերջնականապես փակելու մոտալուտ հեռանկարից՝ հայ ժողովուրդը կարծես լեթարգիական քնից չի կարողանում արթնանալ և գործի դնել իր ինքնապաշտպանական բնազդը:

Այս իրավիճակում հայ քաղաքական դաշտի ընդդիմադիր ուժերն ուղղակի պարտավոր են իրենց ուսերին վերցնել պետության և ժողովրդի ճակատագրի պատասխանատվությունը ու ցանկացած միջոցով իշխանափոխություն իրականացնելով՝ ապահովել երկրի և ժողովրդի անվտանգությունը սպասվող մարտահրավերներին հանդիման, հակառակ դեպքում՝ պատմությունը չի ների....

Ծանոթագրություններ

1. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
2. https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/
3. https://factor.am/1072576.html
4. https://news.am/hy/news/1070413
5. https://hetq.am/hy/article/184361

Բացարձակ վերահսկողություն, թե՞ սոցիալական ական. Ադրբեջանում «հիջաբի սկանդալի» քաղաքական ու աշխարհաքաղաքական ծալքերը

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, դասախոս

Ադրբեջանում 2026 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հանրակրթական դպրոցներում հիջաբի փաստացի սահմանափակումն ու դրան հաջորդած բողոքի ալիքը բացահայտեցին ավտորիտար համակարգի խորքային հակասությունները ու խոցելիությունը: Սահմանադրությամբ երկիրը հռչակված է աշխարհիկ պետություն, որտեղ կրոնը բաժանված է պետությունից, իսկ կրթությունը կրում է աշխարհիկ բնույթ՝ միաժամանակ թղթի վրա երաշխավորելով կրոնի ազատությունը: Չնայած բնակչության ավելի քան 90-96 տոկոսը մահմեդական է (մեծամասամբ շիա), պետական ապարատը մինչ օրս պահպանում է խորհրդային ժառանգությունից եկող աթեիստական-աշխարհիկ վերահսկողության ավանդույթը: Այս երկվությունը պերմանենտ լարվածություն է ստեղծում իշխանության և հասարակության իսլամական ինքնագիտակցություն ունեցող հատվածների միջև:

Իրադարձություններն այս անգամ ծավալվեցին արագ հաջորդականությամբ: Ուսումնական տարվա մեկնարկին դպրոցական համազգեստի հարցի պատրվակով հիջաբով աշակերտուհիներին արգելվեց մուտք գործել դպրոց, ինչն արագորեն վերածվեց տեղական բողոքների, ծնողների ու ոստիկանության բախումների: Իլհամ Ալիևի ռեժիմը դիմեց իր ստանդարտ գործիքակազմին՝ ակտիվիստների ձերբակալություններ, սոցցանցերի ու նամակագրության հասանելիության սահմանափակումներ՝ տեղեկատվական ճնշումը կանխելու համար: Այնուամենայնիվ, ճգնաժամը դուրս եկավ ներքին սահմաններից՝ հասնելով մինչև դաշնակից Թուրքիայի հետ հարաբերությունների լարմանը, որտեղ իշխող պահպանողական շրջանակները բացասաբար արձագանքեցին հիջաբի նկատմամբ նման կոշտ վերաբերմունքին:

Ճգնաժամի խորքային պատճառը քաղաքական այլախոհության բացակայությունն է: Ընդդիմադիր դաշտի լիակատար ջախջախումից հետո կրոնական համայնքները մնացել են այն եզակի սոցիալական հարթակը, որտեղ առկա է ինքնակազմակերպման ներուժ: Ալիևի ռեժիմի համար սա զուտ դպրոցական կանոնակարգի հարց չէ, այլ բացարձակ վերահսկողությունը կորցնելու էկզիստենցիալ վախ: Իշխանությունները ցանկացած անկախ կրոնական դրսևորում դիտարկում են որպես սպառնալիք, որը փորձում են ներկայացնել որպես «արտաքին վտանգ» կամ ռադիկալիզմ՝ Արևմուտքի աչքում «աշխարհիկ պատվարի» դեր խաղալու և ներքին ռեպրեսիվ ապարատի բյուջեներն ու անվտանգության համակարգի գոյությունը հիմնավորելու համար:



Մյուս կողմից, սկանդալը բորբոքողներն ու բողոքողներն ունեն տարբեր նպատակներ: Ծնողների և շարքային քաղաքացիների համար սա սեփական երեխաների կրոնական ինքնության ու սահմանադրական իրավունքների տարրական պաշտպանություն է: Սակայն պահպանողական ու իսլամիստական խմբավորումները, ինչպես նաև արտաքին ազդեցության որոշ կենտրոններ, օգտագործում են հանրային արդարացի դժգոհությունը Ի. Ալիևի վարչակարգի դեմ դիմադրության օջախներ ձևավորելու և սեփական քաղաքական ազդեցությունն ընդլայնելու համար:

Փաստացի, հիջաբի արգելքն ու դրան հաջորդած բռնաճնշումները ցույց տվեցին, որ ալիևյան «աշխարհիկությունն» ու «հանդուրժողականությունը» սոսկ ավտորիտարիզմի քողարկման միջոցներ են: Արգելքներով ու ձերբակալություններով խնդիրը լուծելու փորձերը ոչ թե չեզոքացնում են վտանգը, այլ ավելի են խորացնում հասարակական ճեղքվածքը՝ պարարտ հող ստեղծելով ապագա ավելի լուրջ սոցիալ-քաղաքական ցնցումների համար:

Պետք է ընդգծել, որ դպրոցական հիջաբի դեմ պայքարն Ադրբեջանում նորություն չէ: Դեռևս 2010 թվականի դեկտեմբերին կրթության նախարար Միսիր Մարդանովը հայտարարեց դպրոցներում հիջաբի արգելքի մասին՝ որպես պատրվակ բերելով միասնա-

կան համազգեստի կանոնները: Դրան հաջորդած բողոքի ալիքը Բաքվում, Գանձակում (Գյանջա) և այլ քաղաքներում բիրտ ուժի կիրառմամբ հանդարտեցվեց, սակայն ակտիվիստներից շատերը հետագայում դատապարտվեցին երկարատև ազատազրկման: Նմանատիպ սահմանափակումներ և տեղային դժգոհություններ պարբերաբար ի հայտ էին գալիս նաև հետագա տարիներին, այդ թվում՝ 2026 թվականի գարնանը:

Արդեն սեպտեմբերի 21-ին կառավարությունն ընդունեց թիվ 309 որոշումը՝ փոփոխելով պետական դպրոցների համազգեստի կանոնները և արգելելով «միասնական համազգեստի պահանջները խախտող կամ կրթության աշխարհիկ սկզբունքին հակասող» հագուստի տարրերը: Թեև «հիջաբ» բառը տեքստում ուղղակիորեն չէր նշվում, ձևակերպումն ակնհայտորեն ուղղված էր հենց դրա դեմ, իսկ հոկտեմբերի 6-ին նույնաբնույթ սահմանափակող պահանջներ դրվեցին նաև մանկավարժների առջև:

Հոկտեմբերի 9-12-ն ընկած ժամանակահատվածում սկսվեց ստուգումների և որոշման կիրառման կոշտ փուլը, երբ հիջաբ կրող աշակերտուհիներին և ուսուցչուհիներին արգելեցին մուտք գործել դպրոցներ: Սոցիալական ցանցերում լայն տարածում գտան տեսանյութեր, որտեղ դպրոցից հեռացվող աղջիկները լացելով հարցնում էին՝ «Ինչո՞ւ պետք է հրաժարվեմ իմ կրոնից», իսկ դպրոցների մոտ հայտնվեցին «Հիջաբը կրթությանը չի խանգարում» պաստառները: Բողոքի ալիքն արագորեն բռնկվեց Բաքվի ավանդաբար պահպանողական արվարձաններում, ինչպիսիք են Բալախանին, Մաշտաղան, Սաբունչինը, ինչպես նաև Իրանին սահմանակից հարավային շրջաններում՝ Մասալլիում և Ջալիլաբադում: Որոշ դպրոցներում տղաները հրաժարվեցին դասերին մասնակցելուց՝ աջակցելով աղջիկներին, իսկ որոշ վայրերում նույնիսկ բախումներ տեղի ունեցան. գրանցվեցին դպրոցի տնօրենի մեքենան այրելու և դպրոց հրկիզելու փորձեր:

Համակարգային վերահսկողության կարևորագույն տարրերից է իշխանության գործողությունները պաշտոնական կրոնական ինստիտուտների կողմից լեգիտիմացնելու դերը: Հոկտեմբերի 13-ին Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ, շեյխ-ուլ-իսլամ Ալլահշյուքյուր Փաշազադեի հայտարարությունը լիովին տեղավորվեց ադրբեջանական քաղաքական մոդելի տրամաբանության մեջ: Ընդունելով, որ հիջաբը «կարևոր կրոնական պարտավորություն է», նա միաժամանակ ընդգծեց, որ «պետության որոշումներին չի կարելի հակադրվել»՝ քննադատելով ցուցարարներին դպրոցական գործընթացը խաթարելու համար: Փաշազադեն թեման որակեց որպես ներքին ու արտաքին ուժերի կողմից քաղաքականացվող հարց և փորձեց մեղմել լարվածությունը՝ պնդելով, թե որոշման տեքստում «հիջաբ» բառի բացակայությունը նշանակում է արգելքի բացակայություն: Չնայած նա ափսոսանք հայտնեց կրոնական կառույցի հետ նախնական խորհրդակցությունների բացակայության



համար, այնուամենայնիվ, պաշտոնական իսլամական հաստատությունը հերթական անգամ հանդես եկավ ոչ թե որպես հավատացյալների անկախ ձայն, այլ որպես իշխանության քաղաքականությունը սպասարկող ու իրավիճակը կայունացնող գործոն:

Ռեժիմի պատասխանը եղավ ակնթարթային և բռնի: Հոկտեմբերի 12-ին ՆԳՆ-ն հայտարարեց Բաքվում 37 մարդու ձերբակալության մասին, մինչդեռ ակտիվիստները պնդում էին ավելի քան 200 ձերբակալվածների մասին, որոնց սպառնում է մինչև 3 տարի ազատազրկում: Զուգահեռաբար սահմանափակվեց Instagram-ի և TikTok-ի հասանելիությունը, իսկ հետագա օրերին թիրախավորվեցին քաղաքացիական և ընդդիմադիր ակտիվիստները: Amnesty International-ն անմիջապես հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով վերացնել սահմանափակումները և ազատ արձակել խաղաղ ցուցարարներին, քանի որ կոպտորեն խախտվում են կրթության, կրոնի և արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքները:

Ադրբեջանում հիջաբի շուրջ ծավալված սկանդալի և պետական սահմանափակումների հիմքում ընկած է բարդ քաղաքական, աշխարհաքաղաքական և գաղափարախոսական դրդապատճառների մի ամբողջ համալիր: Պաշտոնական Բաքվի ներկայացրած առաջնային բացատրությունը կրթության աշխարհիկ բնույթի պահպանումն ու դպրոցներում միասնական համազգեստի ապահովումն է: Սա խորհրդային և հետխորհրդային աթեիստական-աշխարհիկ քաղաքականության ուղղակի շարունակությունն է, որի հիմնական նպատակն է կրոնական ցանկացած դրսևորում հանրային և պետական հաստատություններից իսպառ հեռու պահելը:

Այնուամենայնիվ, այս քաղաքականության խորքային պատճառներից մեկը Իրանի հնարավոր գաղափարական ազդեցության նկատմամբ ալիևյան ռեժիմի ունեցած խորը մտահոգությունն է: Լինելով շիա մեծամասնություն ունեցող երկիր և սահմանակցելով Իրանին, որտեղ ապրում են մեծ թվով թյուրքախոսներ, Բաքվի իշխանությունները ցանկացած անկախ կրոնական ակտիվություն դիտարկում են որպես անվտանգային սպառնալիք: Իշխանությունները կրոնական հագուստի և հիջաբի տարածումը հաճախ



ուղղակիորեն կապում են «արաբա-պարսկական արժեքների» ներմուծման կամ Թեհրանի սուբվերսիվ ազդեցության հետ, իսկ պետական լրատվամիջոցներով ակտիվորեն քարոզում են, թե նման արգելքներն անհրաժեշտ են ազգային ինքնությունն ու պետականությունը պաշտպանելու համար:

Միևնույն ժամանակ, իրավիճակը բարդանում է Ադրբեջանի գլխավոր դաշնակից Թուրքիայի հետ հարաբերությունների հավասարակշռման տեսանկյունից: Չնայած «մեկ ազգ, երկու պետություն» հայտնի բանաձևին, Ռեջեփ Թայիփ Էրդողանի և «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) կառավարման տարիներին Թուրքիան ստացել է ընդգծված իսլամական-պահպանողական ուղղվածություն: Ի. Ալիևի ռեժիմը, ձգտելով պահպանել խիստ աշխարհիկ դիրքորոշում, փորձում է սահմանափակել ցանկացած արտաքին գաղափարական ազդեցություն, ներառյալ՝ թուրքական իսլամիստական շրջանակներից եկող ճնշումները: Հատկանշական է, որ թուրքական որոշ քննադատներ հիջաբի արգելքը կապում են նաև Ադրբեջանի ու Իսրայելի միջև առկա սերտ ռազմավարական, զինվորական և էներգետիկ կապերի հետ, ինչն ավելի է սրում դիվանագիտական ու հանրային լարվածությունը երկու դաշնակից պետությունների միջև:

Ադրբեջանում հիջաբի շուրջ ծավալված սկանդալում ներգրավված կողմերը հետապնդում են միմյանցից խիստ տարբերվող, բազմաշերտ և հաճախ հակասական նպատակներ:

Իշխանությունների և Իլհամ Ալիևի ռեժիմի համար պաշտոնական նպատակը հայտարարված է որպես աշխարհիկ կրթության, պետական կարգի և ազգային ինքնության պահպանում: Սակայն ավտորիտար համակարգում, որտեղ քաղաքական ընդդիմությունը ջախջախված է, անկախ լրատվամիջոցները՝ փակված, իսկ հանրային բողոքները՝ հազվադեպ, այս քայլն առաջին հերթին հասարակության նկատմամբ բացարձակ վերահսկողության պահպանման գործիք է: Ռեժիմն ավանդաբար օգտագործում է «արմատական իսլամի սպառնալիքը»՝ ներքին բռնաճնշումները լեգիտիմացնելու և Արևմուտքի աչքում որպես աշխարհիկ ու կայուն գործընկեր ներկայանալու համար: Միաժամանակ, սրանով Բաքուն ցույց է տալիս, որ «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը չի նշանակում թուրքական կրոնական-քաղաքական մոդելի անվերապահ ընդունում: Արգելքի կիրառման անհամապատասխանության աստիճանը, որն անմիջապես ուղեկցվեց ձերբակալություններով, ճնշումներով և սոցցանցերի սահմանափակումներով, ակնհայտորեն բնորոշում է ռեժիմի վերաբերմունքը ցանկացած տեսակի հանրային անհամաձայնության կամ ինքնակազմակերպման հարցում:

Բողոքողների և սկանդալը բորբոքողների ճամբարում նույնպես դրդապատճառները միատարր չեն: Բազմաթիվ ընտանիքների և աշակերտների համար սա բացառապես կրոնական ազատության, անձնական արժանապատվության և կրթության սահմանադրական իրավունքի պաշտպանության հարց է: Սակայն գործընթացն ունի նաև ընդգծված քաղաքական բաղադրիչ: Հանրային դժգոհությունից փորձում են օգտվել ընդդիմադիր ակտիվիստները, ինչպես նաև Իրանից կամ արտաքին իսլամիստական շրջանակներից հնարավոր ազդեցություն ունեցող խմբերը: Բացի այդ, թեման օգտագործվում է Թուրքիայի ներքին քաղաքական դաշտում, որտեղ իշխող ԱԶԿ-ն ավանդաբար դիրքավորվում է որպես մահմեդական կանանց իրավունքների պաշտպան: Սոցցանցերում թեմայի կայծակնային տարածումն ու օտարերկրյա օգտատերերի բարձր ակտիվությունը վկայում են, որ ներքին հասարակական խնդիրն արագորեն վերածվել է նաև արտաքին քաղաքական ճնշման և տեղեկատվական արշավների թիրախի:

Ադրբեջանում հիջաբի շուրջ բռնկված սկանդալը, ըստ էության, արտացոլում է երկրի բարդ ու խոցելի դիրքը՝ աշխարհիկ ավանդույթների, շիայական ինքնության, Թուրքիայի հետ ռազմավարական դաշինքի և Իրանի հետ զգայուն ու լարված հարաբերությունների խաչմերուկում: Պաշտոնական Բաքվի որոշումը ձևականորեն հենված է սահմանադրական աշխարհիկության պահպանման վրա և ունի հստակ պատմական նախադեպեր, սակայն դրա կոշտ կիրառումն ու բողոքների բռնի ճնշումը հերթական անգամ փաստում են Ի. Ալիևի ռեժիմի բացահայտ ավտորիտար բնույթը: Այս համակարգում ցանկացած հանրային անհամաձայնություն կամ քաղաքացիական ինքնակազմակերպում անմիջապես վերածվում է պետական անվտանգության սպառնալիքի:

Միևնույն ժամանակ, հանրային արդարացի դժգոհության մի մասը կարող է օգտագործվել արտաքին քաղաքական ուժերի կողմից՝ սեփական ազդեցության շրջանակներն ընդլայնելու նպատակով: Այնուամենայնիվ, երկարաժամկետ հեռանկարում նման ուժային սահմանափակումներն ու բռնաճնշումները ոչ թե լուծում են հարցը, այլ էլ ավելի են խորացնում ներքին սոցիալական լարվածությունը, հատկապես՝ աստիճանաբար աճող կրոնական համայնքների շրջանում: Ի. Ալիևի ռեժիմը, վախենալով սեփական հասարակությունից, կարճաժամկետ բացարձակ վերահսկողությունն ակնհայտորեն գերադասում է երկարաժամկետ սոցիալական կայունության հեռանկարից:

«Մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքի փորձությունը. Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների նոր ճգնաժամը

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

Տասնամյակներ շարունակ Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերությունները բնութագրվել են «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքով: Այս բանաձևն արտացոլել է ոչ միայն էթնիկ-մշակութային մերձավորությունը, այլև ռազմավարական փոխկախվածությունը՝ էներգետիկ, ռազմական և աշխարհաքաղաքական ոլորտներում: Սակայն 2026 թվականի աշնանը այս սկզբունքը ենթարկվեց հազվադեպ հանրային և ինստիտուցիոնալ փորձության, որը բացահայտեց ոչ միայն կոնկրետ տարաձայնություններ, այլև ավելի խորը կառուցվածքային լարվածություն երկու պետությունների միջև:

Լարվածության անմիջական պատճառը Ադրբեջանի կառավարության սեպտեմբերի 21-ի որոշումն էր, որով փոխվեցին պետական դպրոցների համազգեստի վերաբերյալ կանոնները: Թեև գլխաշորն ուղղակիորեն չի նշվում, կանոններն արգելում են հագուստ, որը հակասում է «կրթության աշխարհիկ սկզբունքին» կամ խախտում է համազգեստի միատեսակությունը: Հոկտեմբերի սկզբին որոշ դպրոցներ սկսեցին չընդունել գլխաշորով աշակերտուհիներին ու ուսուցիչներին: Սա հանգեցրեց բողոքի ակցիաների Բաքվում և երկրի հարավային շրջաններում: Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունը հայտարարեց 37 մարդու կալանավորման մասին:[1]

Թուրքիայում արձագանքը եկավ հիմնականում իշխանությանը մոտ շրջանակներից: Հանրապետության նախագահի գլխավոր խորհրդական Օքթայ Սարալը հոկտեմբերի 13-ին սոցիալական ցանցերում հայտարարեց, որ «գլխաշորով աշակերտուհիների կրթության իրավունքի սահմանափակումն անընդունելի է» և կոչ արեց Ադրբեջանին «շուտափույթ վերանայել այս որոշումը»:[2] Նման դիրքորոշում հայտնեցին նաև «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) մի շարք պատգամավորներ:

Ադրբեջանի իշխող Նոր Ադրբեջան կուսակցությունը (YAP) կոշտ պատասխանեց: Կուսակցությունը մեղադրեց Սարալին և ԱԶԿ-ի պատգամավորներին «պոպուլիստական և անպատասխանատու հայտարարությունների» մեջ և ընդգծեց, որ «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը չի կարող հիմք հանդիսանալ մեկ պետության միջամտությանը մյուսի ներքին գործերին:

Էրդողանի հոկտեմբերի 18-ի շնորհավորական ուղերձը, որում նա Ալիևին անվանեց «եղբայր» և հիշեցրեց համատեղ կանգնած լինելու մասին, ի զորու չեղավ փոխելու Բաքվի դիրքորոշումը:[3] Ընդհակառակը, հաջորդ օրը Ադրբեջանը հայտարարեց



Թուրքիայում ապրող լրագրողների միջազգային հետախուզման մասին՝ նրանց մեղադրելով սահմանադրական կարգի տապալման կոչեր անելու և կրոնական ծայրահեղականություն հրահրելու մեջ: Այս քայլը կարելի է դիտարկել որպես ազդանշան. Բաքուն չի պատրաստվում բավարարվել միայն բանավոր պատասխաններով և պատրաստ է կիրառել նաև իրավական և վարչական գործիքներ:

Հետագա զարգացումներն ավելի խորացրին ճեղքը: Ադրբեջանական որոշ վերլուծաբաններ սկսեցին պնդել, որ Անկարան օգտագործում է գլխաշորի հարցը՝ ուշադրությունը շեղելու համար սեփական ներքին խնդիրներից (մասնավորապես՝ կոռուպցիոն սկանդալներից): Հոկտեմբերի 21-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության հայտարարությունը 31 թուրք քաղաքացու մուտքի արգելքի մասին դարձավ ճգնաժամի ամենակոնկրետ և տեսանելի դրսևորումներից մեկը: Այս քայլը ցույց տվեց, որ Բաքուն պատրաստ է անցնել խորհրդանշական արձագանքներից գործնական սահմանափակումների: Էրդողանի և Ալիևի հեռախոսազրույցը, որը տեղի ունեցավ նույն օրը, չհանգեցրեց հստակ հաշտեցման: Թեև երկու կողմերն էլ վերահաստատեցին «եղբայրական հարաբերությունների» շարունակման ցան-





կությունը, Բաքվից եկող ազդանշանները մնացին խառը. որոշ լրատվամիջոցներ մեղմացրին տոնը, մյուսները շարունակեցին կոշտ քննադատությունը:

Իրականում, գլխաշորի հարցի հետ կապված երկուստեք լարվածությունը բացահայտեց ավելի լայն և կառուցվածքային տարաձայնություններ, որոնք կուտակվել էին վերջին տարիներին:

Ամենակարևոր արտաքին քաղաքական տարաձայնություններից մեկը Իսրայելի հետ հարաբերություններն են: Ադրբեջանը 2020 թվականի պատերազմից հետո պահպանել և խորացրել է իր ռազմական և էներգետիկ կապերն Իսրայելի հետ:

Իսրայելական զինատեսակները, հատկապես անօդաչու թռչող սարքերն ու ճշգրիտ հարվածային համակարգերը, կարևոր դեր են խաղացել Արցախի դեմ հաղթանակներում, իսկ Ադրբեջանն իր հերթին նավթ է մատակարարում Իսրայելին: Թուրքիայի համար, հատկապես 2023 թվականի հոկտեմբերի 7-ից հետո, Իսրայելի հետ հարաբերությունները դարձել են կոշտ քննադատության առարկա: Անկարան Գազայի պատերազմը բնութագրում է որպես ցեղասպանություն և սերտ կապեր է պահպանում Համասի հետ: Այս տարբերությունը ոչ միայն դիվանագիտական է, այլև արտացոլում է երկու երկրների տարածաշրջանային տարբեր դիրքավորումները: Ադրբեջանը փորձում է պահպանել բազմավեկտոր քաղաքականություն, մինչդեռ Թուրքիան ավելի հստակորեն դիրքավորվում է իսլամական աշխարհի որոշակի հատվածի կողքին:

Տարաձայնությունների հիմնական պատճառներից է նաև գաղափարական տարբերությունների ազդեցությունը: Ադրբեջանը սահմանադրորեն աշխարհիկ պետություն է և վերջին տարիներին ավելի կոշտ է կիրառում այս սկզբունքը կրթական համակարգում: Սա արտացոլում է Ալիևի կառավարման ոճը, որը փորձում է սահմանափակել կրոնական ազդեցությունը հանրային ոլորտում՝ հատկապես այն ֆոնին, երբ տարածաշրջանում առկա են կրոնական ծայրահեղականության ռիսկեր: Թուրքիայում, ընդհակառակը, Էրդողանի ԱՋԿ-ն իշխանության գալուց հետո վերացրել է գլխաշորի հարցում եղած նախկին արգելքները և կրոնական ազատությունը դարձրել իր քաղաքական ինքնության կարևոր մաս: Այս տարբերությունը ստեղծում է կառուցվածքային լարվածություն. այն, ինչ Ադրբեջանում դիտվում է որպես աշխարհիկության պաշտպանություն, Թուրքիայի իշխող շրջանակներում ընկալվում է որպես կրոնական ազատության սահմանափակում:

Ինքնիշխանության ընկալումները ևս խթան են տարաձայնությունների սրացման համար: Հոկտեմբերի 2-ին Իլհամ Ալիևի ելույթը YAP-ի համագումարում Թուրքիայում շատերը մեկնաբանեցին որպես ուղղակի կամ անուղղակի մարտահրավեր: Ալիևը հայտարարել էր, որ «երբ մեզ օգնություն էր պետք, ոչ ոք չօգնեց, ամեն ինչ գնեցինք մեր փողով՝ ներառյալ զենքը»:[4] Թեև անուններ չեն նշվել, այս խոսքերը դիտվեցին որպես Թուրքիայի դերի նվազեցում 2020 և 2023 թվականների Ադրբեջանի հաղթանակներում: Սա արտացոլում է ավելի ընդգրկուն խնդիր. Ադրբեջանը, հաղթանակներից հետո ավելի ինքնավստահ դառնալով, փորձում է նվազեցնել այն ընկալումը, թե գտնվում է «մեծ եղբայր» Թուրքիայի ստվերում: Բաքուն ցանկանում է ընդգծել իր ինքնիշխանությունը ոչ միայն արտաքին քաղաքականության, այլև ներքին գաղափարական հարցերում:



Չնայած այս տարաձայնություններին, երկու կողմերն էլ լավ գիտակցում են, որ հարաբերությունների լուրջ վատթարացումը կհակասի իրենց հիմնական շահերին: Ադրբեջանը Թուրքիայի գազի ներկրման կարևոր աղբյուրներից է (մոտ 22 տոկոս), և 2026 թվականին ստորագրվել են նոր երկարաժամկետ պայմանագրեր Ապշերոնի հանքավայրից գազի մատակարարման վերաբերյալ: Ռազմական ոլորտում համագործակցությունը շարունակվել է նույնիսկ լարվածության գագաթնակետին. սեպտեմբերի վերջին ստորագրվել են մոտ 500 միլիոն դոլարի պաշտպանական պայմանագրեր:

Այս ֆոնին երկու կողմերն էլ փորձել են զսպել ճգնաժամը: Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը հոկտեմբերի 15-ին Բաքվում հայտարարեց, որ հարաբերությունների ռազմավարական բնույթը գերազանցում է ցանկացած տարաձայնություն, և տարբերությունները չպետք է շահարկվեն սոցիալական ցանցերում:[5]

Այս ճգնաժամը ցույց է տալիս, որ «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը, չնայած իր խորհրդանշական ուժին, չի կարող ամբողջությամբ վերացնել իրական քաղաքական, գաղափարական և աշխարհաքաղաքական տարբերությունները: Ադրբեջանի աճող ինքնավստահությունը, Իսրայելի հետ հարաբերությունների հարցում տարբեր մոտեցումները ինչպես և աշխարհիկության մեկնաբանության տարբերությունները ստեղծում են կառուցվածքային լարվածություն, որը հեշտությամբ կարող է վերածվել հանրային ճգնաժամի՝ հատկապես սոցիալական ցանցերի դաշտում:

Առայժմ ռազմավարական շահերը (էներգետիկա, ռազմական համագործակցություն, տարածաշրջանային դիրքավորում) գործում են որպես սահմանափակող գործոն և նվազեցնում են լուրջ ճեղքման հավանականությունը: Սակայն այս դեպքը կարևոր նախադեպ է. այն ցույց է տալիս, որ եղբայրության մասին հռետորաբանությունը միշտ չէ, որ բավարար է ներքին և արտաքին քաղաքականության հարցերում ինքնիշխանության պահանջները հաշտեցնելու համար: Եթե գաղափարական տարաձայնությունները շարունակեն սրվել, կամ եթե տարածաշրջանային զարգացումները (հատկապես Իսրայել-Իրան գծով) ավելի խորացնեն տարբերությունները, ապա «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը կարող է ենթարկվել ավելի լուրջ փորձությունների:

Հղումներ

1 https://www.bbc.com/news/articles/cwly0g2r4k3po (23.10.26)
2 https://x.com/oktay_saral/status/2109736185090257245
3 https://x.com/RTErdogan/status/2111784957467115822
4 https://report.az/en/domestic-politics/president-we-must-shape-our-foreign-policy-so-that-no-one-interferes-in-our-internal-affairs
5 https://www.turkiyetoday.com/nation/azerbaijan-bond-tested-in-war-crisis-and-differences-not-to-be-exploited-fidan-3230401?s=1

Երևանի երթևեկության մղձավանջը

Արեգ Ղարաբեգյան
Բնապահպանութեան ճարտարագետ

Երևանում երթևեկության խնդիրը հասել է այնպիսի մակարդակի, որ կառավարությունն իրավիճակը հայտարարել է ճգնաժամային և Երևանի քաղաքային իշխանություններին կոչ է արել ստեղծել աշխատանքային խումբ՝ խնդրին լուծումներ գտնելու համար:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանում երթևեկության խնդիրները զգալիորեն վատթարացել են, և օրվա որոշակի ժամերին երթևեկությունը գրեթե ամբողջությամբ կանգ է առնում: Խցանումներն ամենօրյա անհարմարությունից վերածվել են համազգային լուրջ ճգնաժամի:

Երևանը նախագծվել էր առավելագույնը 250.000 բնակչի համար՝ հիմնականում հասարակական տրանսպորտի միջոցով տեղաշարժվելու հաշվարկով: Այսօր Երևանն ունի առնվազն չորս անգամ ավելի շատ բնակիչ, իսկ հասարակական տրանսպորտի համակարգը բավարար չէ նման չափերի քաղաքի համար: Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանում լայնածավալ կառուցվում են բարձրահարկ շենքերի համալիրներ, որոնց զգալի մասը գտնվում է քաղաքի կենտրոնում: Երբ այս բարձրահարկ շենքերը ամբողջությամբ բնակեցվեն, երթևեկության իրավիճակը կարող է էապես վատթարանալ՝ մի քանի անգամ ավելացնելով տրանսպորտային ծանրաբեռնվածությունը: Քաղաքի փողոցներն ու մյուս ենթակառուցվածքները նախատեսված չեն այս նոր համալիրների բնակիչների կողմից օգտագործվող մեծ թվով ավտոմեքենաների ներհոսքը սպասարկելու համար:

Հայաստան ավտոմեքենաների ներմուծումը կտրուկ աճել է մասամբ ներմուծման կանոնների թուլացման և օգտագործված մեքենաների մատչելիության աճի պատճառով: Այս աճը զգալիորեն գերազանցել է Երևանում ճանապարհային ցանցի, կայանատեղիների և հասարակական տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացման տեմպերը: Ամեն տարի Երևանում գրանցվում է մոտ 12.000 նոր ավտոմեքենա:

Հայաստանի 954.000 տրանսպորտային միջոցներից ավելի քան մեկ երրորդը՝ մոտ 343.000-ը, գրանցված է Երևանում: Սակայն Երևանում փաստացի երթևեկող մեքենաների թիվը շատ ավելի մեծ է, քանի որ այլ մարզերում գրանցված բազմաթիվ մեքենաներ նույնպես շահագործվում են Երևանում: Երևանի զարգացման ծրագրի համաձայն՝ քաղաքում գտնվող տրանսպորտային միջոցների թիվը մոտ 600.000 է:



Երթևեկության խցանումների հիմնական պատճառները

Երևանում երթևեկության սարսափելի վիճակի բազմաթիվ պատճառներ կան, սակայն չորս խնդիր կարելի է համարել հիմնականները, որոնք առավել մեծ չափով են հանգեցնում խցանումների:

Առաջին խնդիրն այն է, որ օրենքով վարորդներից պահանջվում է վթարի դեպքում մնալ դեպքի վայրում և չտեղաշարժել վթարի մասնակից մեքենաները, նույնիսկ եթե խոսքը փոքր բախման կամ թեթև վնասվածքով վթարի մասին է, մինչև երկու վարորդների ապահովագրական ներկայացուցիչները և ճանապարհային ոստիկանությունը չժամանեն և չարձանագրեն միջադեպը: Կախված վայրից և օրվա ժամից՝ երբեմն վարորդները ստիպված են լինում երկար ժամանակ սպասել, և դա մեծ տարածքում առաջացնում է լուրջ խցանումներ:

Աշխարհի որոշ խոշոր քաղաքներում վարորդներին թույլատրվում է փոքր վթարի դեպքում մեքենաները տեղափոխել ճանապարհի եզր և այնտեղ սպասել ոստիկանության ու ապահովագրական ընկերության ներկայացուցչի ժամանմանը: Երևանում նման պարզ և գործնական ընթացակարգի ներդրումը կարող է օգտակար լինել:

Երկրորդ հիմնական խնդիրն այն է, որ վարորդները հաճախ մտնում են խաչմերուկ՝ հստակ տեսնելով, որ չեն կարող այն ամբողջությամբ անցնել, քանի որ հակառակ ուղղությամբ երթևեկությունը փակել է ճանապարհը: Մինչ այդ մեքենաները գտնվում են



Կառավարության շենքի հետևի փողոցում կրկնակի կայանված մեքենաներ



Սա փո՞ս է, թե արդեն խառնարան

խաչմերուկում, լուսացույցի ազդանշանը փոխվում է, և հատվող փողոցից մեքենաները սկսում են շարժվել դեպի խաչմերուկ: Արդյունքում ստեղծվում է ամբողջությամբ փակված խաչմերուկ:

Մի քանի տարի առաջ քաղաքապետարանը որոշ խոշոր խաչմերուկներում դեղին գծեր էր գծել և հայտարարել, որ եթե լուսացույցի ազդանշանի փոխվելու պահին մեքենաները գտնվեն այդ դեղին գծերով նշված հատվածներում, վարորդները կտուգանվեն: Սակայն, ինչպես շատ այլ լավ օրենքների դեպքում, այս կանոնը ևս պատշաճ կերպով չկիրառվեց, և ժամանակի ընթացքում դեղին գծերը պարզապես անհետացան: Այս խնդրի լուծումը խախտողների նկատմամբ կանոնավոր կերպով տուգանքներ կիրառելն է:

Երրորդ հիմնական խնդիրը կրկնակի կայանումն է, որը քաղաքում շատ տարածված է և խոչընդոտում է երթևեկության բնականոն հոսքին:

Ոմանք երթևեկության զուգահեռ գծի վրա կրկնակի կայանում են պարզապես այն պատճառով, որ ինչ-որ մեկին են սպասում կամ կարճ ժամանակով ինչ-որ գործ ունեն, սակայն մյուսների դեպքում դա անհրաժեշտությունից է բխում: Պետք է հիշել, որ օրվա ընթացքում քաղաքի կենտրոնում գրեթե անհնար է կայանատեղի գտնելը: Երբեմն կայանատեղի գտնելու համար անհրաժեշտ է 40-45 րոպե մեքենայով շրջել:

Եթե ծնողը պետք է երեխային դպրոցից վերցնի, ինչ այլ ընտրություն ունի, բացի կրկնակի կայանելուց և երեխայի դուրս գալուն սպասելուց: Պետք է նաև հաշվի առնել, որ Երևանի դպրոցները չունեն իրենց համար նախատեսված կայանատեղիներ կամ մեքենաների սպասման գոտիներ:

Նույնը վերաբերում է առաքման մեքենաներին: Քաղաքի կենտրոնում գտնվող սուպերմարկետներն ու այլ խանութներ օրվա տարբեր ժամերին ապրանքներ են մատակարարվում, ինչն առաջացնում է երթևեկության բազմաթիվ և հաճախակի խափանումներ:

Ինչ այլ ընտրություն ունի առաքման մեքենայի վարորդը: Արդյո՞ք նա պետք է երկար ժամանակ շրջի քաղաքում, այնուհետև կայանատեղի գտնի, որը, ամենայն հավանականությամբ, խանութից բավական հեռու կլինի, և ապրանքները մեքենայից խանութ կտեղափոխի քայլելով: Ակնհայտ է, որ դա գործնական չէ: Հիշեցնենք նաև, որ Երևանում միայն մի քանի խոշոր սուպերմարկետներ ունեն սեփական կայանատեղիներ, և դրանցից ոչ մեկը քաղաքի կենտրոնում չէ: Սա հանգեցնում է կարևոր հարցի՝ ինչո՞ւ քաղաքի կենտրոնում չկան վճարովի հանրային բազմահարկ կայանատեղիներ կամ ավտոկայանատեղի-հրապարակներ:

Երթևեկության խնդրին առնչվող չորրորդ հիմնական հարցը ճանապարհների, հատկապես ձմռանը, վատ վիճակն է: Ամեն տարի, երբ ձյունը հալվում է, Երևանը կրկին դիմավորում է փոսերով լի գարունը: Մինչ վարորդները գնահատում են իրենց մեքենաներին հասցված վնասը, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներն արդարացումներ են գտնում և պատճառը կապում են կլիմայական պայմանների հետ: Երևանում ձմռանը լինում են ցրտահարություններ և անձրևներ, ուստի նման կլիմայական պայմանները չպետք է անակնկալ լինեն որևէ մեկի համար: Պատշաճ կերպով պահպանվող և որակյալ ասֆալտապատված ճանապարհը պետք է դիմանա ձմեռային պայմաններին, և բացառվեն անորակ ասֆալտապատման աշխատանքները:

Երևանի փողոցներում դիտահորերի առկայությունը սովորական երևույթ է, սակայն գրեթե բոլոր դեպքերում դրանց կափարիչները գտնվում են ճանապարհի մակերևույթից ցածր: Վարորդները փորձում են խուսափել նման անհարթ դիտահորերից և փոսերից, և դրա հետևանքով ստեղծվում են վթարների համար նպաստավոր պայմաններ: Նույնիսկ փոքր վթարը կարող է առաջացնել երթևեկության լուրջ խափանումներ:

Ամռան վերջին և աշնան սկզբին քաղաքում վերաներկվում են ճանապարհային գծանշումները: Սակայն մի քանի անձրևից հետո այդ գծանշումների մեծ մասն անհետանում է՝ ներկի ցածր որակի պատճառով: Երբ հիմնական փողոցներում գծանշումներ չկան, դա



առաջացնում է երթևեկության խցանումներ, քանի որ վարորդները չունեն հստակ ուղենիշներ՝ ճիշտ երթևեկելու համար: Որակյալ էպոքսիդային ներկի օգտագործումը կարող է ամբողջությամբ վերացնել այս խնդիրը:

Այնուհետև կա փողոցների վերանորոգման և փոսալցման խնդիրը: Սովորաբար, ուշ երեկոյան աշխատանքային մի խումբ տաշում և հեռացնում է վնասված ասֆալտի հատվածները և ճանապարհը պատրաստում հաջորդ խմբի համար, որը պետք է տեղադրի նոր ասֆալտը: Սակայն երկրորդ խմբի աշխատանքը կարող է կատարվել մի քանի օր հետո: Այդ ընթացքում հեռացված ասֆալտի պատճառով առաջացած ճանապարհի անհարթ մակերեսը հանգեցնում է երթևեկության լուրջ խցանումների, քանի որ վարորդները դանդաղեցնում են ընթացքը՝ հեռացված հատվածների եզրերի վրայով անցնելիս:

Կազմակերպված քաղաքներում երկու աշխատանքային խմբերն աշխատում են նույն երեկոյի և գիշերվա ընթացքում: Մինչ առաջին խումբը տաշում և հեռացնում է վնասված ասֆալտը, հաջորդ խումբն անմիջապես տեղադրում է նոր ասֆալտը, և ճանապարհը պատրաստ է լինում առավոտյան պիկ ժամի երթևեկությանը:

Երթևեկության խնդիրների պատճառներից է նաև պատշաճ վարորդական մշակույթի բացակայությունը: Շատերն ավտոմեքենայի սեփականությունը դիտարկում են որպես նոր տնտեսության պայմաններում հաջողության շոշափելի խորհրդանիշ, և որքան մեծ է մեքենան, այնքան ավելի հաջողակ է համարվում դրա տերը: Այն փաստը, որ մայրաքաղաքի ավտոմեքենաների սեփականատերերից շատերը երիտասարդ սերնդի վարորդներ են, ակնհայտ է նրանց վարքագծից և վարելու առանձնահատկություններից:

Շատ վարորդներ պարբերաբար խախտում են ճանապարհային երթևեկության կանոնները կամ մեքենաները թողնում վտանգավոր վայրերում: Նախկինում տարածված էր վարորդական վկայականը «գնելու» պրակտիկան: Վերջին տարիներին այդ երևույթը գրեթե վերացել է, սակայն հավանաբար կան հազարավոր վարորդներ, որոնք իրենց վարորդական վկայականը ստացել են անօրինական ճանապարհով: Նման վարորդների կողմից ճանապարհային կանոնների վտանգավոր խախտումները կարելի է տեսնել ամենուր:

Հասարակական տրանսպորտ

Երևանում հիմնականում հասարակական տրանսպորտի երեք տեսակ կա՝ մետրոն, ավտոբուսները և տաքսիները: Մետրոն ունի մեկ՝ հյուսիս-հարավ ուղղությամբ գիծ՝ 10 կայարանով, և տարեկան սպասարկում է մոտ 30 միլիոն ուղևորի: Թեև մատչելիությունն ու քաղաքի կենտրոնական հատվածների հետ կապն այն դարձնում են կարևոր տրանսպորտային միջոց, համակարգը չունի բավարար ծածկույթ: Բնակելի խոշոր թաղամասեր մետրոյի ցանցից դուրս են, ինչի հետևանքով դրանց բնակիչներից շատերը ստիպված են օգտվել գերբեռնված ավտոբուսներից:

Վերջին երկու տարիների ընթացքում քաղաքապետարանը փոխարինել է հին ավտոբուսները, որոնք օդի աղտոտման հիմնական աղբյուրներից էին, նոր, բնական գազով աշխատող և հարմարավետ գերմանական ու չինական արտադրության ավտոբուսներով:


Քաղաքապետարանը նաև արգելել է երթուղային միկրոավտոբուսների օգտագործումը հասարակական տրանսպորտում և գործարկել է ավտոբուսներ այն երթուղիներում, որոնք սպասարկվում էին միկրոավտոբուսներով: Միկրոավտոբուսների վերացումը որոշ դրական ազդեցություն է ունեցել երթևեկության վրա, քանի որ մեքենաները հին էին, դրանց վարորդները հայտնի էին վարելու վատ սովորություններով և հաճախ խնդիրներ էին ստեղծում մյուս մեքենաների համար: Այնուամենայնիվ, ավտոբուսների թիվը դեռ բավարար չէ առավոտյան և երեկոյան պիկ ժամերին ուղևորների պահանջարկը սպասարկելու համար:

Տաքսիները լայնորեն օգտագործվում են, քանի որ կարող են հասնել այն տարածքներ, որոնք չեն սպասարկվում ավտոբուսային երթուղիներով, և համեմատաբար էժան են: Նախկինում Երևանում գործում էին բազմաթիվ տաքսի ծառայություններ, որոնցից որոշներն ունեին բավական տարօրինակ անուններ: Դրանց կարելի էր զանգահարել՝ տաքսի պատվիրելու համար, կամ մեքենան կանգնեցնել փողոցում: Նվազագույն վճարը 6 կիլոմետրի համար կազմում էր 700 դրամ, իսկ յուրաքանչյուր հավելյալ կիլոմետրի համար՝ 100 դրամ: Քաղաքում տաքսու երթուղիների մեծ մասը կազմում էր 700 դրամ, քանի որ ուղևորությունների տարածությունը մեծ մասամբ կարճ է:

2016 թվականից Հայաստանում սկսեց գործել Yandex ռուսական տաքսի ծառայությունը, որը նման է Uber-ին և Bolt-ին, որոնց դեպքում տաքսին պատվիրվում է հեռախոսի հավելվածով: Սկզբում Yandex-ը 3 կիլոմետր ճանապարհի համար գանձում էր նվազագույնը 300 դրամ, իսկ յուրաքանչյուր հավելյալ կիլոմետրի համար՝ 100 դրամ: Արդյունքում շատ մարդիկ սկսեցին օգտվել այդ ծառայությունից,

քանի որ քաղաքում բազմաթիվ ուղևորություններ երեք կիլոմետրից պակաս էին:

Երեք-չորս տարի անց տեղական տաքսի ծառայությունների գրեթե բոլոր ընկերությունները փակվեցին, քանի որ չկարողացան մրցակցել Yandex-ի հետ: Այսօր Yandex-ով ուղևորություն հնարավոր չէ կատարել 1.000 դրամից պակաս արժեքով: Գործում է նաև ավելի փոքր, տեղական «gg» ծառայությունը, որն աշխատում է սեփական հեռախոսային հավելվածի միջոցով: Այսօր դրանք, ըստ էության, երկու հիմնական տաքսի ծառայություններն են, որոնցից կարելի է օգտվել Երևանում:



Երևանում աշխատանքի և դպրոց գնալու հիմնական տրանսպորտային միջոցները

Ինչպես երևում է գծապատկերից, ուղևորների մոտավորապես կեսը աշխատանքի և դպրոց գնալու համար օգտվում է հասարակական տրանսպորտից, իսկ զգալի մասը՝ սեփական ավտոմեքենաներից: Ամենայն հավանականությամբ, հասարակական տրանսպորտից օգտվողների թիվը կավելանար, եթե ավտոբուսային համակարգն ընդլայնվեր, և ավելի շատ մարդիկ կարողանային օգտվել դրանցից:

Կայանատեղիների խնդրի լուծում

Քաղաքի կենտրոնի փողոցների մեծ մասի եզրերին կան կարմիր գծեր, իսկ Արաբկիր վարչական շրջանում՝ կապույտ գծեր, որոնք նշանակում են, որ այդ հատվածներում կայանելու համար անհրաժեշտ է վճարել: Մինչև երկու տարի առաջ կարմիր գծերով գոտիներում տարեկան կայանման վճարը կազմում էր 12.000 դրամ ($33), այնուհետև քաղաքապետարանը այն բարձրացրեց մինչև 160.000 դրամի, ($440) քաղաքի կենտրոնի համար: Գաղափարն այն էր, որ այս էական թանկացումը մարդկանց կխրախուսի քաղաքային կենտրոն գնալու ժամանակ չօգտագործել իրենց մեքենաները: Սակայն այս թանկացումը որևէ էական փոփոխություն չառաջացրեց, քանի որ մարդկանց մեծ մասը շարունակում է վճարել բարձր գինը և մեքենայով գնալ քաղաքի կենտրոն:

2026 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ քաղաքի կենտրոնում կա ընդամենը չորս վճարովի հանրային կայանատեղի՝ Օպերայի հարևանությամբ գտնվող բաց տարածքի տակ կառուցված եռահարկ կայանատեղին, Հյուսիսային պողոտայի տակ գտնվող մեկհարկանի կայանատեղին, Holiday Inn հյուրանոցի տակ գտնվող եռահարկ կայանատեղին և Սեզոնների այգու (նախկին Մալիբու այգի) վերջնամասում գտնվող բաց կայանատեղին:



Մետրոյի թունելների ելքը Հրազդանի կիրճի մոտ

Քաղաքի կենտրոնում առնվազն երեք կամ չորս խոշոր բազմահարկ կայանատեղիների կառուցումն էական նշանակություն կունենա կայանման խնդիրը մեղմելու համար: Դա իր հերթին կնվազեցնի կրկնակի կայանումների մեծ մասը, որոնք ներկայումս լուրջ խոչընդոտ են երթևեկության բնականոն հոսքի համար:

Երթևեկության խնդիրների լուծում

2025 թվականի վերջին Երևանի քաղաքապետարանը ստեղծեց Երթևեկության կառավարման կենտրոն՝ Երևանի խցանումների խնդիրներին լուծումներ գտնելու և առաջարկություններ մշակելու նպատակով: Այս կենտրոնի ձեռնարկած միջոցառումներից էին քաղաքի կենտրոնում որոշ փողոցներ միակողմանի դարձնելը և չորս փողոցներում հասարակական տրանսպորտի համար առանձնացված գծեր ստեղծելը:

Շատ դեպքերում որոշ փողոցներ միակողմանի դարձնելը դրական ազդեցություն է ունենում, սակայն, եթե այն լավ մտածված չէ, կարող է լրացուցիչ խնդիրներ ստեղծել: Դրա լավ օրինակն է Մոսկովյան և Բաղրամյան փողոցների խաչմերուկում ստեղծված երթևեկության խառնաշփոթը, որտեղ Մոսկովյան փողոցը միակողմանի է, սակայն Բաղրամյան փողոցի հետ միանում է հակառակ ուղղություններով:

Տեսականորեն հիմնական փողոցներում հասարակական տրանսպորտի համար առանձնացված գծերի ստեղծումը լավ գաղափար է, քանի որ այն թույլ է տալիս ավտոբուսներին ավելի արագ երթևեկել և կարող է խրախուսել ավելի շատ մարդկանց օգտվելու հասարակական տրանսպորտից: Սակայն երբ որոշ վարորդներ միացնում են վթարային ազդանշանները և կանգնում ավտոբուսների համար նախատեսված գոտում, դա լուրջ խնդիրներ է առաջացնում: Ավտոբուսները ստիպված են լինում մտնել ընդհանուր

երթևեկության գոտի: Ցավոք, ոստիկանության մեքենաները հաճախ պարզապես անցնում են այդ մեքենաների կողքով՝ առանց խախտողներին խոշոր տուգանքների ենթարկելու:

Անձնական ավտոմեքենաների նկատմամբ սահմանափակումներ կիրառելը երթևեկությունը նվազեցնելու միջոց է, որն օգտագործվում է աշխարհի որոշ քաղաքներում: Շատ քաղաքներում սահմանափակվում է այն, թե շաբաթվա որ օրերին որ մեքենաները կարող են երթևեկել՝ կախված համարանիշի զույգ կամ կենտ լինելուց: Այս մոտեցումը կարող է օգտակար լինել նաև Երևանում, եթե այն զուգակցվի հասարակական տրանսպորտի զարգացման հետ:

Աշխարհի խոշոր քաղաքների մեծ մասը երթևեկության որոշ խնդիրների լուծման համար գտել է պարզ միջոց՝ սահմանափակել առաքումների ժամերը վաղ առավոտյան կամ ուշ երեկոյան ժամերով: Քանի որ Երևանը դեռևս մինչև առավոտյան ժամը 8-ը հիմնականում քնած է, կարելի է սահմանել, որ առաքման մեքենաներն ու բեռնատարները պետք է իրենց առաքումներն ավարտեն մինչև առավոտյան ժամը 8-ը: Սա կդադարեցնի այն վայրերում երթևեկության խաթարումը, որտեղ օրվա ընթացքում իրականացվում են առաքումներ:

2025 թվականի կեսերին քաղաքը սահմանափակեց խոշոր բեռնատարների՝ հիմնականում շինարարական ծրագրերի հետ կապված մեքենաների մուտքը քաղաքի կենտրոն՝ աշխատանքային օրերին առավոտյան 9-ից մինչև երեկոյան 9-ը: Այս սահմանափակումը որոշակի, թեև սահմանափակ, հաջողություն ունեցավ:

Շատ է խոսվում Աջափնյակ մետրոյի կայարանի կառուցման մասին, որը, ինչպես ակնկալվում է, կավելացնի մետրոյից օգտվողների թիվը: Այս կայարան տանող թունելի մոտ կեսը՝ Բարեկամության հրապարակից մինչև Հրազդանի կիրճ, դեռևս խորհրդային տարիներին փորվել է: Այժմ անհրաժեշտ է Հրազդանի կիրճի վրայով երկար կամուրջ կառուցել և կիրճի մյուս կողմում շարունակել թունելի հորատումը:

Չնայած մետրոյի ընդլայնումը լավ գաղափար է, սակայն այն թանկարժեք ծրագիր է, և դրա ավարտը կարող է երկար տարիներ պահանջել: Շատ ավելի օգտակար կլիներ, եթե այդ գումարները ծախսվեին քաղաքի կենտրոնում խոշոր կայանատեղիների կառուցման և Հյուսիս-Հարավ մայրուղու բացակայող հատվածների ավարտի վրա, ինչը հնարավորություն կտար Երևան չեկող տրանսպորտին ամբողջությամբ շրջանցել քաղաքը:

Ցավոք, Երևանի հասարակական տրանսպորտը հնարավոր չէ ընդլայնել այնպիսի մակարդակի, որ այն ամբողջությամբ սպասարկի քաղաքի բոլոր հատվածները, քանի որ կան մեծ բնակելի թաղամասեր՝ նեղ ու ոլորապտույտ փողոցներով, որտեղ ավտոբուսները չեն կարող երթևեկել: Այս տարածքները հիմնականում հասանելի են մարդատար ավտոմեքենաներով: Սակայն նույնիսկ այնտեղ ավտոմեքենայով սահուն երթևեկելը դժվար է, քանի որ մարդիկ մեքենաները կայանում են գրեթե ցանկացած վայրում՝ առանց հաշվի առնելու մյուսների տեղաշարժը:

Հնարավոր լուծումներ

Երևանի շարունակական խցանումների խնդրի արագ լուծում գոյություն չունի: Քանի որ երկրի բնակչության և բարեկեցության մակարդակն աճում է, ընտանիքները սկսում են ձեռք բերել երկրորդ և նույնիսկ երրորդ ավտոմեքենա, և այս գործընթացը, որոշ առումով, անխուսափելի է:

Ամենաարդյունավետ և ծախսարդյունավետ լուծումը, որը հնարավոր է իրականացնել մոտ յոթ-ութ ամսում, քաղաքի կենտրոնում երեք կամ չորս խոշոր կայանատեղիների կառուցումն է: Այդ կառույցների շինարարության ավարտից հետո հնարավոր կլինի սահմանափակել հիմնական փողոցների երկայնքով կայանումը և այդ տարածքները վերածել բացառապես ավտոբուսների համար նախատեսված գոտիների: Քանի որ փողոցներում ավելի քիչ մարդիկ կկայանեն, կվերանա նաև կրկնակի կայանման մեծ մասը, որն այսօր երթևեկության խաթարման հիմնական պատճառներից է:

Ավտոբուսների թիվը մեծացնելը և նոր երթուղիներ ավելացնելը նույնպես կխրախուսի ավելի շատ մարդկանց օգտվելու ավտոբուսներից՝ անձնական մեքենաների փոխարեն:

Հյուսիս-հարավ մայրուղու բացակայող հատվածների կառուցումը և Երևանի շուրջը շրջանցիկ ճանապարհի ստեղծումը նույնպես դրական ազդեցություն կունենա քաղաքի երթևեկության խցանումները թեթևացնելու վրա:

Որոշ օրերին քաղաքի կենտրոնում ավտոմեքենաների երթևեկության սահմանափակումն ըստ համարանիշների զույգ և կենտ թվերի՝ ծայրահեղ միջոց է, սակայն այս մոտեցումն աշխարհի այլ խոշոր քաղաքներում զգալիորեն բարելավել է երթևեկության վիճակը: Հետևաբար, այն կարող է դիտարկվել նաև Երևանի համար՝ որպես հնարավոր տարբերակ:

Քաղաքային փողոցները լավ վիճակում պահելը և անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների պատշաճ պլանավորումը կվերացնեն խոշոր խցանումների և վարորդների դժգոհության հիմնական պատճառները: Եթե ասֆալտապատման աշխատանքները կատարվեն բարձր որակով, բազմաթիվ փոսերի առաջացման հավանականությունը զգալիորեն կնվազի, ինչը, իր հերթին, կստեղծի երթևեկության սահուն և անխափան շարժի պայմաններ:

Որպես եզրափակում՝ անհրաժեշտ է ընդգծել, որ որևէ լուծում չի կարող էականորեն թեթևացնել երթևեկության ճգնաժամը, եթե օրենքները պատշաճ կերպով չկիրառվեն: Այսօր բազմաթիվ խախտումներ տեղի են ունենում ոստիկանության աշխատակիցների աչքի առջև, սակայն որևէ արձագանք չի լինում: Օրենքների հետևողական և հավասարաչափ կիրառումը Երևանի երթևեկության խնդրի լուծման ցանկացած ծրագրի ամենակարևոր նախապայմանն է:

Արարատն ու կեղծ երկընտրանքը. պետականությո՞ւն, թե՞ պատմական հիշողություն

Արամ Շահնազարյան
Քաղաքական վերլուծաբան

Կան ազգային խորհրդանիշներ, որոնց խորհուրդն ու նշանակությունը վեր են ժամանակի ու տարածության սահմաններից: Դրանք ապրում են ժողովուրդների հավաքական հիշողության մեջ՝ սերունդներին կապելով անցյալի, ներկայի և ապագայի հետ: Հայ ժողովրդի համար այդպիսի խորհրդանիշ է Արարատը: Հայոց հավաքական հիշողության մեջ այն մարմնավորում է պատմական հայրենիքի պատկերը, նպաստում սերունդների միջև պատմական և մշակութային կապերի պահպանմանն ու փոխանցմանը, կրում հայրենազրկման ու կորստի հիշողությունը և արտահայտում ազգային ինքնագիտակցությունը:

Ուստի Հայաստանի քաղաքական դաշտում Արարատի շուրջ ծավալվող բանավեճը չի կարելի դիտարկել սոսկ որպես ազգային խորհրդանիշի նշանակության շուրջ տարակարծություն: Այն բարձրացնում է առավել հիմնարար հարցեր. ինչպե՞ս է Հայաստանի Հանրապետությունը համադրում պետական շահերն ու պատմական ժառանգությունը, ի՞նչ դեր է վերապահում ժողովրդի հավաքական հիշողությանը ապագայի իր տեսլականում, և արդյո՞ք պետական շահերի պաշտպանությունը պահանջում է հրաժարվել ազգային ինքնությունը մարմնավորող բաղադրիչներից:

Գործող իշխանությունների առաջ մղած «Իրական Հայաստանի» գաղափարախոսությունը նաև այս տեսանկյունից է պահանջում խորքային քննություն: Պետականության ամրապնդումը, սահմանների և ինքնիշխանության պաշտպանությունը, անվտանգությունն ու խաղաղությունը, ինչ խոսք, Հայաստանի համար կենսական նշանակություն ունեն: Սակայն միանգամայն այլ հարց է, թե այդ նպատակներին հասնելու համար անհրաժե՞շտ է արդյոք պատմական Հայաստանը հակադրել այսօրվա Հայաստանին, հայրենիքի հասկացությունը սահմանափակել բացառապես Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքով, իսկ ազգային հիշողության դրսևորումները ներկայացնել որպես պետականության ամրապնդմանը խոչընդոտող հանգամանքներ:

Այս հարցերի շուրջ ձևավորվող դիրքորոշումն էական նշանակություն ունի թե՛ հայոց պետականության ներկա ընթացքի, թե՛ դրա երկարաժամկետ կենսունակության համար: Անշուշտ, պետությունը կարող է փոխել իր քաղաքական առաջնահերթությունները, վերանայել անցյալի իրադարձությունների շուրջ ձևավորված քաղաքական մոտեցումները և հարմարվել միջազգային իրողություններին: Սակայն երբ քաղաքական նպատակահարմարությունը դառնում է ժողովրդի պատմական հիշողության վերաձևման հիմք,



ծագում է սկզբունքային հարցը. ի՞նչ իրավունք ունի որևէ իշխանություն կամ քաղաքական ուժ որոշելու, թե ժողովրդի պատմական հիշողության որ շերտերն ու դրվագներն են պահպանվելու, որոնք՝ վերահմաստավորվելու, իսկ որոնք՝ դուրս մղվելու հանրային գիտակցությունից: Պատմական իրադարձությունների գիտական ուսումնասիրությունն ու վերահմաստավորումը բնական և անհրաժեշտ գործընթացներ են, բայց դրանք չպետք է վերածվեն քաղաքական թելադրանքի գործիքի, իսկ պատմական հիշողության բովանդակությունը՝ տվյալ պահի իշխանության քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված ընտրության առարկայի:

Պատմական հիշողությունը չի սահմանափակվում պետական սահմաններով

Պատմական հիշողությունը ժողովրդի ինքնաճանաչման կարևոր հիմքերից է: Դրա միջոցով անցյալը պահպանվում է ոչ միայն որպես իրադարձությունների հաջորդականություն, այլև որպես հավաքական փորձ, արժեքային համակարգ և ազգային ինքնության գիտակցություն: Հավաքական հիշողության և ազգային ինքնության փոխկապակցվածությունը լայնորեն ուսումնասիրվում է հասարակագիտական գրականության մեջ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ անցյալի հանրային մեկնաբանությունները կարևոր դեր են խաղում ազգային ինքնության ձևավորման, պետության լեգիտիմացման և հասարակության՝ սե-



Նախաքրիստոնեական հայկական սրբավայրը Արևմտյան Հայաստանում Նեմրութ լեռան փեշին

փական ապագայի մասին պատկերացումների կերտման գործում:

Հենց հավաքական հիշողության շնորհիվ է, որ ժողովուրդները շարունակում են պահպանել իրենց պատմական ժառանգության հետ կապը նույնիսկ այն ժամանակ, երբ պատերազմների, բռնագաղթերի, կայսրությունների փլուզման կամ սահմանների փոփոխության հետևանքով դրա կարևոր բաղադրիչները՝ պատմական բնակավայրերը, սրբավայրերն ու մշակութային կոթողները կամ ազգային խորհրդանիշները, հայտնվում են այլ պետությունների տարածքում: Աշխարհաքաղաքական իրողությունները կարող են փոխել տարածքների քաղաքական պատկանելությունը, սակայն չեն կարող ինքնաբերաբար ջնջել այդ վայրերի հետ կապված պատմական հիշողությունը կամ վերացնել դրանց նշանակությունը ժողովրդի ազգային ինքնության համար:

Պետական սահմանները սահմանում են պետության ինքնիշխանության տարածական շրջանակը, սակայն դրանց փոփոխությունը չի վերացնում այդ տարածքներում գտնվող հուշարձանների, սրբավայրերի և մշակութային այլ արժեքների կապն այն ժողովրդի պատմության հետ, որի ժառանգության մասն են դրանք:

Կոսովոյում գտնվող սերբական միջնադարյան վանքերն ու եկեղեցիները դրա հստակ օրինակներից են: Դեչանի և Գրաչանիցայի վանքերը, Պեչի պատրիարքարանը և Լևիշի Սուրբ Աստվածածին եկեղեցին սերբ ժողովրդի միջնադարյան պատմության, հոգևոր կյանքի և մշակութային ժառանգության կարևոր կոթողներ են: Այս հուշարձանները գտնվում են Կոսովոյի տարածքում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված են «Կոսովոյի միջնադարյան հուշարձաններ» անվամբ: Այդուհանդերձ, դրանք շարունակում են մնալ սերբական պատմական հիշողության և մշակութային ժառանգության անբաժանելի մասը:

Պարթենոնի քանդակների շուրջ Հունաստանի և Մեծ Բրիտանիայի երկարամյա վեճը մեկ այլ օրինակ է: Քանդակների զգալի մասը պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում, մինչդեռ Հունաստանը պահանջում է դրանց վերադարձն Աթենք՝ Պարթենոնի պատմական ու մշակութային միջավայր: Բրիտանական թանգարանի հոգաբարձուները, իրենց հերթին, պաշտպանում են քանդակները թանգարանի հավաքածուում պահելու և Լոնդոնում ցուցադրելու մոտեցումը՝ դրանք դիտարկելով որպես համաշխարհային մշակութային ժառանգության մաս: Այս վեճը վերաբերում է ոչ միայն մշակութային արժեքների գտնվելու վայրին և տնօրինմանը, այլև պատմական ժառանգության, դրա սկզբնական միջավայրի և ազգային հիշողության միջև կապի տարբեր ընկալումներին:

Կոսովոյի միջնադարյան հուշարձանների և Պարթենոնի քանդակների օրինակներն իրենց բնույթով տարբեր են: Առաջին դեպքում պատմական կոթողները պահպանվել են իրենց պատմական միջավայրում, սակայն այսօր գտնվում են Կոսովոյի տարածքում, իսկ երկրորդ դեպքում մշակութային ժառանգության կարևոր մասը պահպանվում է այլ երկրի թանգարանում, և դրա վերադարձը դարձել է երկարատև վեճի առարկա: Այդուհանդերձ, երկու օրինակներն էլ ցույց են տալիս մի կարևոր իրողություն. ժողովրդի պատմության և ինքնության հետ կապված մշակութային ժառանգությունը չի կորցնում իր նշանակությունը միայն այն պատճառով, որ դրա նյութական կրողները գտնվում են տվյալ ժողովրդի ազգային պետության ներկայիս սահմաններից դուրս:

Պատմամշակութային ժառանգության նշանակությունը և համապատասխան տարածքների նկատմամբ ներկայիս ինքնիշխանությունը տարբեր հարցեր են: Ժողովրդի պատմական ու մշակութային կապը որոշակի վայրի հետ կարող է պահպանվել՝ անկախ այդ վայրի ներկայիս պետական պատկանելությունից:

Հայկական պատմական փորձի դեպքում այս իրողությունն առանձնահատուկ նշանակություն ունի: Հայ ժողովրդի պատմական հայրենիքի աշխարհագրությունը չի համընկնում Հայաստանի Հանրապետության ներկայիս սահմանների հետ: Մեր պատմամշակութային ժառանգության բազմաթիվ կոթողներ տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով այսօր գտնվում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, սակայն շարունակում են պահպանել իրենց նշանակությունը հայ ժողովրդի հավաքական հիշողության մեջ:

Արարատը՝ ազգային հիշողության խորհրդանիշից մինչ պետական զինանշան

Հայ ժողովրդի պատմական գիտակցության մեջ Արարատը դարերի ընթացքում ձևավորված բազմաշերտ ազգային խորհրդանիշ է: Նրա շուրջ միահյուսվել են աստվածաշնչյան ավանդույթը, պատմական հայրենիքի մասին պատկերացումները և ազգային ինքնության ու մշակութային շարունակականության գիտակցումը:



Արարատի՝ որպես ազգային խորհրդանիշի ընկալման կարևոր ակունքներից մեկը աստվածաշնչյան ավանդույթն է: Ծննդոց գրքում Նոյյան տապանի հանգրվանը կապվում է «Արարատի լեռների» հետ: Հայոց պատմամշակութային ավանդույթում Նոյյան տապանի և Արարատի կապը դարերի ընթացքում ձեռք է բերել առանձնահատուկ նշանակություն՝ նպաստելով լեռան՝ որպես պատմական հիշողության և ազգային շարունակականության խորհրդանիշի ձևավորմանը:

Աստվածաշնչյան ծագումնաբանական ավանդույթն իր արտահայտությունն է գտել նաև հայ պատմագրության մեջ, մասնավորապես՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Խորենացու մատուցմամբ՝ Հայկը սերում էր Նոյի որդի Հաբեթի տոհմից, և հայ ժողովրդի ծագման մասին պատումը ներկայացվում էր աստվածաշնչյան ազգաբանության շրջանակում:

Արարատը նաև աշխարհագրական ու մշակութային առումով կապված է պատմական Հայաստանի հետ, ինչն այն դարձրել է պատմական հայրենիքի մասին հայ ժողովրդի պատկերացումների կարևոր խորհրդանիշներից մեկը:

Այս պատմական ու մշակութային շերտերի միաձուլման արդյունքում Արարատը ձեռք է բերել բազմաշերտ խորհրդանշական իմաստ: Բիբլիական լեռը դարձել է այս խորհրդանիշներից մեկը, որի միջոցով հայ ժողովուրդը ճանաչում ու իմաստավորում է իր պատմական հայրենիքի աշխարհագրությունը: Հատկապես Հայոց ցեղասպանությունից, հայրենազրկումից և Սփյուռքի ձևավորումից հետո Արարատը ձեռք է բերել նաև կորստի հիշողությունն ու պատմական հայրենիքի հետ չխզվող հոգեմտավոր կապը մարմնավորող նշանակություն:

Արարատի խորհրդանշական նշանակությունն իր պետական արտահայտությունն է ստացել Հայաստանի Հանրապետության զինանշանում: Հետևաբար դրա շուրջ ծավալվող բանավեճը դուրս է գալիս միայն պատմական հիշողության շրջանակից և անմիջականորեն առնչվում այն հարցին՝ ինչպես է ժամանակակից հայոց պետականությունը ներկայացնում իր պատմական ժառանգությունն ու կապը անցյալի հետ:

«Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի մասին» օրենքն ընդունվել է 1992 թվականի ապրիլի 19-ին: Ըստ դրա վերականգնվել է Հայաստանի Առաջին Հանրապետության՝ 1918–1920 թվականների զինանշանը, որի հեղինակներն էին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն ու նկարիչ Հակոբ Կոջոյանը:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս արքայական տոհմերի՝ Արտաշիսյանների, Արշակունիների, Բագրատունիների ու Ռուբինյանների զինանշանները: Վահանը պահում են առյուծն ու արծիվը, իսկ ներքևում պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն: Այս պատկերագրական համակարգը պատմական ժառանգության տարբեր շերտերը համադրում է ժամանակակից Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշի շրջանակում:

Զինանշանի այս կառուցվածքը կարևոր է ոչ միայն որպես պատկերագրական լուծում, այլև որպես պետականության մասին խորհրդանշական ուղերձ: 1991 թվականին անկախությունը վերականգնած Հայաստանը իր պետական խորհրդանիշում տեղ հատկացրեց ինչպես Արարատին ու Նոյյան տապանին, այնպես էլ պատմական Հայաստանի պետական ավանդույթները ներկայացնող արքայական տոհմերին: Այս ընտրությամբ ժամանակակից պետականությունը խորհրդանշական կապ հաստատեց նաև իր պատմական ժառանգության հետ:



Հատկանշական է, որ Արարատը, թեև ներկայում գտնվում է Թուրքիայի տարածքում, պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական զինանշանում: Արարատի պատկերումն ինքնին չի կարող դիտվել որպես Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջի արտահայտություն: Միաժամանակ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված սահմանների ընդունումը չի ենթադրում այդ սահմաններից դուրս գտնվող պատմական վայրերի նշանակության ժխտում հայ ժողովրդի պատմության և մշակութային հիշողության մեջ կամ դրանց հետ ունեցած պատմական կապի անտեսում: Հետևաբար Հայաստանի անվտանգության, խաղաղության և պետականության ամրապնդման անհրաժեշտությունը չի կարող ինքնին հիմք ծառայել Արարատի և ազգային մյուս խորհրդանիշների նշանակությունը նսեմացնելու համար:

Արարատի շուրջ ծավալվող բանավեճը չի կարելի դիտարկել սոսկ հուզական ընկալումների շրջանակում: Դրա խորքում շատ ավելի հիմնարար հանրային-քաղաքական հարց է. ինչպե՞ս են ներկա քաղաքական գործընթացները հարաբերվում ժողովրդի պատմության, մշակութային ժառանգության և հավաքական հիշողության հետ:

Ավելի որոշակի՝ Հայաստանի ինքնիշխանության ու անվտանգության ամրապնդումը պահանջո՞ւմ է արդյոք վերանայել ազգային ինքնության պատմական հիմքերը և սահմանափակել պատմական հիշողության ներկայությունը հանրային ու քաղաքական կյանքում, թե՞ հնարավոր է ամրապնդել պետականությունը՝ առանց պատմական ժառանգությունն ու ազգային խորհրդանիշները ներկա քաղաքական նպատակներին հակադրելու:

«Իրական Հայաստանի» գաղափարախոսությունը. պետականության ամրապնդման ուղի՞, թե՞ պատմական հիշողության վերաձևման փորձ

Հայաստանի գործող իշխանությունների առաջ քաշած «Իրական Հայաստանի» գաղափարախոսության քննադատությունը պետք է սկսել հենց նրանց հրապարակային ձևակերպումներից: Հատկապես խոսուն է այն հանգամանքը, որ իշխանության խոսույթում պատմական Հայաստանի և «Իրական Հայաստանի» գաղափարական հակադրումը դարձել է պետականության և ազգային ինքնության վերաբերյալ ավելի ընդգրկուն հայեցակարգի հիմք:

2023 թվականի հունիսի 15-ին Ազգային ժողովում ունեցած ելույթում Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության պետական զինանշանին, հարց բարձրացրեց, թե ինչ կապ ունեն Արարատի ու Նոյյան տապանի պատկերները, ինչպես նաև պատմական հայկական արքայական տոհմերի զինանշանները 1991 թվականին անկախությունը վերականգնած Հայաստանի Հանրապետության հետ: Նույն շրջանակում նա նաև հռետորական հարց հնչեցրեց. «Իրական Հայաստա՞նը» պետք է ծառայի՞ պատմական Հայաստանին, թե՞ պատմական Հայաստանը՝ «Իրական Հայաստանին»:

Առաջին հայացքից այդ հարցադրումը կարելի էր ընկալել որպես պատմական խորհրդանիշների նշանակությունը վերահիմաստավորելու առաջարկ: Սակայն 2024 թվականի ապրիլի 10-ի ելույթում Փաշինյանն արդեն ավելի հստակ ներկայացրեց իր և կառավարության քաղաքական մոտեցումների փոփոխությունը՝ հայտարարելով, որ պատմական Հայաստանն ու «Իրական Հայաստանը» ոչ միայն անհամատեղելի են, այլև կարող են հակասության մեջ մտնել և լրջագույն սպառնալիք դառնալ միմյանց համար: Այսպիսով, դրանց հարաբերությունը ներկայացվեց ոչ թե որպես պատմական ժառանգությունն ու ժամանակակից պետականությունը համադրելու խնդիր, այլ որպես ընտրություն՝ երկու միմյանց «բացառող» իրականությունների միջև:

2025 թվականի փետրվարի 19-ին Նիկոլ Փաշինյանի ներկայացրած «Իրական Հայաստանի գաղափարախոսության» նախագիծն այդ մոտեցմանը հաղորդեց առավել համակարգված բնույթ: Փաստաթղթում «Իրական Հայաստանը» նույնացվում է Հայաստանի Հանրապետության հետ, որի տարածքը ներկայացվում է 29.743 քառակուսի կիլոմետր (ի տարբերություն 29.800 քառակուսի կիլոմետր ցուցանիշի, որը Փաշինյանն օգտագործել էր 2023 թվականի իր հրապարակային ելույթներում): Գաղափարախոսության նախագծում առանցքային տեղ են զբաղեցնում հայրենիքի և պետության նույնացումը, հայրենասիրության կապը պետության շահերի, սահմանադրորեն ամրագրված իրավունքների ու պարտականությունների հետ, ինչպես նաև պետության՝ քաղաքացիների բարեկեցությունն ապահովելու գործառույթի ընդգծումը:

Այս մոտեցման հիմքում կա մի սկզբունք, որն ինքնին վիճարկելի չէ. պետությունը պետք է ծառայի իր քաղաքացիներին՝ ապահովելով նրանց անվտանգությունը, իրավունքների պաշտպանությունը, բարեկեցությունն ու արժանապատիվ կյանքի պայմանները: Նույնքան բնական է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է լինի հայ ժողովրդի ազգային պետությունը: Խնդիրն առաջանում է այն ժամանակ, երբ այս սկզբունքները մեկնաբանվում են այնպես, թե հայրե-

նիքի գաղափարը պետք է սահմանափակվի բացառապես պետության ներկայիս տարածքով, իսկ այդ սահմաններից դուրս գտնվող պատմական հայրենիքի հետ կապված հիշողությունն ու մշակութային կապերը սկսում են ներկայացվել որպես ներկա պետականությանն ու անվտանգությանը սպառնացող գործոններ:

Այս պարագայում առանցքային հարցն այն է, թե ինչ չափանիշներով են գնահատվում ժողովրդի պատմական հիշողության տարբեր շերտերն ու ազգային խորհրդանիշների նշանակությունը, և ինչ տեղ է հատկացվում դրանց՝ ժամանակակից հայոց պետականության մասին պատկերացումներում: Երբ այդ գնահատականների հիմքում դրվում է իշխանության առաջ մղած քաղաքական հայեցակարգը, վտանգ է առաջանում, որ ժողովրդի պատմական հիշողության նկատմամբ վերաբերմունքը կարող է պայմանավորվել քաղաքական նպատակահարմարությամբ. որոշ պատմական իրողություններ ու խորհրդանիշներ կարժևորվեն, իսկ մյուսների նշանակությունը կնսեմացվի, կամ դրանք դուրս կմղվեն հանրային ու քաղաքական օրակարգից:

Այս խնդիրը հատկապես սուր է Սփյուռքի պարագայում, որտեղ հայապահպանության և ազգային ինքնության շարունակականության կարևոր նախապայմաններից մեկը պատմական հիշողության սերնդեսերունդ փոխանցումն է: Սփյուռքահայ բազմաթիվ համայնքների համար պատմական հայրենիքի մասին հիշողությունը, Հայոց ցեղասպանության հիշատակը և ազգային խորհրդանիշների հետ հոգեմտավոր ու մշակութային կապերն ազգային պատկանելության գիտակցության ձևավորման ու պահպանման կարևոր հենասյուներ են: Այդ հիշողության ու կապերի միջոցով նոր սերունդները ճանաչում են իրենց պատմությունը, գիտակցում սեփական ազգային պատկանելությունը և պահպանում կապը Հայաստանի ու հայկական աշխարհի հետ:

Այս խորապատկերում «Իրական Հայաստանի» գաղափարախոսությունը Սփյուռքի համար լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Եթե ազգային ինքնության ընկալումը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքով, իսկ պատմական հայրենիքի հետ կապը քաղաքական խոսույթում ներկայացվում է որպես պետականությանն ու անվտանգությանը սպառնացող գործոն, ապա ինչ հետևանքներ կարող է ունենալ նման մոտեցումը սփյուռքահայ նոր սերունդների ազգային ինքնագիտակցության ձևավորման և պահպանման համար: Միթե վտանգ չի առաջանում, որ պատմական հիշողության առանցքային բաղադրիչներն աստիճանաբար կարժեզրկվեն, իսկ պատմական հայրենիքի հետ կապը կդիտարկվի ոչ թե որպես ազգային ինքնության կարևոր և անքակտելի մաս, այլ որպես անցյալի մնացորդ, որից անհրաժեշտ է հրաժարվել՝ ներկա քաղաքական առաջնահերթություններին համապատասխանելու համար:

2026 թվականի ապրիլի 24-ի ուղերձում Փաշինյանը հայտարարեց, որ պետք է դադարեցնել հայրենիք փնտրել Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված սահմաններից դուրս: Իսկ օգոստոսի 24-ին՝ Ազգային ժողովում Կառավարության 2026–2031 թվականների ծրագրի քննարկման ժամանակ, նա «Իրական Հայաստանի» գաղափարախոսությունը կապեց «Չորրորդ Հանրապետության» ձևավորման հետ՝ պնդելով, որ 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններով Հայաստանի քաղաքացիներն արտահայտել են իրենց աջակցությունն այդ գաղափարախոսությանը: Նույն ելույթում նա հայտարարեց նաև, որ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը չի լինելու մեր արտաքին քաղաքական օրակարգում»:



Այս հայտարարությունները միասին դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ խոսքը պատմական հիշողության, ազգային ինքնության և պետական քաղաքականության փոխհարաբերությունների արմատական վերանայման մասին է՝ մասնավորապես պատմական անցյալի և ազգային խորհրդանիշների դերի վերաիմաստավորման տեսանկյունից:

Ինչ նպատակ է հետապնդում պատմական հիշողության և ազգային ինքնության այս վերաձևումը: Իշխանության հրապարակային հայտարարություններում ներկայացվող հիմնավորումներից կարելի է առանձնացնել երեք հիմնական ուղղություն. պատմական պահանջները արտաքին քաղաքական օրակարգից դուրս մղելու և դրանց հետ կապված ռիսկերը բացառելու ձգտում, խաղաղության ու անվտանգության ապահովման հարցում Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված սահմանների և հարևանների հետ կարգավորված հարաբերությունների առաջնայնության հաստատում, ինչպես նաև հայրենասիրության վերաասիմանում՝ այն առավել սերտորեն կապելով գործող պետության, քաղաքացիության և քաղաքացու իրավունքների ու



պարտականությունների հետ:

Իշխանության կողմից հրապարակայնորեն ներկայացված նպատակները, սակայն, ինքնին չեն բացահայտում այդ քաղաքականության բոլոր հնարավոր հետևանքները: Չհայտարարված մտադրությունների մասին եզրակացությունները պետք է հիմնվեն որոշակի փաստերի վրա: Միաժամանակ հենց հրապարակայնորեն ներկայացված հայեցակարգն էլ հիմք է տալիս բարձրացնելու սկզբունքային հարց. խաղաղության և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է արդյոք պատմական հիշողության որոշ դրսևորումներ ներկայացնել որպես ժամանակակից պետականության համար սպառնալիք, թե հնարավոր է պահպանել այդ հիշողությունը՝ միաժամանակ ամրապնդելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու անվտանգությունը:

Այն, որ պետությունը պետք է լուծի ներկայի խնդիրները և կերտի ապագան, ինքնին վիճարկելի չէ: Սակայն այդ ապագան ինչո՞ւ պետք է կառուցվի սեփական պատմությանը հակադրվելով, այլ ոչ թե նրա վրա հենվելով:

Այս հակադրությունը հատկապես զգայուն դրսևորում է ստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում: Անշուշտ, Հայոց ցեղասպանության թեման, քաղաքական նպատակներից ելնելով, կարող է օգտագործվել այլ երկրների կողմից, և այդ հանգամանքը պետք է հաշվի առնել արտաքին քաղաքականություն մշակելիս: Սակայն այդ վտանգն ինքնին չի կարող հիմնավորել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցն արտաքին քաղաքական օրակարգից դուրս մղելը: Ցեղասպանության մասին պատմական ճշմարտության պահպանումը, դրա միջազգային ճանաչմանն ու հատուցմանն ուղղված հետևողական աշխատանքը և ցեղասպանությունների կանխարգելման միջազգային նախաձեռնություններին մասնակցությունը կարող են համադրվել Հայաստանի անվտանգության ապահովման և խաղաղության ձգտումների հետ: Ուստի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործընթացից հրաժարվելը խնդրի լուծում չէ: Անհրաժեշտ է շարունակել այդ ուղղությամբ հետևողական աշխատանքը և ներկայացնել պատմական ճշմարտությունը՝ միաժամանակ թույլ չտալով, որ ճանաչման գործընթացը վերածվի այլ երկրների ընթացիկ քաղաքական նպատակների սպասարկման միջոցի:

Խնդիրն այն է, որ իշխանության առաջ մղած հայեցակարգում խաղաղության և անվտանգության ապահովումը կապվում է պատմական հիշողության ու պատմական պահանջատիրության քաղաքական նշանակությունը վերացնելու, իսկ դրանց որոշ դրսևորումները քաղաքական օրակարգից դուրս մղելու հետ: Այս մոտեցման տրամաբանությամբ՝ պատմական հայրենիքի վերաբերյալ հարցերի և դրանց հետ կապված պահանջների քաղաքական կշռի վերացումը կարող է նպաստել արտաքին սպառնալիքների նվազեցմանը և Հայաստանի անվտանգության ամրապնդմանը: Սակայն պատմական հիշողության հանրային ու քաղաքական նշանակությունը վերացնելն ինքնին չի չեզոքացնում արտաքին սպառնալիքները և չի երաշխավորում հարևանների հետ խաղաղ ու կայուն հարաբերություններ: Անվտանգության ամուր հիմքերն են պաշտպանունակությունը, արդյունավետ պետական համակարգերը, հետևողական ու կանխատեսելի դիվանագիտությունը և փոխադարձ պարտավորությունների իրական կատարման վրա հիմնված հարաբերությունները: Հետևաբար հիմնավոր հարց է առաջանում. ինչո՞ւ է պատմական հիշողության և պահանջատիրության քաղաքական նշանակության վերացումը ներկայացվում որպես խաղաղության հասնելու անհրաժեշտ ուղի, երբ պատմական ժառանգության պահպանումը և Հայաստանի անվտանգության ու խաղաղության ապահովումը պարտադիր չէ, որ հակասեն միմյանց:

Կառուցել ապագան՝ պահպանելով պատմական հիշողությունը

Պատմական հիշողությունը հանրային կյանքից դուրս մղելու հետևանքները միանգամից տեսանելի չեն դառնում: Դրանք ժամանակի ընթացքում կարող են փոխել հասարակության վերաբերմունքը սեփական անցյալի նկատմամբ, խաթարել պատմական փորձի փոխանցումը սերնդից սերունդ և թուլացնել ազգային ինքնության պահպանման շարունակականությունը: Վտանգը միայն պատմության առանձին դրվագների մոռացությունը չէ, այլև այն կապի թուլացումը, որի շնորհիվ յուրաքանչյուր նոր սերունդ յուրացնում է նախորդների պատմական փորձը, արժևորում պատմական ժառանգությունը և գիտակցում իր տեղը հայ ժողովրդի պատմության մեջ:

Երբ պատմական անցյալը հանրային ու քաղաքական խոսույթում հիմնականում ներկայացվում է որպես ներկա խնդիրների կամ արտաքին սպառնալիքների աղբյուր, ձևավորվում է կեղծ երկընտրանք. կամ ընդունել իշխանության առաջ մղած գաղափարախոսությունը՝ հռչակված «կայուն և անշրջելի խաղաղության» հասնելու ակնկալիքով, կամ հավատարիմ մնալ սեփական պատմական հիշողությանը՝ իբր վտանգելով Հայաստանի պետականության ապա-



գան: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված սահմանների ընդունումն ու հարգումը, ինչպես նաև միջազգային պարտավորությունների կատարումը չեն ենթադրում ուրանալ այդ սահմաններից դուրս գտնվող պատմական հայրենիքի նշանակությունը, ազգային խորհրդանիշների արժեքը կամ պատմական իրադարձությունների հետ կապված հիշողությունը: Ժամանակակից պետության լիարժեք քաղաքացի լինելն ու սեփական ժողովրդի պատմական ժառանգության հետ կապը պահպանելը միմյանց չեն հակասում և չպետք է ներկայացվեն որպես միմյանց բացառող այլընտրանքներ:

Հայաստանին անհրաժեշտ է ազգային այնպիսի տեսլական, որը կհամադրի ժամանակակից պետականության ամրապնդումը, երկրի անվտանգությունն ու զարգացումը պատմական հիշողության և ազգային ինքնության պահպանման հետ: Այդ տեսլականը պետք է հնարավորություն տա քաղելու անցյալի փորձից անհրաժեշտ դասերը, պաշտպանելու ազգային արժեքները և հետևողականորեն առաջ մղելու պատմական արդարության հարցերը՝ միաժամանակ իրատեսորեն գնահատելով ներկա մարտահրավերներն ու դրանց դիմակայելու քաղաքական և դիվանագիտական հնարավորությունները: Ապագայի կառուցման անհրաժեշտությունը չի կարող արդարացում դառնալ սեփական պատմությունը խեղաթյուրելու, պատմական փաստերը քաղաքական նպատակներին համապատասխան վերաշարադրելու կամ ազգային ինքնությունն արհեստականորեն վերաձևելու համար:

Պատմական հիշողության և ազգային խորհրդանիշների շուրջ ծավալվող բանավեճի խորքային իմաստը հենց այստեղ է: Դրանք, անշուշտ, չեն կարող փոխարինել պետականաշինության չընդհատվող գործընթացին, երկրի պաշտպանունակությանը կամ արդյունավետ և պատասխանատու կառավարմանը: Սակայն կարող են դրանց հաղորդել պատմագաղափարական հենք և արժեքային ուղղվածություն՝ դրանք կապելով ազգային ինքնության ու պատմական շարունակականության գիտակցության հետ: Այս իմաստով պատմական հիշողությունը և ազգային խորհրդանիշները ոչ թե փոխարինում են պետականության նյութական ու համակարգային հիմքերին, այլ իմաստավորում են դրանք՝ միաժամանակ նպաստելով ազգային նպատակների շուրջ հասարակական համախմբմանը:

Հայաստանի Հանրապետության կենսունակությունն ու ապագան պայմանավորված են ոչ միայն ներկա մարտահրավերներին դիմակայելու կարողությամբ, այլև այն արժեքային հիմքերով ու պատմական փորձով, որոնք հասարակությունը պահպանում և փոխանցում է հաջորդ սերունդներին: Պետության ամրությունը չի կարող հիմնվել սեփական ժողովրդի պատմական հիշողության ժխտման կամ նսեմացման վրա: Այն դրսևորվում է նաև պատմական ժառանգությունը գիտակցելու, ազգային իրավունքների և պատմական արդարության հարցերը հետևողականորեն առաջ մղելու, դրանք ներկա իրողությունների ու պետականության խնդիրների հետ համադրելու կարողությամբ:

Պատմական հիշողության և ազգային խորհրդանիշների հետ հոգեմտավոր կապի պահպանումը չի նշանակում ապրել անցյալով կամ անտեսել ներկայի մարտահրավերները: Դա նշանակում է սեփական պատմությունն ու ժառանգությունը դիտարկել ոչ թե որպես անցյալից մնացած բեռ, այլ որպես ազգային շարունակականության պահպանման և ապագան կերտելու կարևոր հենարաններ:

Ի վերջո, հայ ժողովրդի ապագան չպետք է ներկայացվի որպես ընտրություն պետականության և պատմական հիշողության միջև: Պետության ապագան կառուցելու անհրաժեշտությունը չի կարող արդարացում դառնալ սեփական պատմությունը խեղաթյուրելու, պատմական փաստերը քաղաքական նպատակներին համապատասխան վերաշարադրելու կամ ազգային հիշողությունը արժեզրկելու համար:

Միացումից անկախացում: Միջնորդական նախաձեռնությունները: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության դիրքորոշումները և արմատական փոփոխությունները ԼՂՀ իշխանական համակարգում (1993 թ. ապրիլ – հունիս ամիսներին)

Տարոն Վլադիկի Հակոբյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, դասավանդում է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում

1993 թ. հունիսի 11-ին Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության (ԼՂՀ) առաջին գումարման Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահության պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը նամակ հղեց Մարիո Ռաֆայելիին, ուր ասվում էր. «Հարգարժան պարոն Ռաֆայելի, Ձեր նամակի «Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության խորհրդի (ԱԽ) N 822/93 բանաձևի իրականացման ժամանակացույցի» քննարկումը ԼՂՀ ԳԽ նախագահության ընդլայնված նիստում լուրջ տարաձայնություններ առաջացրեց ԼՂՀ ղեկավարության և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարական կազմի միջև, ինչը, փաստորեն, վերաճեց ներքաղաքական ճգնաժամի: Իրավիճակը կարող է դառնալ անվերահսկելի: Մենք անում ենք հնարավոր ամեն ինչ՝ առճակատումը կանխելու և բացատրելու քննարկման ներկայացված փաստաթղթերի դրական կողմերը: Առարկությունները հիմնված են ԼՂՀ ժողովրդի հերթական անգամ խաբված լինելու մտավախության վրա:

Անհրաժեշտ են ժամանակ և ջանքեր համոզելու մարդկանց, որոնց հոգեբանությունը ձևավորվել է Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում, որ նպատակահարմար և խելամիտ են կրակի դադարեցմանն ուղղված առաջարկները: Քանի որ վերջնական որոշում ընդունված չէ, անհրաժեշտություն է առաջացել Ձեր ներկայացրած փաստաթղթերը լրացուցիչ քննարկելու:

Մենք ապավինում ենք Ձեր և իննյակի անդամ երկրների ներկայացուցիչների կողմից ԼՂՀ ներքաղաքական իրավիճակի ողջ բարդության ընկալմանը և դրա կայունության համար Ձեր շահագրգռվածությանը:

Գտնում եմ, որ մոտ օրերս հնարավոր է ԼՂՀ վերջնական դիրքորոշման որոշակիացում»:[1]

Երևի Ստեփանակերտն իր պատասխանը պայմանավորում էր Ադրբեջանի պատասխանով՝ օգտվելով «Ժամանակացույցի» ստորագրման ժամկետի ընձեռած ժամանակային խուսանավումների հնարավորությունից: Ադրբեջանի մերժողական պատասխանի դեպքում հնարավոր էր նախաձեռնությանը դրական պատասխան տալ՝ հաշվի առնելով դրա վտանգավորությունը:



Սակայն Երևանում այս պատասխանը բացահայտ դժգոհություն առաջացրեց, բայց ՀՀ ԱԳ առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանը պայմանավորվածություն ձեռք բերեց Իտալիայից Մինսկի խմբի նախագահ Մարիո դե Սիկայի, իսկ հետո Մարիո Ռաֆայելիի հետ ղարաբաղյան պատասխանի հետաձգման վերաբերյալ:[2]

Նման պայմաններում արտաքին ճնշումների ազդեցության տակ Հայաստանի Հանրապետության իշխանությունները փորձում էին ամեն գնով ստանալ Ղարաբաղի դրական պատասխանը, և ահա Երևանը հանդես եկավ հանկարծակի պահանջով, ըստ որի ԼՂՀ ղեկավարները, ԳԽ նախագահության բոլոր անդամների հետ, պետք է ժամանեին Գորիս՝ հանդիպելու Հայաստանի ղեկավարության հետ: Գորիս ժամանեցին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով անձնական ներկայացուցիչ Դավիթ Շահնազարյանը, ԼՂՀ ԳԽ և Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) անդամներ: Հանդիպումը կայացավ 1993 թ. հունիսի 12-ին:[3] Հանդիպման հիմնական նպատակն էր ամեն գնով սիրաշահել ԼՂՀ ԳԽ նախագահության



անդամներին, որպեսզի նրանք ստորագրեն նշված փաստաթուղթը:

Սակայն ՀՀ նախագահի հույսերը չիրականացան՝ Գորիսում ԼՂՀ ղեկավարներից նա դրական պատասխան չստացավ: Հանդիպման ժամանակ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատարը բանավոր համաձայնություն տվեց ստորագրելու փաստաթուղթը, բայց վերջում կտրուկ հրաժարվեց է և ուղևորվեց Ստեփանակերտ:

Հունիսի 12-ի երեկոյան Ժիրայր Լիպարիտյանը տեղեկացրեց Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) դեսպան Վլադիմիր Ստուպիշինին, որ Ղարաբաղի երկու ղեկավարներն էլ համաձայնվել են ստորագրել «ժամանակացույցը», բայց որոշել են այդ անել Ստեփանակերտում:[4]

Անհրաժեշտ է նշել, որ Գորիսում ունեցած անհաջող հանդիպումից հետո մարտի 14-ին ՀՀ նախագահը հանդես եկավ ԼՂՀ իշխանություններին քննադատող հետևյալ հայտարարությամբ. «ՀՀ-ն իր խորին մտահոգությունն է հայտնում վճռական պահերին որոշում կայացնելու, պատասխանատվություն ստանձնելու հարցում ԼՂ իշխանությունների դրսևորված անկարողության, ինչպես նաև զինադադար հաստատելու բացառիկ պատեհությունը չիրագործելու համար:

ՀՀ-ն վստահ է, սակայն, որ ԼՂ իշխանությունները կկարողանան բարձր կանգնել երկրորդական ու նախաձեռնության հետ չառնչվող նկատառումներից՝ դրսևորելով իրենց իբրև իսկական ղեկավարներ, և, քանի դեռ ուշ չէ, անհրաժեշտ որոշում կայացնել ի շահ ԼՂ ժողովրդի անվտանգության ու խաղաղության՝ գիտակցելով սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ ու պատմության առջև իրենց պատասխանատվությունը»:[5]

Այնուհետև նույն օրը կեսօրից հետո ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանկարծակի ուղղաթիռով ժամանեց Ստեփանակերտ: Դա նրա առաջին պաշտոնական այցն էր ԼՂՀ: Նախագահը պահանջեց շտապ հրավիրել ԳԽ նախագահության նիստ: Նա իր հետ բերել էր մի կարևոր գաղտնի քաղաքական փաստաթղթի նախագիծ, որը կոչվում էր «Պայմանագիր ՀՀ և ԼՂՀ միջև»: Այդ պայմանագրի նախագիծը կազմվել էր ՀՀ նախագահի կողմից ուղղաթիռում Ստեփանակերտ ուղևորվելու ճանապարհին: Այն պետք է ստորագրեին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը և ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը կողմնակից էր փաստաթղթի ստորագրմանը: Ինչ վերաբերում էր բանակի հրամանատարությանը, ապա նա հայտարարել էր, որ կընդունի իշխանության ցանկացած որոշում:[6]

Նշենք, որ ՀՀ նախագահը «ԼՂՀ»-ի փոխարեն պայմանագրի նախագծում նշել էր «ԼՂ», սակայն ԼՂՀ ԳԽ քարտուղար Վլադիկ Հակոբյանի միջամտությամբ այն վերափոխվեց «ԼՂՀ»-ի, ինչպես նաև փոփոխվեցին պայմանագրի որոշ դրույթներ:

Պայմանագրում մոտավորապես նշված էր որ, ԼՂՀ-ն, վստահելով միջազգային հանրության, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և մասնավորապես ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի երաշխիքներին՝ համաձայնում է Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության խորհրդաժողովի (ԵԱՀԽ Մինսկի խմբի) խաղաղարար նախաձեռնությանը: Պարտավորվում է ճշգրտորեն կատարել խաղաղարար ծրագրի իրեն վերաբերող բոլոր պահանջները և իր կողմից թույլ չտալ որևէ խախտում, պարտավորվում է պատժել ԼՂ իշխանությունների կողմից ծրագրի կատարմանն ուղղված որոշումների ու հրամանների բոլոր խախտողներին:

ՀՀ-ն պարտավորվում է. ստանձնել խաղաղարար ծրագրի կատարման և ԼՂ բնակչության անվտան-



գության երաշխավորի դեր: ԼՂ բնակչության ֆիզիկական գոյության, բռնի տեղահանության վտանգի դեպքում գործի դնել իր բոլոր, այդ թվում՝ անմիջական ռազմական միջամտության հնարավորությունները: Հետագա բանակցություններում բացառել Լաչինը Ադրբեջանին զիջելու հնարավորությունը, ինչպես նաև բացառել ԼՂ զինված ուժերի ապառազմականացման և զինաթափման հնարավորությունը: Հետագա բանակցություններում հետևողականորեն և վճռականությամբ պայքարել ԼՂ մասնակցության, ընդունելի իրավական կարգավիճակ ձեռք բերելու համար:[7]

Հունիսի 14-ի երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության և ՊՊԿ անդամների համատեղ նիստը: Նախկին ԼՂՀ ԳԽ մամլո քարտուղար Գեղամ Բաղդասարյանի և ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ անդամների տեղեկությունների համաձայն ՀՀ նախագահը փորձել է համոզել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամներին, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրս բերումը Ռուսաստանի դիվանագիտական ճնշման հետևանք է, և այն չիրականացնելու դեպքում Հայաստանը կկորցնի Ռուսաստանին, որպես դաշնակցի, ինչը կարող է ճակատագրական լինել և՛ Ղարաբաղի, և՛ Հայաստանի համար: ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործվել են նաև այնպիսի փաստարկներ, որոնք դուրս են դիվանագիտության և բանավեճերի ընդունված սահմաններից:[8] Տարօրինակ էր ՀՀ իշխանությունների պահվածքը, որոնք փաստորեն փորձում էին Քելբաջարի հանձնման պատասխանատվությունն ամբողջովին գցել Ղարաբաղի իշխանությունների վրա: Ինչպես վկայում է ԼՂՀ նախկին ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը, Հայաստանը հետ էր քաշվում Քելբաջարից և հանձնելու դերը դնում Ղարաբաղի վրա:[9]

Այդ տհաճ ներկայացումն ունեցավ հետևյալ վախճանը. ի պատասխան Լևոն Տեր-Պետրոսյանի ճնշումների, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը հրաժարվեց ստորագրել և հրաժարական տվեց: Նախագահությունն ընդունեց նրա հրաժարականը, և «ԼՂՀ ԳԽ մասին» օրենքի համաձայն ԳԽ նախագահի պարտականությունները մինչև ԳԽ նստաշրջանը դրվեցին նախագահի առաջին տեղակալի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանի վրա:[10]

ԼՂՀ ԳԽ նախագահի նոր պաշտոնակատարը ստորագրեց «Անհապաղ միջոցառումների իրականացման ժամանակացույցը»: Այնուհետև այդ փաստաթղթին կից նամակով դիմեց ԵԱՀԽ Մինսկի խմբի խորհրդաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելիին, ուր ասվում էր. «Նախ և առաջ կցանկանայի մեկ անգամ ևս հավաստել ԼՂՀ ղեկավարության խաղաղության ձգտումը և հավատարմությունը միջազգային ընկերակցության խաղաղարար նախաձեռնությանը: Հաշվի առնելով 9 երկրների նախաձեռնության առնչությամբ ԼՂՀ-ում սրված իրավիճակը, ինչպես նաև դրանով թելադրված իշխանության փոփոխումը հանրապետությունում, որի հետևանքով մի քանի ստորաբաժանումներ դուրս են եկել վերահսկողությունից, առաջարկում ենք միջոցառումների ներկայացված ժամանակացույցի ժամկետը երկարաձգել մեկ ամսով: Այդ երկարաձգումը մեզ հնարավորություն կտա կայունացնել իրավիճակը և ապահովել ստանձնած պարտավորությունների կատարումը: Դրա հետ մեկտեղ, մտահոգության տեղիք է տալիս խիստ պայթյունավտանգ իրադրությունը, որը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Նկատի առնելով, որ ԼՂՀ հարակից Ադրբեջանի շրջանները վերահսկվում են զինված ընդդիմության կողմից, որը մարտական գործողություններ է վարում կառավարական զորքերի դեմ, խնդրում եմ ԵԱՀԽ հավաստումը, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստ է և ի զորու է ապահովել Մինսկի 9 երկրների նախաձեռնության իրականացման ուղղությամբ իր ստանձնած պարտավորությունների կատարումը: Հուսով եմ. որ համատեղ ջանքերով մենք կհասնենք երկար սպասված խաղաղությանը»:[11]

Ստեփանակերտ կատարած ուղևորության արդյունքներից գոհացած՝ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Երևան վերադառնալուց հետո անմիջապես շնորհավորական հեռագիր ուղարկեց ԼՂՀ ԳԽ նախագահի նոր պաշտոնակատար Կարեն Բաբուրյանին, որում ասված էր. «…ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնում Ձեր առաջին գործողությունները ցույց են տալիս Ձեր քաղաքական հասունությունը, ինչպես և Արցախի ժողովրդի ճակատագրական պահին պատասխանատվությունը իր վրա վերցնելու անձնական համարձակությունը… »:[12]

Հարկ է նկատել, որ ՀՀ նախագահը նմանատիպ հեռագիր երբեք չի հղել ԼՂՀ ԳԽ նախկին նախագահ Արթուր Մկրտչյանին կամ նրանից հետո այդ պաշտոնն ստանձնած Գեորգի Պետրոսյանին:

Այդ հեռագրին հաջորդեց ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանին պաշտոնական այցով Հայաստան ժամանելու հրավերը: Երկօրյա այցի ընթացքում Կ. Բաբուրյանը հանդիպումներ ունեցավ ՀՀ փոխնախագահի, ԳԽ նախագահի, վարչապետի, արտգործնախարարի և տեղակալի,

ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի հետ, իսկ հունիսի 23-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահի նոր պաշտոնակատարի և ՀՀ նախագահի հանդիպումը:[13] Հայաստանում Կարեն Բաբուրյանն արժանացավ ջերմ ընդունելության, և այդպիսով, հիմք դրվեց ՀՀ և ԼՂՀ իշխանությունների միջև որակական նոր հարաբերությունների:[14]

Մինչդեռ հետագայում հայտնի դարձավ, որ հունիսի 15-ին պաշտոնական Բաքուն Մոսկվայում Ադրբեջանի դեսպանի միջոցով շնորհակալություն էր հայտնել Լևոն Տեր-Պետրոսյանին՝ Ստեփանակերտ կատարած այցելության և արձանագրած արդյունքների համար:[15]

Պատմագրության մեջ հանիրավի կերպով չի բարձրաձայնվում այն պատմական ճշմարտության մասին, որ ԼՂՀ ԳԽ ընտրություններում հաղթանակեցին և իշխանության եկան պաշտոնական Երևանի համար կատարելապես անցանկալի ուժեր, ինչը ՀՀ իշխանությունների, հատկապես նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի համար անսպասելի էին: Ամենայն հավանականությամբ, նա գտնում էր, որ Արցախը կարող է որոշակի քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերել և մի կողմ կանգնել Հայաստանի ներքին կյանքից, իսկ արտաքին քաղաքական ասպարեզում՝ իր պահանջները թելադրել որպես անկախ երրորդ կողմ: Այսինքն՝ ՀՀ իշխանությունները կորցնում էին անչափ կարևոր խաղաքարտ, որն անհրաժեշտության դեպքում կարող էր ներքին կայունության գրավական լինել: ՀՀ նախագահը նաև երկյուղ ուներ, որ այդ խաղաքարտը կարող է օգտագործել ընդդիմությունը: Բացի այդ, պաշտոնական Երևանը կարող էր զրկվել արցախա - ադրբեջանական հակամարտության, ինչպես նաև Արցախյան շարժման մեջ առաջնորդող դերից:

Փաստորեն երկարատև պայքարից հետո, օգտագործելով հարմար պահը և լծակները, ՀՀ նախագահը կարողացավ ԼՂՀ-ում վերջնականապես կատարել իշխանափոխություն և իշխանության բերել իր համար ընդունելի ուժերի:

Հետագայում ԻՊՈՒԽ-ի հաջողություններին զուգընթաց ասպարեզ եկան նոր՝ ՄԱԿ-ի ԱԽ 853-րդ, 854-րդ. 874-րդ և 844-րդ ադրբեջանամետ բանաձևերը՝ հայկական ուժերի կողմից ազատագրված տարածքները վերադարձնելու պահանջով:

Սակայն, ի տարբերություն ՀՀ-ի և ԼՂՀ-ի, որոնք տվեցին իրենց համաձայնությունը, Ադրբեջանը մերժեց այդ բանաձևը:[16]

Բանակցային գործընթացի անհաջողությունը պայմանավորված էր նրանով, որ հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերից և միջազգային մակարդակով ընդունված փաստաթղթերից ոչ մեկը չէր արտացոլում ղարաբաղյան հակամարտության էությունը: Դրանում ոչ վերջին դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ տարածաշրջանում ստեղծվել էր միջնորդների մրցակցության մթնոլորտ, և նրանք, ջանքերը միավորելու փոխարեն, ամեն կերպ փորձում



էին շրջանցել մեկը մյուսին՝ իրենց համար ձեռնտու տարբերակ ընդունել տալու նպատակով: Սակայն ԼՂՀ ԻՊՈՒԽ-ի հաջողությունները և Ռուսաստանի միջնորդության ակտիվացումը հանգեցրին հակամարտության գոտում տևական հրադադարի հաստատմանը: Դրան նպաստեց այն, որ Ադրբեջանի իշխանությունները, վախենալով նոր իշխանափոխության, քաղաքական ճգնաժամի, հետևաբար՝ ռազմական խորտակիչ պարտության վտանգից, ինչպես նաև մի շարք այլ գործոնների ազդեցության տակ ստիպված էին համաձայնել 1994 թ. մայիսյան հրադադարի պայմաններին:

(Շարունակելի, սկիզբը՝ «Դրօշակ» 2026 2, 6, 7, 8, 9)

Հղումներ

1 Տես «Երկիր», 12.06.1993:
2 Տես Ступишин В., Моя миссия в Армению. Мос. 2001, стр. 219: (այսուհետև՝ Վ. Ստուպիշին):
3 Տես Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Եր., 2011, էջ 177:
4 Տես Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 219:
5 Տես «Երկիր», 15.06.1993:
6 Տես Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 179:
7 Նույն տեղում, էջ 180:
8 Տես «Երկիր», 15.06.1993:
9 Տես Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 181:
10 Տես «Արցախ», 17.06.1993:
11 Տես Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 694:
12 Տես «Հայաստանի Հանրապետություն», 18.06.1993:
13 Տես «Երկիր», 24.06.1993:
14 Տես «Երկիր», 26.06.1993:
15 Տես Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը. 1991-1994 թթ., Եր., 2004, Էր 86:
16 Տես «Ազգ», 30.11.1993:

Տոն սրբոց թարգմանչաց

Արտավազդ Նազարյան
Բանաստեղծ թարգմանիչ, հրապարակախոս

Նույնիսկ մարտնչող անաստվածության տարիներին ոչ մեկը չէր կարող կտրել այն բազմաթիվ ուխտավորների ճանապարհը, որ հոկտեմբերյան մի օր Արագածոտնի տարբեր բնակավայրերից, երբեմն նաև ոտքով, ընթանում էին դեպի Օշական՝ երկյուղածորեն սիրո ու հարգանքի տուրք մատուցելու հայ գրերի մեծանուն ստեղծող Մեսրոպ Մաշտոցի հիշատակին: Եվ այդ գյուղի եկեղեցու բակում սկսվում էր մեծ տոնախմբություն, որին մարդիկ պարզ ու որոշ անվանում էին տալիս՝ «Օշականի ուխտ»:

Հասնում էին երեկոյան, երբ եկեղեցու պատի արևի ժամացույցը ցույց էր տալիս օրվա ավարտը: Հնչում էին զանգերը և նախատոնակի առաջին շարականը՝ Հովհաննես Սարկավագի «Ողք զարդարեցին»-ը թևածում էր եկեղեցու կամարների տակ: Ուխտավորները իջնում էին սրբի դամբանախուց, ծնրադրում նրա պարզ շիրմաքարի առջև, հայցում նրա բարեխոսությունը առ Աստված՝ իրենց և իրենց երկրի խաղաղ, բարեկեցիկ ու արգասաբեր կյանքի համար: Այնուհետև ամբողջ գիշեր նրանք անց էին կացնում եկեղեցու հատակին նստած կամ ծնկած, հանապազ աղոթքներով և մոմավառությամբ:

Իսկ տոնը Հայաստանյայց եկեղեցու տոնացույցում կրում է «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց» անվանումը: Այն ուխտագնացությամբ էին նշում ամեն տարի, անկախ նրանից, որ խորհրդային պաշտոնյա այրերը խեթ-խեթ էին նայում դեպի եկեղեցի ընթացող բազմություններին, անկախ այն բանից, թե ինչ վիճակի մեջ էր գտնվում եկեղեցական շենքն ու նրա շրջակայքը, և կմ՛ արդյոք քահանա եկեղեցում, որ կարգ ու ծես կատարեր բազմաթիվ ուխտավորների ու հավատացյալների համար...

Հիմա դժվար է ասել, թե երբ է եկեղեցու տոնացույցում ներմուծվել և հաստատվել Սրբոց Թարգմանչաց տոնը: Սակայն այդ տոնը կոչված է պանծացնելու նրանց հիշատակը, ովքեր 5-րդ դարում 36 տառանշաններ ընծայեցին հայոց աշխարհին, սկզբնավորեցին հայ գիրն ու գրչությունը, ամրակայեցին այն խարիսխը, որ դարերով մեր ինքնության, մեր գոյատևման երաշխիքը դարձավ: Քրիստոնեության ընդունումից ի վեր նոր օծված վանքերում ու եկեղեցիներում արմատավորվեց կանոնավոր ծիսական-քարոզչական կյանքը, որի ընթացքում հոգևորականության կարևորագույն խնդիրը Սուրբ Գրքի ուսուցանումն էր: Գրքի ընթերցվածքները հունարեն կամ ասորերեն էին, ուստի հոգևորական աստիճան ունեցող մեկ այլ անձ, որին անվանում էին «թարգմանիչ» պատվավոր տիտղոսով (հունարեն՝ հերմենևտ), Աստվածաշնչի այդ հատվածները համընթաց թարգմանում էր ժողովրդին հասկանալի հայերեն լեզվով և



օժտում մեկնություններով: Գրերի գյուտից հետո այդ ավանդույթը բանավորից նոր կերպ առավ՝ դարձավ գրավոր:

Թարգմանիչ լինել 5-րդ դարում չէր նշանակում լինել միայն օտար տեքստերը հայերեն թարգմանողներ. նրանք միաժամանակ ուսուցիչներ էին, պատմիչներ, փիլիսոփաներ, հոգևոր առաջնորդներ և ազգային ինքնության կերտողներ: Ահա թե ինչու այդ զարմանալի շնորհներով «զարդարեալ» մեծ անհատականությունները դարձան հիմնադիրն ու արարողը հայոց Ոսկեդարի: Թարգմանչաց շարժման առաջամարտիկները հայ գրերի ստեղծող ու դպրոցական գործի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցն էր, գրերի գյուտի գլխավոր հովանավոր ու Աստվածաշնչի թարգմանության ոգեշնչող Սահակ Պարթևը: Սրբոց Թարգմանչաց տոնին, ըստ եկեղեցական կանոնի, այդ սրբադասված մեծությունների հետ միասին հիշատակվում են նաև նրանց ավագ և կրտսեր աշակերտները՝ Մաշտոցի առաջին կենսագիր Կորյունը, պատմահայր Մովսես Խորենացին և պատմիչ Ղազար Փարպեցին, իմաստասերներ Եզնիկ Կողբացին և Դավիթ Անհաղթը, ինչպես նաև ավելի ուշ շրջանի մեծ լուսավորիչներ Գրիգոր Նարեկացին և Ներսես Շնորհալին:

Թարգմանչաց սերնդի օրոք ի կատար ածվեց Սուրբ գրքի ամբողջական թարգմանությունը: Հայերենը



Հող Հացեկացից՝ Օշականի համար, հեռվում՝ Մաշտոցի ծննդավայրն է՝ թուրքական դպրոցով

քրիստոնյա աշխարհի միակ լեզուն է, որ այդ մատյանը կոչում է «շունչն Աստծոյ»՝ Աստվածաշունչ: Դեռևս 16-րդ դարում եվրոպացի գիտնականները հայերեն Աստվածաշունչն անվանեցին «Թագուհի թարգմանությանց» (Queen of Translations), ընդգծելով որ այն կատարված է արտակարգ բարձր ճշգրտությամբ և գեղարվեստական կատարելությամբ:

Թարգմանչաց հոգևոր մշակութային հզոր շարժումն անկրկնելի երևույթ է հայոց պատմության մեջ: Այն դրեց հայ ազգային ինքնուրույն գրականության և պատմագրության, փիլիսոփայության և աստվածաբանության, ճարտարապետության և հոգևոր երաժշտության հիմքերը: Հայոց գրերի ստեղծմամբ գրեթե միաժամանակ սկզբնավորվեց հայ դպրությունն ու մանկակրթությունը: Պետական գրագրությունները, եկեղեցական արարողությունները, քարերի վրա փորագրվող արձանագրությունները դարձան հայալեզու: Թարգմանչաց քաղաքակրթիչ առաքելության ի կատար ածմամբ ստեղծվեց և հարատևեց ինքնատիպ մի մշակույթ, մի հզոր ավանդություն, ինքնության պաշտպանության մի անխորտակելի վահան, որ կարողացավ ետ վանել ճակատագրի դաժան փորձությունները և առաջնորդել ժողովրդին դժվարին ու երբեմն նաև աղետաբեր դարերի միջով:

Հայ թարգմանական գրականությունը չափազանց հարուստ է: Այն ընդգրկում է ծիսական, հայրենագիտական, վկայաբանական, վարքագրական ու պատմագրական մեծաքանակ երկերի ու աշխատությունների հայերենացված նշանավոր հուշարձաններ: Թարգմանչաց շարժման ավանդույթները անընդհատաբար շարունակվել են նաև հետագա դարերում: Իր սկզբնավորումից ի վեր Թարգմանչաց շարժումը խթանել է լուսավորականության, կրթության, գիտության, լեզվաշինության, արմատավորվող նոր գաղափարների զարգացմանը: Գրերի գյուտը և թարգմանչական շարժումը հայ ժողովրդին տվեցին հոգևոր-մշակութային պատվար՝ պահելու և պահպանելու իր ազգային ինքնությունն ու լեզուն՝ անգամ պետականության կորստի դժնդակ ժամանակներում:

Հայ եկեղեցու տոնացույցում Սուրբ Թարգմանիչներին երկու հիշատակության օր է սահմանված: Նրանցից առաջինը նշվում է ամռանը՝ Հոգեգալստյան 4-րդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը, և նվիրված է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հիշատակին: Աշնանային տոնը՝ բուն Թարգմանչաց տոնը, ինչպես արդեն ասել ենք, նշվում է հոկտեմբեր ամսին, Խաչվերացի 4-րդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը: Այդ տոնախմբությամբ արդեն փառաբանվում են բոլոր թարգմանիչները՝ սկսած Սահակից - Մաշտոցից մինչև Նարեկացի և Շնորհալի:

Անցյալ դարի 60-ական թվականներին Հայաստանում լույս տեսնող երիտասարդական թերթերից մեկը հանդես եկավ եկեղեցական տոնացույցի սրբոց Թարգմանչաց տոնը համաժողովրդական տոնախմբությամբ նշելու առաջարկությամբ: Հայաստանի գրողների միությունը ու այն ժամանակվա խորհրդային կառավարությունը դրականորեն արձագանքեցին նախաձեռնությանը, և արդեն տարիներ շարունակ գրականության այդ տոնը դարձել է անխախտ ավանդույթ: Հայաստանն այսօր միակ երկիրն է, որտեղ թարգմանչական արվեստի տոնը մեծ տոնակատարությամբ նշում են և՛ եկեղեցին, և՛ պետությունը, և՛, իհարկե, ժողովուրդը:

Տոնի առթիվ Օշականյան սրբավայր են այցելում հարյուրավոր ուխտավորներ, նրանց շարքերում՝ նաև անվանի գրողներ ու թարգմանիչներ, մշակութային գործիչներ, այստեղ տեղի են ունեցել նոր լույս տեսած գրքերի, թարգմանական գրականության քննարկումներ և շնորհանդեսներ: Տարբեր տարիների Օշականի սրբավայր են այցելել այնպիսի նշանավոր



Սբ Մեսրոպ Մաշտոց դպրատունը և եկեղեցին



Թարգմանչաց տոնը 1975 թվականին, Օշական

գրողներ, ինչպիսիք են Կիմ Բակշին, Յուննա Մորիցը, Փիթեր Քաուին, Ջեյմս Ռասելը, Ժան Պիեռ Մահեն, Ահմադ Նուրիզադեն, Սերգեյ Միխալկովը, Պաուլո Կոելյոն, Եվգենի Եվտուշենկոն, Մորիս Չակլայսը, գրեթե բոլոր հայ գրողները, թարգմանիչները, բանաստեղծները: Տոնն ամեն տարի նշվում է Հայաստանի և Սփյուռքի հայկական դպրոցներում, գիտական ու մշակութային հաստատություններում՝ որպես հայ գրի, դպրության, լեզվի և թարգմանական արվեստի տոն:

1997 թվականի հոկտեմբերի 28-ին Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կողքին դեռ նախանցած դարում դասական ճարտարապետական ոճով կառուցված շինությունը Սբ Էջմիածնի հովանու ներքո իր դռները բացեց որպես գիտամշակութային կենտրոն: Այն ստացավ Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատուն անվանումը: Ամենայն Հայոց հոգելույս Կաթողիկոս Գարեգին Ա-ի խորհրդով 1999 թվականից սկսած մինչև 2008 թիվը ամեն տարի, ճիշտ սրբոց Թարգմանչաց տոնի օրը, Դպրատանը գումարվել են Մաշտոցյան ընթերցումներ: Այդ ընթերցումներին հրապարակ են բերվել մաշտոցագիտական և հայագիտական տարբեր խնդիրների նվիրված գիտական աշխատանքներ, որոնք վերաբերում են հայ ժողովրդի և հայ մշակույթի, հայ աստվածաբանական մտքի և Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանը, հնագիտությանը, հայոց լեզվին ու գրականությանը, գրաբանությանը, հայագիտության այլ ճյուղերին: Մաշտոցյան ընթերցումներին իրենց ուսումնասիրություններն են ներկայացրել ավելի քան 80 մասնագետներ: Հրապարակված զեկուցումների թիվն անցնում է 200-ից: Հեղինակների մեջ մեծ թիվ են կազմել հայագիտության անվանի երախտավորները, նաև երիտասարդ և խոստումնալից ուժեր, քիչ չեն եղել նաև բարձրաստիճան և երիտասարդ հոգևորականները: Ընթերցումներին իրենց գործուն մասնակցությունն են բերել ՀՀ ԳԱԱ Պատմության, Գրականության, Արվեստի, Արևելագիտության, Լեզվի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի, Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի գիտնականները:

2009 թվականից ի վեր ամեն Թարգմանչաց տոնի օրը ամփոփվում են հայերենից այլ լեզուներ և այլ լեզուներից հայերեն թարգմանված նոր ստեղծագործությունների ամենամյա մրցանակաբաշխության արդյունքները: Դպրատան մեծ սրահում Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայաստանի գրողների միության սահմանած «Կանթեղ» անունը կրող մրցանակը դափնեկիրներին հանդիսավորությամբ հանձնում է Գրողների միության նախագահը: Մրցանակը կոչված է խրախուսելու թարգմանական արվեստի ոլորտում նշանակալի ավանդ ունեցող հայ և օտարազգի գրողներին ու թարգմանիչներին և շնորհվում է ինչպես հայ դասական ու ժամանակակից գրականությունն օտար լեզուներով հանրահռչակելու, այնպես էլ համաշխարհային գրականության լավագույն գործերը հայերեն թարգմանելու համար:

Տարբեր տարիների «Կանթեղ» մրցանակի են արժանացել տասնյակ վաստակաշատ թարգմանիչներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից. Հայաստանյան թարգմանիչներից և գրողներից դափնեկիրներ են դարձել բանաստեղծ, գերմանական գրականության թարգմանիչ Հակոբ Մովսեսը, ֆրանսիական գրականության թարգմանիչ և գրականագետ Ալեքսանդր Թոփչյանը, անգլալեզու պոեզիայի ու արձակի թարգմանիչ, հրատարակիչ Շանթ Մկրտչյանը, անգլո-ամերիկյան գրականության թարգմանիչ, բանաստեղծ Արտեմ Հարությունյանը, անգլիական դասական գրականության թարգմանիչ Սամվել Մկրտչյանը, տարբեր լեզուներից հայերեն թարգմանիչներ Ալվարդ Ջիվանյանը, Վահրամ



Ծաղիկներ Մաշտոցի գերեզմանին



Սրբոց Թարգմանչաց տոնի ուխտագնացությունը Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի

Մարտիրոսյանը, Գուրգեն Բալայանը, Արամ Արսենյանը և այլք: Հայ գրականությունն աշխարհին ներկայացնող օտարազգի և սփյուռքահայ գործիչներից մրցանակակիրներ են դարձել ռուս գրող և դրամատուրգ Կիմ Բակշին, ֆրանսիացի բանաստեղծ և թարգմանիչ Ժան-Բատիստ Պարան, ամերիկացի Ջոն Գուիդան, իտալացի Ալեսիո Պաոլոն, ռուս գրող Միխայիլ Սինելնիկովը, սերբագետ Բաբկեն Սիմոնյանը, որոնք տարբեր լեզուներով հայ գրականության և պատմության տարածողներն են եղել:

«Կանթեղ» մրցանակաբաշխությունը ոչ միայն գնահատում է տվյալ տարում լույս տեսած թարգմանությունների լեզվական ու գեղարվեստական վարպետությունը, այլև ծառայում է որպես մշակութային կամուրջ՝ շեշտելով թարգմանչի դերը որպես երկու մշակույթների միջև երկխոսություն ստեղծող գործչի:

Այս տարվա հոկտեմբերի 10-ին Օշականում՝ Սբ Մեսրոպ Մաշտոց դպրատանը հանդիսավոր պայմաններում ՀՀ գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը «Կանթեղ» մրցանակներ հանձնեց օտար լեզուներից հայերեն կատարած թարգմանական աշխատանքների հեղինակներ Կարլեն Մատինյանին, Արտաշես Էմինին և Վահե Արսենին: Հայերենից այլ լեզուներով կատարած թարգմանությունների համար մրցանակի է արժանացել նաև իրանահայ թարգմանիչ Գարուն Սարգսյանը՝ հայկական պատմավեպերը, նաև հայ պատմիչների գործերը իրանցի ընթերցողին ներկայացնելու համար: Այս տարի Գերմանիայում, «Լյուդվիգ Բուրգս» հրատարակչությունում տպագրվել է «Հայ ժամանակակից պոեզիայի անթոլոգիա»՝ 450 էջանոց գերմաներեն ժողովածուն, որի կազմողն ու հրատարակողն անվանի բանաստեղծուհի և թարգմանչուհի Բետտինա Վյորմանն է: Այս ժողովածուի համար նա նույնպես արժանացել է «Կանթեղ» մրցանակի:

Այս տարվա Թարգմանչաց տոնն առանձնացավ մի կարևոր և խորհրդանշական իրադարձությամբ ևս:

Մինչև հայոց ցեղասպանությունը Թարգմանչաց տոնի կապակցությամբ ամեն տարի Սբ Մեսրոպ Մաշտոցի ծննդավայր Մշո Հացեկաց գյուղից մաշտոցյան տառերի թվով, 36 լավաշ հաց էին ուղարկում Օշական: Ժամանակները, թվում է, վերջնականապես մոռացնել էին տվել այս գեղեցիկ ավանդույթը: Բայց ահա օշականցի մի խումբ երիտասարդներ մոռացության գրկից հանեցին և կրկին կյանքի կոչեցին այն: Նրանք, որ միավորված են «Բունիկ» կոչվող մշակութային կազմակերպության մեջ, անցած ամառ մեկնեցին Հացեկաց և այնտեղից բերած ցորենով Օշականի հացատներից մեկում թխեցին 36 լավաշ: Տոնի օրն այդ սրբազան հացն օրհնվեց Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում: Ապա և առանձնաբար փաթեթավորված ու անհրաժեշտ պիտակավորումով այդ լավաշները մատուցարանի վրա պահած, ազգագրագետ Վանուհի Սիմոնյանը պատմեց, թե ինչպես է պատվիրակությունը, որի կազմում էին եղել նաև բանաստեղծներ, գիտնականներ ու արվեստագետներ, մեկնել Հացեկաց, այնտեղից հող, ջուր և ցորեն բերել Օշական:

Սրբոց Թարգմանչաց տոնին հարյուրավոր ուխտավորներից և հյուրերից 36 երջանիկներ որպես նվեր ստացան Հացեկացի լավաշ հացը:

Ընկերվարութիւնը համայնավարութիւն չէ

Կարէն Խանլարեան
Տեխնիկական գիտությունների դոկտոր, պատմական գիտութիւնների թեկնածու

Մելիտինեցու սոյն վերտառութեամբ հրապարակագրութեան միջոցով կարելի է որոշակի պատկերացում կազմել քսաներորդ դարակէսի ՀՅԴ գաղափարա-քաղաքական մտքի մասին: Այնուամենայնիւ յօդուածը պարունակում է սոցիալիստական մտածելակերպից բխող մի շարք հիմնարար մտքեր եւ սկզբունքներ, որոնք չեն վանդակւում ժամանակի ու տարածութեան պարամետրերում եւ, ըստ էութեան, պահպանելով իրենց տեսաբանական թարմութիւնը, ունեն ուսուցողական նշանակութիւն նաեւ ներկայիս քաղաքական եւ սոցիալական պայմանների լոյսի ներքոյ:

Նախ ո՞վ է Մելիտինցին: Գէորգ Թոփալեանը (գրական ծածկանունով՝ Մելիտինեցի) ծնուել է Արեւմտեան Հայաստանի Մալաթիա, պատմական Մելիտին, քաղաքում՝ 1898 թուականին: Երիտասարդ տարիքում զինուորագրուել է ՀՅ Դաշնակցութեանը եւ իբրեւ հրապարակագիր-լրագրող աշխատակցել է ՀՅԴ Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան շրջանների պաշտօնաթերթեր՝ «Հայրենիք» օրաթերթին ու ամսագրին եւ «Ասպարէզ» շաբաթաթերթին:

Գէորգ Թոփալեան Հայ դատի անխոնջ գործիչը տարիներ շարունակ եղել է ՀՅԴ զանազան մարմինների եւ ժողովների գործուն անդամ եւ բեղուն գործունէութիւն է ծաւալել նաեւ ԱՄՆ «Մալաթիոյ Հարազատ Կրթական Միութեան» մէջ, որպէս սոյն միութեան կենտրոնական վարչութեան բազմամեայ անդամ: Մելիտինեցին վախճանուել է Հայրենի հողից ահագին հեռու՝ Օհայօ նահանգի Քլիվլենդ քաղաքում 1986 թ., Հայաստանի անկախութեան իր այնքան փայփայած գաղափարի իրականացմանը ականատես չդարձած: Գէորգ Թոփալեանը 1965 թ. յիսուն հազար դոլար հիմնադրամով հաստատել է «Գ. Մելիտինեցի» գրական մրցանակը, ապա՝ նոյն անուամբ նաեւ հրատարակչական մի ֆոնդ (նոյնպէս՝ յիսուն հազար դոլար հիմնադրամով), որոնց միջոցներով եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանու ներքոյ յատուկ դատակազմի որոշումով ցայժմ հրատարակուել են ազգային, գրական բնոյթի բազմաթիւ հատորներ, տարբեր հեղինակներից:

Նրա որդին է Մուրադ Թոփալեանը, ով իր հօր գաղափարախօսական փարոսով, նոյնպէս եղել է Հայ Դատի եւ Հայ ազգային ազատագրական շարժման նուիրեալ ակտիւիստ եւ այժմ ընտանեօք մշտական բնակութիւն է հաստատել Հայաստանում:

Ստորեւ որոշ հապաւումներով, ներկայացնում ենք Գէորգ Թոփալեան - Մելիտինեցու նշուած հրապարակագրութիւնը, որը լոյս է տեսել Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի 1949 թ. սեպտեմբերի 13-ի համարում.

«Որեւէ թիւրմացութիւն կանխելու համար, լաւ է որ առաջուընէ ըսուի թէ այս գրութեան նպատակն է ներկայ մեր կեանքին մէջ գոյութիւն ունեցող



փաստական օրինակներով անգամ մը շեշտել այն ճշմարտութիւնը թէ ընկերվարութիւնը համայնավարութիւն չէ: Աւելին, ընկերվարութիւնը ամէնէն կարողական եւ ամէնէն ուժեղ գաղափարական վարդապետութիւնն է, որ անողոք պայքար կը մղէ համայնավարութեան դէմ, զայն նկատելով որպէս նոր տեսակի արիւնոտ բռնապետութիւն մը:

Խորապէս ցաւալի է, որ շատ է թիւը անոնց, որոնք բարեմտօրէն թէ չարամտօրէն, տարբերութիւն չեն տեսներ ընկերվարութեան եւ համայնավարութեան միջեւ, եւ երկուքը միասին կը նկատեն որպէս մէկ տեսակի ապրանք. կամայականօրէն ուզելով ներկել երկուքն ալ մէկ կարասի մէջ:

Դարձեալ, ցաւալի է որ այս սխալ ըմբռնումը հայ կեանքին հետ նաեւ շատ աւելի ցցուն կերպով տարածուած է Ամերիկեան ժողովրդական ըմբռնումին մէջ, ինչ որ տեղի կուտայ գլխաւորապէս երկու վնասակար հետեւանքներու:

Առաջին. համայնավար բռնակալութեան արիւնոտ ու մահաբեր ստուերը կը ձգէ ընկերվարութեան վրայ, խոցելի դարձընելով զայն այս երկրի ժողովրդական զանգուածներուն, մանաւանդ ղեկավար տարրերու աչքին, որոնք, թերեւս այս նոր երկրի կարգ ու սարքերուն բերումով, բնազդական արհամարանք մը, ատելութիւն մը ունին ամէն կարգի իզմերու հանդէպ:

Երկրորդ. ազատ պատեհութիւն կուտայ պաշտօնական Քրեմլինի իշխանութիւններուն, անոնց արտասահմանեան դաւադիր գործակալներուն եւ ուղեկիցներուն, որ խարդախելով, գլխիվայր շրջելով իրականութիւնը, համայնավարութիւնը ներկայացնեն որպէս տառապող մարդկութեան անսահման բարիք խոստացող յառաջադիմական վարդապետութիւն մը:

Դիտեցէք ձեր շուրջը, եւ դուք տասնեակներով պիտի տեսնէք, նոյնիսկ զարգացած ու բարձր կրթութեան տէր մարդիկ, որոնք այս մոլոր դատողութեամբ կը նային համայնավարութեան վրայ, եւ ըստ այնմ ալ կը փորձեն արդարացնել կարմիր բռնակալութեան գործած բոլոր ոճիրները, կամ առնուազն, անոնց մէջ կը գտնեն մեղմացուցիչ դէպք յանցանաց-ի պարագաներ...

Ինչ բանէ առաջ կուգայ համաշխարհային հոսանքներու իրարու միացնելու շփոթութիւնը: Ան առաջ կուգայ մասնաւորապէս անկէ, որ այդ երկու հոսանքներն ալ միեւնոյն նպատակին կը ձգտին: Բայց, միեւնոյն նպատակին ձգտող այդ երկու հոսանքները իրենց տեսաբանութեամբ ու գործելակերպով այնքան հեռու են իրարմէ, որքան հեռու են հիւսիսային ու հարաւային բեւեռները:

Ինչ է համայնավարութիւնը: Խորհրդային Միութեան փաստական օրինակով հաստատուած համայնավարութիւնը այն վարդապետութիւնն է, որ կը ձգտի միջոցներուն մէջ խտրութիւն չդնող արիւնոտ պայքարով իշխանութեան տիրանալ, եւ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ հռչակել ամենազարհուրելի ոճիրներու եւ արեան մէջ խեղդելով մարդկային ամէն տեսակի նուիրական ազատութիւնները, որոնք ձեռք բերուած են անցնող շարան-շարան դարերու հերքիւլեան պայքարով:

Անշուշտ, բարեմիտ մարդիկ պիտի ըսեն, թէ համամարդկային բարօրութիւնը իրեն նպատակ ունեցող հոսանք մը ինչպէս կրնայ ոճիրներ գործել եւ մարդկային ազատութիւնները դաժանօրէն ջնջել: Այդ բարեմիտ հարցումին պատասխանը շատոնց տուած են քրմապետ Լենինն ու «անսխալական եւ ժողովուրդներու հայր արեւ Սթալին»-ը՝ յայտարարելով, որ «Նպատակները կարդարացնէ միջոցները»...

Ինչ է ընկերվարութիւնը: Ընկերվարութիւնը այն վարդապետութիւնն է, որ կը ձգտի անարիւն պայքարի եւ աստիճանական բարեշրջութեան միջոցով արգիլել բոլոր շահագործումները, հաւասարապէս բաժնել ու բաշխել բնութեան բարիքները, եւ բոլորին համար ստեղծել աւելի բախտաւոր ու երջանիկ կեանք մը: Իբրեւ վարդապետութիւն, ընկերվարութիւնը ինքզինքը չի դաւանիր անսխալական, եւ կը ձգտի լաւին՝ գործնական կեանքի փորձառութեան եւ ժամանակի պահանջներուն վրայ:

Մինչ համայնավարութիւնը ինքզինքը կը դաւանի միակ ճշմարիտն ու ուղղափառը, եւ ատոր համար ալ կը մերժէ իրմէ դուրս գտնուած բոլոր ուժերն ու արժէքները...

Ատոր համար է, որ բովանդակ Խորհրդային Միութեան մէջ միմիայն մէկ կուսակցութիւն գոյութիւն ունի: «Նպատակը կ'արդարացնէ միջոցը» սկզբունքին հետեւող համայնավարները մարդ էակին գոյութիւնը կ'ընդունին որպէս միջոց, եւ ատոր համար ալ հարիւր հազարաւորներու կեանքերը կը գործածեն որպէս հում նիւթ արիւնոտ փորձարկութեան համար:

Մինչ ընդհակառակը մարդ էակին գոյութիւնը իբրեւ նպատակ ընդունող ընկերվարութիւն միջոցները կը գործածէ մարդուն բարօրութեան համար:



Գէորգ Թոփալեան - Մելիտինեցի

... Արդեօք ընկերվարութեան եւ համայնավարութեան ամբողջական տարբերութիւնը յատկանշող աւելի աղաղակող փաստ կայ, քան այն, որ Խորհրդային Միութիւնը իր սահմաններուն մէջ ընկերվարականները ֆիզիքապէս բնաջնջելէ յետոյ, կը հալածէ նաեւ այլ երկիրներու գաղափարապաշտ ընկերվարականները, անոնց տեսաբանութեան մէջ տեսնելով իր պարտութիւնը: Եւ դեռ աւելցնենք, որ համայնավարները շատ տեղերու մէջ դաւադիր դիմադարձութեամբ մը նոյնիսկ պահպանողական ու կրօնական կազմակերպութեանց հետ կը գործակցին, ընկերվարները պարտութեան մատնելու համար...

Ներկայ աշխարհի մէջ եւ մեր աչքերուն առջեւ գործնական կիրարկութեան դրուած են համայնավարութեան եւ ընկերվարութեան վարդապետութիւնները:

Համայնավարութեան օրրան Խորհրդային Միութեան մէջ յանուն բոլշեւիզմի ջնջուած են մարդկային ամենատարրական ազատութիւնները...

Եւ ընդհակառակը, ոչ համայնավար երկիրներու մէջ ընկերվարականներն ու աշխատաւորական լայն զանգուածները, անարիւն յեղափոխութեան միջոցով, տիրացած են բարձր ապրելակերպի պահելով թէ իրենց եւ թէ պատկան ժողովուրդներու խօսելու, գրելու եւ քննադատելու անկապտելի ազատութիւնը:

Երբ այսքան անկամրջելիօրէն մեծ է տարբերութիւնը ճշմարիտ ընկերվարութեան եւ համայնավարութեան միջեւ, այն ատեն աշխատաւորական զանգուածներն ու մանաւանդ, ամէն կարգի իմաստակ-բանգէտները պարտաւոր են (ուրիշները չմոլորեցնելու համար) յանուն ճշմարտութեան, աւելի լաւ ճանչնալ այս երկու հոսանքները, որպէսզի նախ վերջ գտնէ տատանող մտքերու խարխափումը, եւ յետոյ, համայնավարութիւնը իր արիւնոտ ստուերը չձգէ ընկերվարութեան վրայ»: ■

Գիտելիք և կարողունակություն PISA (Programme for International Student Assessment)

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ

Կարողունակությունը՝ որպես իրական կյանքում դրսևորվող գիտելիք

Վերջին շրջանում Հայաստանում չեն դադարում քննարկումները PISA միջազգային գնահատման թեստի արդյունքների շուրջ: Հայաստանի աշակերտների գրանցած արդյունքները տարբեր մեկնաբանությունների առիթ են դարձել: Պաշտոնական շրջանակները շեշտում են նախկին չափորոշիչների ազդեցությունն ու ընթացող բարեփոխումների հեռանկարը, մինչդեռ կրթության ոլորտի փորձագետները մատնանշում են նաև դասավանդման մեթոդների, ուսուցիչների պատրաստվածության, կրթական կառավարման և սոցիալ-տնտեսական պայմանների դերը:

Բայց նախ՝ ինչ է այս թեստը և ինչ է այն իրականում գնահատում:

PISA-ն (Programme for International Student Assessment) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) միջազգային գնահատման ծրագիրն է, որն անցկացվում է երեք տարին մեկ՝ 15-ամյա աշակերտների շրջանում: Այն ստուգում է ոչ այնքան դպրոցում ստացած գիտելիքների վերարտադրությունը, որքան դրանք իրական կյանքի իրավիճակներում կիրառելու կարողությունը՝ ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտության ոլորտներում: Այսինքն՝ PISA-ի տրամաբանությունը մոտավորապես սա է.

«Դու գիտե՞ս» հարցից ավելի կարևոր է՝ «դու կարողանո՞ւմ ես քո իմացածը կիրառել»:

Իսկ ինչ է նշանակում կարողունակություն:

Օրինակ, Ֆրանսիայի մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում վաղուց կիրառվում է երեք բաղադրիչից կազմված մոտեցումը՝ *savoir, savoir-faire, savoir-être*:

- Savoir (իմանալ)՝ գիտելիք, տեսական իմացություն:
- Savoir-faire(իմանալ- անել)՝ գործնական կարողություն, գիտելիքի կիրառման հմտություն:
- Savoir-être (իմանալ-լինել)՝ վարքային և անձնային դրսևորումներ:

Հետագայում ֆրանսիացի հետազոտող և մասնագիտական զարգացման փորձագետ Գի Լը Բոտերֆը (Guy Le Boterf) կարողունակության վերաբերյալ իր մոտեցմամբ առանձնացրեց նաև *savoir-agir*-ը՝ իրավիճակում նպատակահարմար գործելու կարողությունը:

Ուսուցիչը չի կարող սովորեցնել այն, ինչն իր վարքով չի հաստատում

Այսօր հարց են բարձրացնում, թե մեր կրթական համակարգը արդյո՞ք երեխային սովորեցնում է ոչ միայն



իմանալ, այլև հասկանալ, կիրառել և գործել: Բայց սա առկա խնդրի միայն մի կողմն է, որը ստվերում է թողնում առավել առանցքային հարց՝ վեր թեստերից, չափորոշիչներից կամ այլևայլ մեթոդներից և բարեփոխումներից: Դա կարողունակության դրսևորման բովանդակությունն է: Կարելի՞ է արդյոք մարդուն համարել կարողունակ, եթե նա գիտելիք ունի, կարողանում է վերլուծել տեղեկատվությունը, տարբերել փաստը կարծիքից, ճիշտ պատասխանել առաջադրված հարցերին, գրանցել փայլուն արդյունքներ այս կամ այն թեստի շրջանակում, թե՞ ոչ: Իհարկե, ո՛չ, քանի որ կարողունակությունը չի սահմանափակվում առաջադրանքի ճիշտ կատարմամբ, այլ, նրանով որ մարդը կարողանա կողմնորոշվել իրական իրավիճակում, դատողություն անի, որոշում կայացնի և պատասխանատվություն ստանձնի իր գործողությունների համար, այսինքն՝ գիտելիքը գործադրի իրական կյանքում:

Սա է առանցքային հարցը՝ կարողունակությունը՝ որպես իրական կյանքում դրսևորվող գիտելիք: Եվ եթե կարողունակ մարդ ձևավորելը կրթության նպատակն է, ապա արժե հարցնել՝ իսկ կրթության գործին առնչվողները որքանո՞վ են իրենք կարողանում դրսևորել այն կարողունակությունները, որոնք սովորեցնում են: Չէ՞ որ կարողունակության դրսևորման առաջին օրինակը պետք է լինի հենց սովորեցնողը, ով իր գի-



տելիքը կարողանում է վերածել գործողության և իր վարքով ցույց է տալիս այն, ինչ ակնկալում է աշակերտից:

Որքան կարողունակության սկզբունքը վերաբերում է աշակերտին, նույնքան պարտադիր պիտի լինի ուսուցչի, նախարարի և ընդհանրապես պետական կառավարման համակարգի համար:

Այսօր բոլորը խոսում են այդ կարողունակությունից, բայց զուտ դպրոցում՝ կրթական միջավայրում՝ մոռանալով, որ կրթությունը առաջին հերթին պիտի պատրաստի բանիմաց ու կարողունակ քաղաքացիներ իրական կյանքի համար: Ուսուցչի դեպքում կարողունակությունը չի սահմանափակվում միայն դպրոցով և ուսուցիչ-աշակերտ շղթայով, և ուսուցչի կարողունակ լինելը չի չափվում միայն նրանով, թե որքան հմտորեն է նա գիտելիքը փոխանցում աշակերտին կամ հանձնում ատեստավորման թեստը: Որովհետև հետո արդեն իր կրթած աշակերտի կարողունակությունը պիտի լինի դպրոցից դուրս ՝ իրական կյանքում, այլ ոչ թե սահմանափակվի դպրոցում այս կամ այն առաջադրանքի շրջանակում գիտելիքի կամ կարողության դրսևորմամբ:

Եթե ուսուցիչը երեխային սովորեցնում է քննադատաբար մտածել, ստուգել տեղեկությունը, տարբերակել փաստը, պաշտպանել տեսակետը կամ հիմնավորված, փաստարկված դիրքորոշում արտահայտել, լինել նախաձեռնող և պատասխանատու քաղաքացի, բայց ինքը սեփական մասնագիտական և քաղաքացիական գիտելիքը այսօր չի կիրառում այն իրական իրավիճակներում, որոնցում այդ գիտելիքը կենսական նշանակություն ունի, առաջանում է շատ լուրջ հակասություն:

Իհարկե կարող են ասել՝ մարդը կարող է շատ բարձր մասնագիտական կարողունակություն ունենալ, բայց հանրային-քաղաքացիական գործունեության մեջ չդրսևորել նախաձեռնողականություն: Սա նաև չի նշանակում, որ ուսուցիչը պարտավոր է ներգրավվել ցանկացած հանրային պայքարի մեջ: Խոսքը շատ ավելի հիմնարար բանի մասին է՝ իր մասնագիտական գիտելիքը կիրառելու, մասնագիտական արժանապատվությունը պաշտպանելու և իր համոզմունքների ու վարքի միջև հակասություն չստեղծելու կարողության:

Կրթությունը պատրաստում է ոչ թե միայն դպրոցական առաջադրանքներ կատարող աշակերտներ, այլև դպրոցից դուրս ապրող, որոշումներ կայացնող և հասարակության ու պետության կյանքին մասնակցող քաղաքացիներ, ուստի սովորեցնողը նախ ինքը պիտի լինի հասարակության ու պետության կյանքին մասնակցող կարողունակ քաղաքացի:

Քանի որ կարողունակությունը գիտելիքը հասարակական միջավայրում կիրառելու և պատասխանատու քաղաքացիական գործողության վերածելու ունակությունն է:

Լավ կլինի, որ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, որն այդքան խոսում է կարողունակությունից, ինքն իր կարողունակությունը չափի իր զբաղեցրած պաշտոնի շրջանակներում: Արդեն 8 տարի և ավելի ղեկավարում են երկիրը, բոլոր ոլորտներում գրանցել են հետընթաց ու քաոս, բայց 0 պատասխանատվություն, և շարունակ մեղավորների փնտրտուք: Կարողունակությունից, առարկայի ու դասագրքերի բովանդակությունից խոսելուց առաջ լավ կլինի նա մտաբերի, որ խայտառակ Այբբենարանը, որտեղ չկա կարողունակության խոսուն օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցի նկարը և հակիրճ տեղեկությունը, իր թողտվությամբ է մտել դպրոց՝ փոխարինվելով QR կոդով, իսկ բջջային հեռախոսն էլ դասի կցորդ է դարձվել, ինչն արգելված է զարգացած և առաջատար երկրների կրթական համակարգերում: Իսկ երբ մեղավորության շղթայում լաբորատորիաների բացակայությունն է առանցքային խնդիր նշում, ապա պետք չէ ֆինանսավորել հոլիվուդյան ցածրորակ երգիչների աստղաբաշխական թվով համերգները կամ էլ այնպիսի ֆիլմեր («Արտոյի



երկիրը», «Մի գդալ սեր»), որոնք, բացի պետության ու ժողովրդի վարկանիշի նսեմացումից կամ բարոյազրկումից, ոչ մի ուրիշ բան չեն արտահայտում, և լաբորատորիաների հարցը վաղուց լուծված կլիներ:

Մեր կրթական համակարգում կան բանիմաց, աշխատասեր, նախաձեռնող ու իրենց գործին նվիրված ուսուցիչներ: Կան նաև մասնագիտական լուրջ բացեր ունեցող մասնագետներ, որոնց ներկայությունը դասավանդման կամ նույնիսկ ղեկավար պաշտոններում ինքնին հարցեր է առաջացնում: Բայց երկուսի դեպքում էլ մեկ բան պարզ է, մի երևույթ, որն էլ հիմքն է այս ամենի՝ հարմարվելու փառահեղ ու համատարած սովորությունը: Ինչ եղավ՝ հարմարվեցին, ո՛չ մի ձայն, ո՛չ մի բողոք, ո՛չ մի պահանջ, ո՛չ մի քայլ, ու հետո էլ խոսում են քննադատական մտածողության, ինքնուրույնության, նախաձեռնողականության, պատասխանատու քաղաքացիության, կարողունակության և այն աշակերտի մեջ ձևավորելուց մասին:

Հարգելինե՛րս, սովորեցնողը չի կարող երեխային լիարժեք սովորեցնել այն կարողունակությունը, որն իր սեփական վարքում չի դրսևորում: Ապացուցեմ խոսուն փաստով՝ կրկին անդրադառնալով նոր Այբբենարանին: Ուսուցիչը գիտի, որ Մեսրոպ Մաշտոցի նկարը ու նրա մասին հակիրճ տեղեկությունը պիտի լինեն Այբբենարանում, և տասնյակ են հիմնավորումները, թե ինչու՝

- Երեխան պետք է հասկանա՝ տառը մարդու ստեղծագործության և աշխատանքի արդյունք է:
- Տառը ստեղծողին ճանաչելը երեխայի համար ստեղծում է հեղինակության հասկացություն, ընկալում: Երեխան հասկանում է, որ իր օգտագործած մշակութային արժեքներն ունեն ստեղծողներ և պատմություն:
- Սա լեզվական ինքնության առաջին դասերից մեկն է: Հայերեն տառերի և դրանց ստեղծողի ճանաչումը երեխայի՝ «իմ լեզուն», «իմ գիրը», իր ինքնության ընկալման ու ձևավորման մաս է:
- Մաշտոցի պատկերն ունի առանձնահատուկ նշանակություն: Դեմքը, անունը և տառերը տեսողականորեն կապվում են և ստեղծում հիշողության ամուր հենարան:
- Երեխայի մոտ պատմական ժամանակի ընկալում է ձևավորվում, նա հասկանում է, որ իր այսօրվա գրելը կապված է դարեր առաջ ապրած մարդու և անցյալի հետ:
- Եվ, ի վերջո, Մաշտոցի կերպարը այդքան շահարկված «կարողունակություն» գաղափարի խոսուն օրինակն է:

Եթե այսօր կրթության ոլորտում ասում ենք՝ երեխային պետք է սովորեցնել ոչ միայն իմանալ, այլև մտածել, ստեղծել, խնդիր լուծել, նախաձեռնել և գործել, ապա Մաշտոցը կարող է ներկայացվել որպես մարդ, ով գիտելիքը վերածեց ստեղծագործական գործողության և լուծեց իր ժամանակի խնդիրը:

Երեխային կարելի է շատ պարզ մակարդակով ցույց տալ. խնդիր կար → Մաշտոցը նկատեց այն → փնտրեց լուծում → ուսումնասիրեց → ստեղծեց → սովորեցրեց ուրիշներին → դպրոցներ բացվեցին → մարդիկ սկսեցին կարդալ և գրել:

Այսինքն՝ առաջին դասարանում նույնիսկ առանց «կարողունակություն» բառը օգտագործելու՝ երեխային կարելի է տալ դրա առաջին մոդելը: Մաշտոցը ոչ միայն գիտեր, նա արեց:

Այսքանը ու դեռ ավելին ուսուցիչը գիտի, բայց այսքանով վերջացավ ուսուցչի դերը մեր երկրում. չկա դիրքորոշում, էլ ուր մնաց գործողություն, արդյունք, պատասխանատվություն, փոխարենը գեղեցիկ սեմինարներ էին վարում նոր Այբբենարանի շուրջ, իսկ ըմբոստացողներն ու ձայն բարձրացնողները քիչ էին, այնինչ պիտի ոչ մի ուսուցիչ չհամակերպվեր տեղի ունեցածի հետ:

Կամ մեր երկրի հետ կապված մի շատ ցայտուն խնդրի մասին՝ պատմության մասնագետները գիտեն, որ «Արևմտյան Ադրբեջան» թեզը Ադրբեջանի կողմից առաջ մղվող ժամանակակից քաղաքական-քարոզչական կեղծ հայեցակարգ է, որը վտանգավոր մարտահրավերներ է ստեղծում մեզ համար, բայց գիտեն, ու վերջ: Սրանով վերջացան կարողունակությունները: Չկա պատմագիտական հանրույթի ո՛չ ձայն, ո՛չ գործուն քայլ:

Բայց փոխարենը հաճախ խոսվում է ուսուցիչների խոցելիության մասին: Այո՛, խոցելիությունը իրական խնդիր է, որը պետք է լուծել ինստիտուցիոնալ պաշտպանության միջոցով: Բայց այստեղ ևս կա հակասություն, որի մասին պետք է խոսել: Եթե գիտելիքը ուժ է, ապա ինչո՞ւ մեր կրթական ու գիտական հանրույթը հաճախ չի կարողանում այդ ուժը վերածել համատեղ, պաշտպանված և արդյունավետ գործողության:

Ուստի երբ ուսուցիչը գիտի, բայց իր այդ գիտելիքը չի կիրառում իրական իրավիճակում և չի գործում դրա փոփոխության համար, կարող ենք ասել, որ տվյալ կարողունակությունը ձևավորված չէ, իսկ ուսուցիչն ինքն է կարողունակ քաղաքացի ձևավորողը, ուստի ինքը առաջին հերթին պիտի լինի կարողունակ քաղաքացու օրինակ:

Իհարկե կարող են առարկել, որ ուսուցիչը վախենում է արտահայտել իր կարծիքը, քանի որ մասնա-

գիտական անհամաձայնությունը կարող է հանգեցնել աշխատանքի կորստի, ուստի լռությունը հաճախ դառնում է ինքնապաշտպանության միջոց: Բայց երկարաժամկետ առումով այդ ինքնապաշտպանությունը կարող է վերածվել համակարգային անզորության, իսկ այդ անզորության գինը վճարում է ոչ միայն ուսուցիչը, այլև աշակերտը, որն այդ միջավայրում պետք է սովորի ինքնուրույն մտածել ու պատասխանատվություն կրել:

Ահա թե ինչու կարողունակության մասին խոսելիս պետք է քննարկել ոչ միայն անհատի գիտելիքներն ու հմտությունները, այլև այն պայմանները, որոնցում նա կարող է դրանք կիրառել:

Ինչ վերաբերում է նախարարի հնչեցրած խայտառակ մտքին, թե ուսուցիչն առարկայական նվազագույն գիտելիք գոնե պիտի ունենա, որպեսզի աշխատի դպրոցում: Առարկայական համապատասխան ու ամբողջական գիտելիքի առկայությունը միայն պիտի լինի դպրոց մուտք գործելու մեկնարկային ելակետը, որին աղերսված արդեն պիտի լինի տարբեր մեթոդների և հմտությունների տիրապետումը:

Եթե մասնագիտական գիտելիքը թերի է, լավագույն մեթոդն անգամ չի կարող ամբողջությամբ լրացնել այդ բացը: Եվ եթե գիտելիքը կա, բայց չկա այն աշակերտին հասկանալի ձևով փոխանցելու կարողությունը, ապա կրթական նպատակը դարձյալ չի իրագործվում:

Ուստի հարցը գիտելիքի ու մեթոդի միջև ընտրություն կատարելը չէ: Հարցը մասնագիտական ամբողջականությունն է:

Ուսուցիչը պետք է և՛ իմանա, և՛ կարողանա սովորեցնել, և՛ հասկանա իր աշխատանքի հանրային նշանակությունը: Նույն չափանիշը, սակայն, պետք է կիրառվի նաև կրթական համակարգի ղեկավարների նկատմամբ:

Եթե ուսուցչից պահանջում ենք առարկայական գիտելիք, մանկավարժական հմտություն, շարունակական զարգացում և պատասխանատվություն, ապա կրթության քաղաքականությունը մշակող ու իրականացնող պաշտոնյաներից ևս պետք է պահանջենք համապատասխան մասնագիտական պատրաստվածություն, որոշումների հիմնավորվածություն և դրանց արդյունքների համար պատասխանատվություն:

Այլապես կարողունակությունը վերածվում է անհավասար չափանիշի. այն պահանջվում է ներքևից, բայց բավարար հետևողականությամբ չի կիրառվում վերևում:

Եթե երեխան պետք է կարողանա իր գիտելիքը կիրառել իրական կյանքում, ապա ուսուցիչը պետք է կարողանա իր մասնագիտական գիտելիքը կիրառել իրական իրավիճակներում, իսկ կրթության պատասխանատուները՝ իրենց գիտելիքն ու կառավարման հմտությունները՝ պետական քաղաքականության մեջ:

Եթե աշակերտից պահանջում ենք ինքնուրույն մտածել, ապա կրթական համակարգը պետք է խրախուսի մասնագիտական ինքնուրույնությունը:



Եթե երեխային սովորեցնում ենք պատասխանատվություն, ապա պատասխանատվությունը պետք է տեսանելի լինի նաև որոշում կայացնողների վարքում:

Եթե կրթությունը հռչակում ենք ռազմավարությունների ռազմավարություն, ապա պետք է ունենանք հստակ սկզբունքներ, դրանցից բխող նպատակներ, իրագործման մեխանիզմներ և արդյունքները գնահատելու չափանիշներ:

Իսկ երբ արդյունքները չեն համապատասխանում հայտարարված նպատակներին, անհրաժեշտ է ոչ թե անվերջ փնտրել մեղավորներ, այլ պարզել պատճառները, վերանայել որոշումները և պատասխանատվություն ստանձնել փոփոխության համար:

Սա է կրթության կառավարման կարողունակությունը:

Կարողունակությունը չի չափվում միայն նրանով, թե մարդն ինչ գիտի, այլ նրանով, թե ինչ է անում այդ գիտելիքով, ինչ արդյունք է ստանում և ինչպես է պատասխան տալիս իր որոշումների հետևանքների համար:

Եթե այս կապը չդառնա կրթական քաղաքականության և մասնագիտական գործունեության իրական չափանիշ, ապա կարողունակության մասին մեր բոլոր խոսակցությունները կարող են մնալ գեղեցիկ թեզերի մակարդակում: Երեխան կսովորի սահմանել կարողունակությունը, թվարկել դրա բաղադրիչները և ճիշտ պատասխանել քննության հարցերին, բայց չի կարողանա կիրառել իրական կյանքում:

Իսկ դա կնշանակի, որ մենք ձևավորել ենք ոչ թե կարողունակություն, այլ դրա մասին գիտելիք:

Եվ ուրեմն՝ նախքան աշակերտից պահանջելը, որ նա իր գիտելիքը վերածի գործողության, արժե նույն հարցը տալ ինքներս մեզ՝ ուսուցիչներին, մասնագետներին, ղեկավարներին և պետական կառավարման պատասխանատուներին.

մենք մեր գիտելիքը վերածո՞ւմ ենք գործողության, գործողությունը՝ արդյունքի, իսկ արդյունքի համար ստանձնո՞ւմ ենք պատասխանատվություն, թե ոչ:

Ինքնութեան եւ իրաւութեան արուեստը...
Լեւոն Թումխիկեանի ծննդեան 95-ամեակի առթիվ

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Չեմ կրնար ըսել որ Լեւոն Թումխիկեանը ուսանողական տարիներու իմ մտերիմ ընկերներէն եղած է, սակայն լրիւ ճշմարտութեան կը համապատասխանէ եթէ ըսեմ, որ ան ինծի համար ոչ միայն համակրելի ու վստահելի ընկեր մըն էր, այլ նաեւ՝ յարգանքի արժանի ու գնահատելի բացառիկ երեւոյթ մը՝ հայրենի թատերական կեանքէն ներս:

Սկզբնական շրջանին իմ կապը իր հետ ընտանեկան բնոյթ ունէր աւելի քան՝ մշակութային: Ան կողակիցն էր Աննա Պետրոսեանի (որուն մասին պարբերաբար անդրադարձած եմ յուշերուս մէջ) եւ հայրը՝ երկու ուշիմ, կիրթ եւ վայելուչ աղջիկներու՝ Արմինէի եւ Նարինէի: Այս վերջինի հետ երբեմն կ'այցելէի զինք «Բաղրամեան» պողոտայի վրայ գտնուող իր բնակարանը, ուր մեր զրոյցները կ'ընթանային աւելի ընկերային եւ ազգային հարցերու շուրջ, քան թատերական կամ առհասարակ արուեստի: Սակայն ժամանակ մը ետք թէ մեր զրոյցներու բնոյթը փոխուեցաւ եւ թէ իր հանդէպ ունեցած իմ համակրանքն ու գնահատանքներս աճեցան իբրեւ դերասան, ու սկսայ աւելի խորանալ թէ իր եւ թէ առհասարակ թատերական արուեստի մէջ... եւ ոչ միայն թատերական արուեստի: Պատճառը՝ «Ռիչարդ Գ.»ի շէյքսպիրեան կերպարի իր իւրօրինակ մեկնաբանութիւնն ու բացառիկ խաղարկութիւնն էր, որ կը թափանցէր մինչեւ իսկ էութեանս կոյս բաւիղներէն ներս... իբրեւ ժամանակի մոխիրներէն յառնած փիւնիկ, առանց սակայն տրամաբանական լուծումներու եւ ճշգրիտ եզրայանգումներու առաջնորդելու զիս: Մինչ այդ ինծի ծանօթ էին Շէյքսպիրի գլուխգործոցներէն հետեւեալները միայն. «Մաքպետ», «Համլեթ», «Օթելլօ» «Ռոմէօ եւ Ժիւլիէթ» եւ «Վենետիկի Վաճառականը»: Կը կարծէի որ իբրեւ գրականագէտ Շէյքսպիր հասկնալու եւ մեկնաբանելու համար այսքանը կը բաւէր: Սակայն ծանօթանալէ ետք թուխիկեանական «Ռիչարդ Գ.» ի համոզիչ կերպարին, ես ոչ միայն ցանկութիւն ունեցայ բազմիցս դիտելու Ռիչարտ Գ. թատերախաղը, այլեւ սկսայ ընթերցել (երբեմն քանի մը անգամ) Շէյքսպիրի միւս թատերախաղերէն շատեր (Լիր Արքայ, Կորիոլանուս, Հիւլիոս Կեսար ...), ու հասկցայ որ ինչքան որ կարողանաս թափանցել անոնց ծալքերէն ներս, այնքան աւելի խորախորհուրդ ու ոգեղէն անդունդներ կը բացուին դիմացդ, ուր խուսանաւելն ու անոնցմէ «ձերբազատուիլը» այնքան ալ դիւրին չէ...: Այո՛ շէյքսպիրեան կերպարներէն շատեր դուրս կու գան ժամանակի եւ տարածական ըմբռնումներէն ու կը թեւածեն յաւիտենականութեան ծիրի վրայ, իբրեւ մշտնջենական գոյ...: Անոնք անցեալէն կու գան, սակայն կը բացուին ներկայի մէջ... իբրեւ մեր ժամանակակիցն ու կեանքի ուղեկիցը: Անկասկած որ այդպիսին է Ռիչարդ Գ.ը, որուն ճիշդ մարմնաւորելն, ինքնին համապատասխան տաղանդ կ'ենթադրէ...:



Ահաւասիկ թէ ինչո՛ւ եւ ինչպէս կարծիքս փոխեցի թէ Շէյքսպիրի եւ թէ Թումխիկեանի մասին, ու սկսայ լուրջ ու մասնագիտական զրոյցներ ունենալ հայրենի կարգ մը մտաւորականներու եւ գրականագէտներու, յատկապէս՝ շէյքսպիրագէտ տիկ. Բիւրակն Չերազի (Անդրեասեան) հետ, որուն ուշադրութենէն չէր վրիպած Դրամատիկական թատերասրահի մէջ բեմադրուած «Ռիչարդ Գ.»ի գլխաւոր դերակատար՝ Լեւոն Թումխիկեանի իմաստալից ու պատճառաբանուած խաղարկութիւնը...: Փրոֆ. Բիւրակն Չերազը շարքային շէյքսպիրագէտ մը չէր...: Նախ՝ թէ հմուտ էր եւ թէ մեծ վաստակ ունէր իր մասնագիտութեան մէջ, եւ ապա ան Հայաստանի առաջին հանրապետութեան ականաւոր հասարակական գործիչներէն՝ Վահան Չերազի դուստրն էր ու կողակիցը՝ Դոկտ-Փրոֆ. Ռաֆայէլ Իշխանեանի, որ իմ դասախօսն ու ամենավստահելի գործընկերներէն մէկն էր... միաժամանակ: Այնպէս որ Տիկ. Բիւրակնի հեղինակաւոր կարծիքը յատուկ նշանակութիւն եւ կշիռ ունէր... եւ ոչ միայն ինծի համար...: Ան էր որ Շէյքսպիրի գրական վաստակի դարպասները բացաւ դիմացս ու առիթով մը ըսաւ.

- Շէյքսպիրը ունի մի քանի թատերախաղեր, որոնք թէեւ համարւում են ողբերգութիւններ, սակայն նրանք ոչ միայն յագեցած են խոր դրամատիզմով, այլեւ

խորքում ինչ որ չափով երգիծական բնոյթ ունեն նաեւ: Դրանց մէջ առանձնանում է «Ռիչարդ Գ.-ը», որ չի զիջում Շէյքսպիրի միւս գլուխ-գործոցներին: Առաջին անգամ մեր մէջ դա նշմարել եւ թարգմանել է Վարդգէս Սուրէնեանցը, որի յառաջաբանը հարկաւոր է որ ընթերցես...:

Ընթերցեցի: Նախ՝ պարզուեցաւ որ Սուրէնեանցը, ոչ միայն մեծատաղանդ գեղանկարիչ է, այլ նաեւ՝ շէյքսպիրագիտութեան մէջ խորացած թարգմանիչ, որ հետեւեալ գնահատականը կու տար. *«Հանճարեղ քերթողի առաջնակարգ գլուխ-գործոցներից է «Ռիչարդ Գ.»ը»*, որուն գլխաւոր հերոսը կը բնութագրէր այսպէս. *«իբրեւ լիրբ, մարդատեաց, փառամոլ եւ շատ առաձգական խղճի տէր... մի փորձառու հրէշ որ շահագործում է գիտակցաբար, լրջօրէն, սառնասրտութեամբ... մէկ բարեպաշտութեան դիմակ է հագնում եւ մէկ դիւային նենգութեամբ ձեռք է առնում իր զոհերը...»:*

Եւ իսկապէս, Ռիչարդ Գ.ի ծայրայեղ իշխանատենչութիւնն ու բացարձակ միապետութեան հասնելու սանձարձակ մոլուցքը, զինք կը մղեն դէպի անողոք ոճիրներու, որոնցմէ մէկը ծածկելու համար առանց վարանելու կը դիմէ աւելի մեծ ոճիրներու, որոնց զոհ կ'երթան նոյնիսկ անմեղ պատանիներ...:

Ռիչարդ Գ-ի կերպարը թէեւ մտածուած ու կազմակերպուած գերագոյն վայրագութեան ցուցանիշ է, սակայն Շէյքսպիրի համար մարդ էակի էութեան մէջ թափանցելու եւ անոր հոգեմտաւոր մութ ծալքերը բանալու եւ դրսեւորելու միջոց է... միաժամանակ:

Երեւանի «Բաղրամեան» պողոտայ, 1980, Սեպտ.:

Թատերականի ուսանողներէն ժան Ֆարրայի եւ դերասանուհի Յասմիկ Տէր-Կարապետեանի հետ, Վարուժան Խտըշեանի վարձու բնակարանը նստած՝ աշխուժօրէն կը զրուցէինք «Ռիչարդ Գ.»-ի կերպարի շուրջ, երբ յանկարծ բոլորովին անսպասելիօրէն ներս մտան Լեւոն Թուխիկեանը, Գուժ Մանուկեանն ու Վովա Մնրեանը: Վերջին երկուքը, որոնք նոյնպէս կարեւոր դերակատարներէն էին Դրամատիկական թատրոնի, յատկանշական դերեր ստանձնած էին նաեւ՝ խնդրոյ առարկայ բեմադրութեան մէջ: Հազիւ տեղաւորուած Վարուժանը օղին լեցուց իսկ Յասմիկը հարց տուաւ.

- Լեւոն ջան՝ մենք հենց հիմա զրուցում էինք Ռիչարդ Գ.-ի բեմադրութեան շուրջ: Դու այնքան լաւ ես մարմնաւորում Ռիչարդ Գ.-ի կերպարը, որ բոլորովին բացասական լինելով հանդերձ, հանդիսատեսը սրտատրոփ սպասում է, որ ան հասնի իր նպատակին եւ մաքրագործելէ երբ իրարու թշնամի «Կարմիր» եւ «Սպիտակ» իշխանական տոհմերը փրկէ երկիրն ու ժողովուրդը: Քո յաջող ելոյթի մասին չենք կասկածում, սակայն մեր մէջ հարց է յառաջանում, ինչպէ՞ս ես կարողանում հասնել նման արդիւնքի, բեմի վրայ դրսեւորում ես այն ինչ որ սկիզբից լիցքաւորել ես



Լ. Թուխիկեանը Ռիչարդ Երրորդի դիմագի դիմաց

վարժանքների միջոցով... թէ՞ նոյն պահին ապրում ես ու ապրեցնում նաեւ՝ հանդիսատեսին...:

Լեւոնը զարմացած նայեցաւ ինծի եւ Վարուժանին, նշանակալից ժպտաց (կարծես թէ նման հարց չէր սպասեր... այդ պահուն) ու ըսաւ.

- Բանն այն է որ թէեւ նախապատրաստական վարժանքները իրենց դերը ունեն, այնուամենայնիւ եթէ չկարողանաս մարմնաւորել քեզանից դուրս գոյութիւն ունեցող, նոյնիսկ քո խառնուածքի հետ կապ չունեցող ինչ որ կերպարի, քո խաղարկութիւնը չի կարող կատարեալ լինել: Դրա համար էլ այդ պահին դու պիտի հաւատաս որ քո էութիւնից դուրս գոյութիւն ունեցող այդ Մարդը դու ես... միաձուլուած քո եսի հետ: Դու ունես նպատակ ու դրան հասնելու համար դու պիտի ընդունակ լինես անելու ամէն ինչ: Այո, այդ պահին դու պիտի լինես մարդասպան ու արդարացնես քո ոճիրները... դրա համար էլ պիտի կարողանաս ուրիշի կեանքով ապրել բեմի վրայ, որպէս զի կարողանաս ապրեցնել նաեւ հանդիսատեսին:

Թէեւ Լեւոնի տուած բացատրութիւնը յստակ էր ու գոհացուցիչ, զոր գլխու շարժումով կը հաստատէին նաեւ՝ Գուժն ու Վովան, սակայն որովհետեւ Վարուժանը լուռ էր, ես հարց տուի.

- Իսկ դուն՝ Վարուժ, դուն ինչպէս կը վարուիս նման պարագաներու...

- Ես կողմնակի միջոցներու մասին չեմ մտածէր, պարզապէս կը մտերմանամ կերպարի հետ, երբ բեմ



Լ. Թոխիկեանը իբրև Ռիչարդ Երրորդ



Լ. Թոխիկեանը իբրև Մազութի Համօ

կը բարձրանամ ես այլեւս ես չեմ...(ըլլայ ատիկա ժիւրական թէ դրական) եւ կ'ապրիմ ու կը խաղամ այնպէս ինչպէս կերպարը ինք կը թելադրէ...:

- Ի վերջոյ բնազդը եւս իր խօսքն է ասում եւ իւրաքանչիւր յաջող դերասան իր «Ես»ն է դնում մի այլ «Ես»ի մէջ թէկուզ ենթագիտակցաբար, կերպարանափոխւում համաձայն նոր «Ես»ի գոյակցութեանը: Դրա համար էլ իւրաքանչիւր իսկական դերասան տարբեր ձեւով է մարմնաւորում ու մեկնաբանում նոյն կերպարը...

Ժանոն որ թատրոնի միջոցով ծանօթացած էր «Երկիր Նայիրի» վէպի բովանդակութեանն ու բնոյթին, անմիջապէս աւելցուց.

- Հաւանաբար ի նկատի ունէք նաեւ՝ «Մազութի Համոյի» կերպարը:

- Անկասկած, Մազութի Համոն համարւում է երգիծական կերպար: Երուանդը (Ղազանչեան) այն բեմադրում էր իբրեւ այդպիսին, Չարենցի «Երկիր Նայիրի» վէպի հիման վրայ, որը համարւում է երգիծավէպ: Աւելի ճիշդը «փրագիկոմեդիա» է, առնուազն հենց այդպէս է ընդունուած: Թէեւ երգիծել է, սակայն խորքում Չարենցը խոր ցաւով ու փագնապով է գրել այս վէպը: Կեղծ ու շարլաթան ղեկավարի կողքին նա ինչ որ տեղ եւ ինչ որ չափով բացայայտել է նաեւ՝ իսկական հայրենասէրի կերպարը եւս: Դրա համար էլ «Մազութի Համոյի» ձառը ես արտասանում եմ ամենայն լրջութեամբ... իբրեւ ուղերձ Հայ ժողովուրդին...

Այս անգամ ես միջամտեցի.

- Ես յիշում եմ որ երբ առաջ էիր գալիս ու խօսքը ուղղում ոչ թէ բեմում հաւաքուած դերասան «Կարսեցիներին», այլ ուղղակի ժամանակակից Երեւանցիներին, չգիտեմ ինչո՞ւ ես յիշում էի Արամ Մանուկեանին, գուցէ դրա համար էլ հանդիսատեսը ծափողջոյնների ողջունում էր քեզ՝ աւելի ճիշդը քո մարմնաւորած Մազութի Համոյին:

- Այո, որովհետեւ ես խաղում էի «Հայոց Արքայ» եւ ոչ թէ կեղծաւոր, ապիկար ու պատեհապաշտ հայրենասէրի կերպար:

- Արքա՞յ..

- Այո՛, ինչո՞ւ ես զարմանում:

- Այդ ինչպէ՞ս...

- Բացատրեմ...

- Չարենցը երգիծելով հանդերձ ապիկար ու ձախողած ազգային գործիչներին անուղղակիօրէն վեր է հանում հայրենասէրի կերպարը...: Մազութի Համոն միշտ չէ որ ժիւրական կերպար է, այնպէս ինչպէս ներկայացնում են նրան մերոնք: Իր ճառը կարելի է արտասանել երկու ձեւով՝ հեգնական եւ կամ ամենայն լրջութեամբ:

- Ինչպէս...

Լեւոնը ինքն իր մասին դժուար կ'արտայայտուէր: Ծայր աստիճան համեստ էր ու քչախօս: Սակայն երբ խօսք բացուէր դերասանական արուեստի շուրջ, ան կը դառնար խստապահանջ ու անողոք... նոյնի՛սկ ինքն իր հանդէպ, առանց սակայն զիջելու իր համոզումնե-



Նստած՝ Լեւոն Թոսիկեանը Միեր Մկրտչեանի, Աւետ Աւետիսեանի և կինօռեժիսոր Ֆրունզե Դովլաթեանի հետ

րէն...: Ան խոր շունչ քաշեց... եւ հայեացքը պտտցնելէ ետք մեր վրայ, շարունակեց.

*- Չարենցը ասում է. «*Մազութի Համոյ»ի աչքերում. «Արցունք կար եւ արցունքի միջից, սպասումի ժպիտ, *իսկ այդ աչքերը սեւեռած էին դէպի այն գնացքը՝* որ գնում էր Մազութի Համոյի երազած Միացեալ ու Անկախ Ծովից Ծով Նայիրին*»: Սա կարելի է արտասանել այնպիսի ծաղրանքով, որ ինդուք կը յառաջացնի հանդիսատեսի մօտ եւ կամ էլ այնպիսի լրջութեամբ, որ կը յուզի եւ արցունք կը քամի հանդիսատեսի աչքերից...:*

Մենք հարցականօրէն իրարու երես նայեցանք եւ լռութիւն...:

Իմ իրատես ընթերցող՝ հաստատելու համար Թոսիկեանի համոզումը, հարկաւոր է հոս փակագիծ մը բանալ...: (Ամիսներ առաջ Հայրենիքի մէջ լոյս տեսաւ յայտնի գրականագէտ Դաւիթ Գասպարեանի մենագրութիւնը՝ «*Եղիշէ Չարենցի Գրական Քաղաքական Աղերսները*», որուն գրախօսականին կը հանդիպինք «*Դրօշակի*» 2026-ի 7-րդ համարին մէջ: Գրախօսը՝ Նարինէ Յովհաննիսեանը (բանասիրական գիտութիւններու թեկնածու), այս հատորը ընթերցելէ ետք հետեւեալ եզրակացութեան կու գայ. *«Չարենցի միակ կուսակցութիւնը Հայրենիքն էր, Ազատ Անկախ Միացեալ Հայաստանը, որի գաղափարական ուխտաւորն էր, անձնուրաց զինուորն ու նահատակը»:* Իսկ նոյն ինքն հմուտ չարենցագէտ՝ Դաւիթ Գասպարեանը «Երկիր Նայիրիի» մասին հետեւեալ հաստատումը կ'ընէ. «*Վէպը Ռուս-թրքական դաշինքին զոհաբերուած եւ ասպիճանական ոչնչացման դատապարտուած Հայաստանի ողբերգութիւնն է»):*

Առանց մեկնաբանելու այս մէջբերումները վերադառնանք Վարուժանի բնակարանը, ուր պահը պրկուած մնաց... երկար: Վարուժը աչքի տակով հայեացքը այնպիսի բովանդակալից շարժումով մը սեւեռեց Լեւոնի վրայ... որ ըսել կ'ուզէր թէ «Ինքն է»...: Միայն Լեւոնի նման արդարամիտ եւ օժտուած դերասան մը, պիտի կարենար նման յանդուգն կեցուածք ճշդել եւ իրագործել այն...: Պահը փրկելու համար Ժանոն միջամտեց.

- Իսկ ո՞ւր մնաց Արքան...

*- Ասեմ: Վերջում երբ Մազութի Համոյին կախում են դաւաճանի նման, գլխավերեւում դնում են մի ցուցանակ իբրեւ ծաղրանք, որի վրայ գրում են Մ.Հ.Ա.Ն. սկզբնատառերը, որ նշանակում էր «*Մազութի Համոյ Արքայ Նայիրի»ի, *ճիշդ այնպէս ինչպէս հրեաները վարուեցին Քրիստոսին հետ...: Ես սա ընդունել եմ լրջութեամբ, իբրեւ ճշմարտութիւն, որովհետեւ այդ դաժան տարիներին ազգը փլուզւում էր, երկիրը ոտքի տակ էր գնում, պատերազմներ հրապարակ իջել եւ ծախու էին հանել Ազգն ու Հայրենիքը: Մազութի Համոն միակը չէր որ անարդարօրէն մեղադրւում էր եւ «կախաղան» հանւում: Նման ճակատագրական ժամանակաշրջաններին մենք պէտքը զգացել ենք կացութիւնը իր բոի մէջ առած հզօր ու յանդուգն Արքայի: Չնայած մերթ Մազութի Համոյին ներկայացնում*

էի իբրեւ իր դիրքն ու վարկը չարաշահող առաջնորդ, սակայն յատկապէս իր յայտնի ճառը արտասանելիս, ես նրան ներկայացրել եմ իբրեւ փառքի արժանի արքայավայել հերոսի, եւ մարմնաւորել այնպիսի անձնազոհ ու հզօր մի Արքայի, որը Քրիստոսի նման պարտրաւոր էր խաչուելու յանուն ազգի ու հայրենիքի փրկութեան:

Վարուժը օղիի բաժակները նորոգեց, բարձրացուց ու ցած ձայնով, սակայն բառերը յստակօրէն արտասանելով ըսաւ.

- Ափոր համար ալ... խաչեցին...

Որո՞ւն...Չարենցի՞ն, Մազութի Համոյի՞ն թէ Թուխիկեանի՞ն: Վարուժի ակնարկութիւնը հաւանաբար կ'երթար նաեւ Լեւոնին, որովհետեւ ան ոչ միայն մաս կազմած էր Պարոյր Սեւակի խումբին (Լ. Ներսիսեան, Ս. Սողոմոնեան, Վ. Առաքելեան ...), ու 1965-ին հեռացուած էր Սունդուկեանի անուան թատրոնէն, այլեւ շուրջ 2 տասնեակ «Արքաներու» կերպարներ մարմնաւորած էր ու հալածուած... յաճախ՝ անուղղակիօրէն: Ժանոն ըսաւ.

- Բայց ի վերջոյ Չարենցը ինքն էլ երգիծավէպ (թէկուզ «փրագիգումենտիա») է համարել «Երկիր Նայիրի» վէպը:

- Այդ օրերին նա ուրիշ բան չէր կարող անել: Սակայն նա ասել է նաեւ որ «Երկիր Նայիր»ի վէպը «Այլաբերպ» է: Սրանով նա վէպի բանալին է տուել մեզ:

- Բայց բոլորը ասում են որ Չարենցը «Երկիր Նայիրի» վէպում ծաղրել ու ծանակել է, Դաշնակցութեան ապիկար ու անհեռատես ղեկավարներին: Նոյնի՛սկ Չարենցագէտ Հրանդ Թամրազեանը այդպէս էր դասաւանդում մեզ...

- Իսկ Կամաւորական շարժմանը մասնակից Եղիշէ Չարենցը չէր կարող ծանակել այդ անձնուրաց կամաւորներին: «Նա ծաղրում էր ոչ թէ այդ շարժումը, այլ դրա հանդէպ հայրենասիրական ոգուց զուրկ նայիրցիների քաղքենիական թշուառ վերաբերմունքը»: Ներկայացումը տեսնելուց յետոյ, 1977-ին հենց այդպէս էլ գրել է Լեւոն Հախվերդեանը:

Յասմիկը անգամ մը եւս միջամտեց ու ըսաւ.

- Ես արդէն հասկանում եմ թէ դու ինչո՛ւ «Արքայավայել» ճառ ես արտասանել: Բայց դու բազմաթիւ թագաւորների կերպարներ ես խաղացել...

- Այո, բայց միշտ ես «Արքայ» եմ մարմնաւորել...

Վարուժը որ մինչ այդ լսողի դերի մէջ էր, քիչ մը զարմացած ըսաւ.

- Բայց տարբերութիւնը ինչ է «Եավրում», նոյնը չէ՞...

- Մեր թագաւորները մեծամասամբ եղել են թոյլ, անհեռատես ու օտարամոլ...: Ես խաղում եմ Հայոց Արքայ՝ հզօր, ինքնավստահ ու իմաստուն Առաջնորդի...: *Մենք թագաւորներ շատ ենք ունեցել, սակայն Արքաներ՝ չափազանց քիչ:*

Որովհետեւ «Ռիչարդ Գ.»ն ու «Երկիր Նայիրի»ն, մարդկօրէն ու ցեղայնօրէն ինքնահաստատման ու ինքնամաքրման միջոց են նաեւ հեղինակներուն համար.... ըլլայ *Ռիչարդ Գ.-ի թէ Մազութի Համոյի* պարագային, դերասանի առջեւ դրուած խնդիրը չափազանց բարդ է ու կնճռոտ: Զանոնք մարմնաւորելը բացառիկ տաղանդ եւ մասնագիտական խոր հմտութիւն կ'ենթադրէ: Հակառակ անոր որ հանդիսատեսները ոչ սիրելու եւ ոչ ալ նոյնի՛սկ համակրելու պատճառներ ունին *ժխտական*, յատկապէս ապաբարոյ կերպարներու, խաղարկութեան ընթացքին հետզհետէ կը սկսէին համակրիլ անոնց: Եւ որովհետեւ Թուխիկեանի մարմնաւորած արքաները, թէեւ կ'արտայայտուին ու կը գործեն «*Նպատակը կ'արդարացնէ միջոցը*» ընդհանուր բնաբանի տակ, ու բեմի վրայ կ'ապրին մարդկօրէն դատապարտուած փառամոլ ու ընչաքաղց մարդու յոռի արատներով, սակայն անոնց մահը կը վերածուի հերոսական ողբերգականութեան...:

Ահաւասիկ հո՛ւ է որ ի յայտ կու գայ Թուխիկեանի կեանքի բնազդային ընկալման խորութիւնն ու տաղանդի դրսեւորման ուժգնութիւնը ...:

Մովսէս Ծիրանի (Մոնթրէալ, 2026, Յուլիս)

Ծանօթ.

Իմ համակրելի ընթերցող՝

Նախ ըսեմ որ, աւարտելէ ետք երբ անգամ մը եւս ընթերցեցի այս յուշագրութիւնը, անդրադարձայ որ գրած եմ անոնց համար, որոնք արդէն իսկ ծանօթ են «Ռիչարդ Գ.»ի եւ «Մազութի Համոյ»ի կերպարներուն: Այնպէս որ թող ներողամիտ ըլլան այն բոլորը, որոնք առաջին անգամն է որ կը ծանօթանան յիշեալ կերպարներուն: Եւ եթէ ոմանք ցանկութիւն ունին կեանքը պեղելու եւ լաւ ճանչնալու, լաւ կ'ըլլայ որ ընթերցեն վերոյիշեալ երկու գիրքերը...:

Յետոյ՝ ձեզմէ ոմանք հաւանաբար նորէն թերահաւատութեամբ պիտի մտածեն, որ կարգ մը միտքեր կը յօրինեմ, որովհետեւ կարելի չէ որ մէկը այդ մանրամասնութեամբ յիշէ ամէն ինչ: Խոստովանիմ որ երկխօսութիւններու շարադասութիւնը կրնայ ճշգրիտ վերարտադրուած չըլլայ, սակայն արտայատուած միտքերն ու գաղափարները ճշմարտութեան կը համապատասխանէն, որոնց համար պատասխանատու եմ...: Նկատի առէք որ ոչ միայն ամէն գնով կ'աշխատիմ հաւատարիմ մնալ արտայայտուած միտքերուն ու գաղափարներուն ճշմարտացիութեան, այլ ի հարկին նաեւ հրատարակուելէ առաջ յուշագրութիւններս ընթերցել կու տամ խնդրոյ առարկայ անձնաւորութիւններուն (եթէ ողջ են) եւ կամ անոնց պարագաներուն... Իսկ եթէ հակառակ իմ կամքին՝ թուականներու, անուններու եւ կամ այլ վրիպումներ ըլլան, ատոր համար ալ ի սկզբանէ ձեր ներողամտութիւնը կը հայցեմ...:

Այս յուշագրութիւնը մամուլին յանձնելէ առաջ ընթերցած եւ գրածիս ճշմարտացիութիւնը հաստատած են Լեւոն Թուխիկեանի դուստրը՝ Նարինէն, դերասանուհի Յասմիկ Տէր-Կարապետեանն ու դերասան- բեմադրիչ՝ Ժան Ֆարրան: ■

Եկողներն ու չեկողները

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Վերջերս, ժողովի մը առթիւ, ի տես ներկանեռուն փոքր թիւին, «օր մըն ալ այս մասին գրէ՛» ըսին ինծի կամ թերեւս ալ հրահանգելու պէս պահանջեցին ոմանք:

Արդարեւ մտածուելիք նիւթ մըն է, չէ՞, ի վերջոյ, ժողովներու ներկայութեան կամ բացակայութեան հարցը: Բայց ոչ միայն այդ: Ինչո՞ւ ոչ նաեւ ժողովներու անհրաժեշտութեան հարցը՝ հաղորդակցութեան ներկայ դիւրութիւններու այս ժամանակներուն:

Ըսողներ կան, թէ երիտասարդները ժողով ընել չեն սիրեր: Ըսողներ կան, թէ վարչութիւններու եւ յանձնախումբերու անդամները իրարու հետ մնայուն կապի մէջ ըլլալով, շատ հարցեր կրնան լուծել ժողովէ դուրս, եւ արագ լուծել՝ առանց երկար-բարակ վիճելու ու ժամավաճառ ըլլալու:

Նաեւ, իմաստ ունի՞ ժողով գումարել՝ ժողով ընելու սիրոյն, կամ պարզապէս կանոնագիր մը յարգելու համար: Կանոնագիրը գործելակերպի ընթացքին համաձայն կը մշակուի եւ ոչ՝ հակառակը:

Այս հարցերու քննարկումը չէ, որ կ’ուզեմ այստեղ ընել: Ատիկա կրնայ կատարուիլ կազմակերպութեան մը պատկան մարմիններու եւ ժողովներու (դարձեալ ժողովներո՛ւ) ճամբով, կամ այլ միջոցներով: Փորձառու անդամներ ու մանաւանդ վարչականներ միասնաբար կրնան լաւապէս քննել անոնց բոլոր երեսներն ու յանգիլ տրամաբանական եզրակացութիւններու:

Նպատակս այսօր խօսիլ է ժողովի եկողներու եւ չեկողներու մասին: Ո՞վ են եկողները, ո՛վ՝ չեկողները: Ինչո՞ւ կու գան, ինչո՞ւ չեն գար: Ի՞նչ պատճառներ, պատրուակներ, առարկութիւններ կամ արդարացումներ կը տրուին:





Կը սկսիմ ժողովի չեկողներէն: Ո՞վ են անոնք: Պիտի փորձեմ զանոնք թուել՝ առանց որեւէ կարեւորութեան կամ առաջնահերթութեան կարգի: Որովհետեւ իւրաքանչիւր ընկերոջ կամ անդամի պարագային այդ կարգը կրնայ փոխուիլ:

Առնենք տարիքի հարցը: Յառաջացած տարիքը կարեւոր ազդակ մըն է, որ կը մղէ մեզմէ ոմանց մութը կոխելէն ետք տունէն դուրս չելլել, ինքնաշարժ չքշել : Տեսողութեան հարց կայ, անակնկալ իրավիճակներու արագ հակազդելու հարց եւ այլն:

Ապա առողջութեան հարց ալ կայ, որ միշտ չէ, որ տարիքի առնչուած է: Ի հարկէ շատ ընդարձակ դաշտ մըն է այս, բայց յատկապէս նշեմ սահող-ինկողներու եւ մէկ տեղը, մանաւանդ կոնքը կոտրողներու պարագան: Կարելի՞ է մեղադրել երբ ասանկները կը բացակային ժողովներէ:

Գործի խնդիրը: Ամբողջ օրը աշխատած, նստակեաց թէ ոտքի, մանաւանդ անձնական գործ ունեցող ու յաճախ երկար ժամեր աշխատելու ստիպուած մարդիկ ինչպէ՞ս ժողովի գան: Նաեւ անոնք, որոնց օրուան գործը բաւարար հասոյթ չ’ապահովեր իրենց եւ երեկոյեան ալ տարբեր աշխատանքով կը ջանան ծայրը-ծայրին բերել: Տունդարձին, անոնց աչքը անկողնին ուղղուած պիտի ըլլայ...

Հապա ուսո՞ւմը, յատկապէս բարձրագոյն, մասնագիտական ուսման հետեւող ուսանողներու պարագային: Եւ դեռ անոնք, որ ուսման առընթեր պիտի աշխատին ալ, իրենց ուսման, նոյնիսկ ընտանիքին ծախսերը հոգալու համար:



ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը. Երևան 1919 թ.

Չմոռնանք նաեւ փոքրահասակ զաւակ ունեցողները, յատկապէս մայրերը, որոնք հաւանաբար թէ՛ դուրսը պիտի աշխատին՝ ընտանիքի եկամուտը ապահովելուն մասնակից ըլլալով, թէ՛ տունը՝ ճաշը պիտի պատրաստեն, տղոց դասերուն պիտի հետեւին: Տակաւին ժողովի՞ ալ գան:

Չեմ խօսիր ժողովներու օրակարգերուն երբեմն երկար, երբեմն ձանձրացուցիչ ըլլալուն մասին, ժողովները միշտ մէկուն կամ միւսին անյարմար օրերու կամ ժամերու գումարուելուն մասին եւ նման առարկայական հարցերու, որոնք, ըստ իս, դիւրաւ կը սրբագրուին իմաստուն վարչութիւններու եւ յանձնախումբերու միջոցաւ, մինչ վերեւը նշուած ենթակայական հարցերուն անոնք յաճախ լուծում չեն կրնար հայթայթել:

Այժմ խօսինք ժողովի եկողներուն մասին: Անո՞նք ո՛վ են, ինչո՞ւ կու գան: Առնենք այն կարգով, որ չեկողներուն մասին գրուեցաւ:

Նախ՝ տարիքի հարցը: Չէ՞ք նկատեր, որ աւելի շատ տարեցներն են ժողովի եկողները: Ինչպէ՞ս կ'ընեն: Ոմանք կը գտնեն բարեացակամ դրացի մը, ծանօթ մը կամ զաւակ մը, որ նոյն ժողովին պիտի երթայ, կ'ընկերանան անոր, նոյնիսկ եթէ ան ժողովին երթալիք չէ, կը խնդրեն, որ զիրենք տանի ակումբ, վստահ, որ վերադարձնող մըն ալ պիտի գտնեն: Աչքերնին կ'առնեն երբեմն ալ, հակառակ բոլոր դժուարութիւններուն, յամենայն դէպս իրենց ինքնաշարժով գալ:

Առողջութեա՞ն հարցը: Ցաւազերծիչ մը կ'առնեն եւ կու գան: Գաւազանով, քայլակով, մինչեւ անգամ անկելաթոռով կու գան:

Աշխատանքէ վերադարձողները սանտուիչ մը կը նետեն իրենց բերանը եւ աշխատանքի զգեստներով անգամ կը վազեն ժողովի: Քունէն ալ կը կտրեն ի հարկին: Բայց կու գան:

Ուսանողները պատիւի հարց կ'ընեն ժողովէն չբացակայիլը: Գիշերը ցերեկին կը խառնեն ու կու գան:

Զաւակ ունեցողներն ալ իրենց ծնողքը, ընկերը կամ ընկերուհին կամ մանկապահ մը կը ճարեն ու կու գան:

Եւ դեռ կան անոնք, ժողովախտէ տառապողնե՛ր պիտի կոչէք, որոնք նոյն օրը մէկ ժողովէն կ'ելլեն միւսը կը մտնեն:


Գալով ժողովներու բովանդակութեան, կը սորվին հանդուրժել, կ'աշխատին մասնակից ըլլալ՝ բարելաւելու համար, բայց գիտակցելով իրենց ներկայութեան կարեւորութեան՝ կու գա՛ն, տակաւին կու գան, անպայման կու գան:

Աւելցնեմ, որ միայն ժողովներու հարց չէ այս բացակայութեան հիւանդութիւնը: Նաեւ կայ բացակայութիւնը այլազան ձեռնարկներու, հաւաքներու եւ մասամբ նորին: Եւ հանգանակութիւններէ խուսափիլը կայ:

Թէ ինչո՞ւ ոմանք, մեծ թիւերով, այդպէս՝ չեն գար, ուրիշներ ալ, նուազ մեծ թիւերով, այսպէս՝ կու գա՛ն, կը ձգեմ որ դուք եզրակացնէք, սիրելի ընթերցողներ:

ԴՐՕՇԱԿ ԻԳ ՏԱՐԻ, ԹԻՒ 12-13, 7-21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1992
ԷԴԻԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՀԱՏԸ



Մարդիկ սովորաբար իրենց դժբախտութիւնները վերագրում են իրենցից անկախ գործող ուժերին, թշնամիներին, չարամիտներին, բնական աղէտներին, բայց ոչ սեփական սխալներին: Այդպէս հեշտ է ապրել: Չիմանալ, չտեսնել, չլսել, չմտածել, ապրել միայն այսօրւայ ուրախութիւններով՝ սա է ընտրում սովորական մարդը և չի ցանկանում լսել ու հետևել այն հեռատեսներին, որոնք նախազգուշացնում են հնարաւոր վտանգների մասին: Երբ, սակայն, վտանգը իրականութիւն է դառնում, մենք սկսում ենք մտածել, թէ ինչու ժամանակին չլսեցինք հեռատեսներին, չէ՞ որ նրանք մեզ նախազգուշացնում էին: Բայց այստեղ հարց է ծագում. ինչ է, այդ հեռատեսները մեզանից աւելի խելացի՞ էին, մեզանից աւելի՞ հեռուն էին տեսնում, մեզանից աւելի իմաստո՞ւն էին: Պատկերացրէք, որ ոչ: Ապագայի մասին նրանց տեղեկութիւնները ոչնչով չէին տարբերւում մեր տեղեկութիւններից: Չէ՞ որ նոյն աղբիւրներից էինք օգտւում և նրանք կեանքի ուրախութիւնների նկատմամբ մեզ նման անտարբեր չէին:

Բայց մեր տարբերութիւնն այն էր, որ մենք տարբեր վերաբերմունք ունէինք մեր գիտցածի նկատմամբ: Նրանց համար, վերացական վտանգները, որոնք այսօր բացակայում են, բայց հնարաւոր են ապագայում, նոյնքան իրական են, որքան որ այսօրւայ իրական հաճոյքները: Ուստի նրանք կարողանում էին պայքարել դեռևս գոյութիւն չունեցող, բայց հնարաւոր վտանգների դէմ, հրաժարւելով առնւազն մասամբ այսօրւայ հաճոյքներից: Իսկ շատերի համար վերացական վտանգները ոչ մէկ նշանակութիւն չունեն և մենք պատրաստ չենք զոհաբերելու այսօրւայ հաճոյքը վաղւայ վտանգին: Եւ եթէ մենք մեզ անւանենք կարճատես, իսկ նրանց հեռատես, ապա դա չի նշանակում, որ նրանք տեսնում էին, իսկ մենք ոչ: Դա միայն նշանակում է, որ կարճատեսը իր տեսածի վրայ ուշադրութիւն չէր դարձնում, իսկ հեռատեսը արդէն այսօր տառապում էր վաղւայ վտանգից ու արդէն այսօր պատրաստւում էր նրան դիմաւորելու:

Առանց այս ճշմարտութիւնների՝ հասարակարգը ստում է ամենուր ու սուզւում է խաբեբայութեան ու կեղծիքի ճահիճի մէջ, ինչպէս ստում էր Խորհրդային միութիւնը, այդ թւում նաև Հայաստանը 70 տարիների ընթացքում:

Այժմ, երբ տապալւած է Խորհրդային միութիւնը և կոմունիստական գաղափարախուսութիւնը, մենք ոչ միայն չկարողացանք դուրս գալ այս կեղծիքի ճահճից, այլ աւելի խորն սուզւեցինք նրա մէջ: Բայց եթէ մօտակայ տարիների ընթացքում չկարողանանք միասնական ճիգերով դուրս գալ այդ ճահճից, սուտը, կեղծիքը և դաժանութիւնը կը դառնան մեր նկարագրի անբաժանելի յատկութիւնները, որից յետոյ համայնքի ու անհատի փոխյարաբերութիւնը կը վերածւի փոխադարձ խաբեբայութեան: Այդ դէպքում մեր հարևանները շատ արագ կը նւաճեն համազգային խաբեբայութիւնից վերջնականապէս թուլացած հայ ժողովրդին: Միայն բարձր ազգային պատասխանատուութեան զգացումը, հեռատեսութիւնը, ընկերվարական սկզբունքների կիրառումը կառողջացնեն անհատի և համայնքի փոխյարաբերութիւնը, որը և կը փրկի մեր հայրենիքը կործանումից:

ԷԴԻԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,
ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ
ՅՕԴՒԱԾՆԵՐԻ (1984 – 94 թթ.) էջ 41-42



Հոկտեմբեր ամսին ծնվել են ՀՅ Դաշնակցության հիմնադիր երրորդության երկու մեծերը՝ Քրիստափոր Միքայելյանը և Սիմոն Զավարյանը

ԴՐՕՇԱԿ